

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԵՎ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՀԱՐՅԵՐ





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИИ  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

# ВОПРОСЫ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Доклады сессии посвященной памяти  
Геворга Тирацяна

Ереван - 2001

ՃՆՅԵՏ

ՆՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԸՆԹԵՐՑԱՄԱՐԸ

# ՆԻՆ ՆԱՅԱՍԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԲՅԵՐ

ԳԼՈՐԳ Տիրացյանի հիշարակին նվիրված գիտաժողովի  
զեկուցումներ

A 86568



Նրապարակվում է ՆՆ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիրական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝

Արամ Բայանթադյան  
Սարգիս Նարությունյան

ՆԻՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՆԱՐՅԵՐ / Խմբ. Ա.Բալանթադյան, Ս.Նարությունյան, Եր.,  
2001, էջ 84/

Անվանի հնագետ **Գ.Տիրացյանի** հիշարակին նվիրված ժողովածուի մեջ ընդգրկված են փարբեր հեղինակների հողված-գեկուցումները՝ նվիրված Նին Նայաստանի պարմության և նյութական մշակույթի խնդիրներին: Նախապեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

© ՆՆ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԽԱԼ ԴԻ ԱՍՏԾՈ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՄԲ ԱՐԱՄԵՆԻՆԸ  
ՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

1985թ.–Ուերմիա լճի ավազանի Հարավ–արևելքում, Բուկանի մոտ գտնվող Քալաշի թեփեռում Իսմայիլ Յաղմայի ղեկավարած Հնագիտական պեղումների ժամանակ գտնվել է մի քարակոթող (0.8x1.5մ), արամեերեն արձանագրությունը: Երկրորդ մասը գնվել է Հնությունների շուկայից 1990 թվին: Արձանագրությունը թերի է, պահպանվել է 13 տող միայն անեծքի բանաձևով: Չեն պահպանվել առաջին տողի վերջին մասը, ինչպես նաև որոշ գրեր: Ըստ արձանագրության Հրատարակիչների՝ Անդրե Լըմերի<sup>1</sup> և Միխայիլ Սոկոլովի,<sup>2</sup> պահպանված անեծքի բանաձևը տիպիկ արամեական է, ոչ մի առնչություն չունի ուրարտական և ասորեստանյան Հայտնի–անեծքի բանաձևերի Հետ: Արձանագրության սկզբի բացակայությունը թույլ չի տալիս պարզել նրա նախնական նպատակը, բայց Հնարավոր է, որ այն ունի նվիրատվական կամ Հուշագրական բնույթ: Ըստ արձանագրության Հրատարակիչների՝ այն իրենից ներկայացնում է տեղական իշխանի կամ թագավորի կողմից պատվիրված մի տեքստ, որը գրված է կատարյալ արամեերենով, առանց արադական որևէ ազդեցության: Գրիչը, ըստ երևույթին, տեղացի է, դա մի արամեացի է արևմուտքից՝ արամեական Հայրենիքից, արևելք դաղթած: Տեքստը, պատմական ժամանակաշրջանի մասին, ցավոք, որևէ տեղեկություն չի տալիս: Սակայն, ըստ Հրատարակիչների, արձանագրության լեզուն Համապատասխանում է VIII դարի վերջերի արամեերենին:

<sup>1</sup> André Lemaire. Unè inscription arameenne du VIII av. J.-C. trouvée a Bukan (Azerbaijadian iranienne). *Studia Iranica*, 1998, 21/1, pp. 15-29.

<sup>2</sup> M.Sokoloff, *The old Aramaic inscription from Bukan. A revised interpretation*, JES, v. 49, № 1-2, 1999, p. 105-113. *Israel Eph'al, The Bukan Aramaic inscription: Historical considerations*, JES, v. 49, № 1-2, 1999, p. 116-120.

Արձանագրության տեքստի վերծանությունը և անդ-  
լերեն թարգմանությունը, չնայած որոշ տարբերություն-  
ներին ֆրանսերենից, մեզ թվում է ավելի ճշգրիտ ու տրա-  
մաբանական: Ստորև ներկայացնում ենք տեքստի անդլերե-  
նից հայերեն թարգմանությունը:

1. Ով որ կործանի այս հուշակոթողը, [լինի դա...]
2. պատերազմի ժամանակ, թե խաղաղության մեջ, բոլոր  
մահացու վարակները
3. աշխարհի երեսին, թող դրանք, որ կան, աստվածները  
պարտադրեն [երկ]րին
4. թագավորի: Ու նա ատելի է աստվածներին, ու նա  
ատելի է
5. Խալդիին, որն է Z'TR-ում: Թող յոթ կողեր
6. գուրգուրեն մի հորթի և թող նա չհագենա: Թող յոթ
7. կին թխել ուղեան [հաց] մի վառարանում (=օջա-  
խում) ու [այդպես էլ] չկարողանան լցնել
8. այն: Թող [եփող] կրակի ծուխն ու ձայնը [=չըխկոցը]
9. երկանքի իսպառ վերանան նրա երկրի երեսից: Թող  
նրա հողն աղակալվի և թող որ
10. դառնագին լինի նրա համար սա՛ թունավոր մուս-  
խտից: Ու այն թագավորն որ [կգրի (°)]
11. այս հուշակոթողի վրա, թող Հադադն ու Խալդին  
շուռ տան [= տապալեն] նրա գահը:
12. Ու թող Հադադն այլևս չորոտա
13. նրա երկրում, և թող որ ամբողջ անեծքը կոթողի  
դիպչի նրան:

Այս արձանագրությունն առանձնապես հետաքրքիր է  
մեզ համար, քանի որ այստեղ հիշատակվում է Խալդի աստ-  
ծո անունը: Մինչ այս, բացի ուրարտական արձանագրութ-  
յուններից, Խալդի անունը վկայված էր միայն ասորես-  
տանյան սեպագրերում, թե՛ որպես դիցանուն<sup>3</sup>, թե՛ որպես  
թեոֆոր անունների բաղադրիչ Խալդինասիր, Խալդիբու-  
սուր, Խալդիէթիր և այլն: Որպես թեոֆոր անվան բաղադ-  
րիչ այն հիշատակված է նաև Բեհիսթունի արձանագրութ-

<sup>3</sup> И.М.Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории  
Урарту, АВИИУ, ВДИ, 1951, № 2, с. 257-266, 1951, № 3, с. 207-  
252. № 46, № 49 (309), (346), (367), (405), (415), № 50 (2)

յունում:<sup>4</sup> Հայտնի է նաև, որ Մուծածիրի Խալդիի տաճարում արարողություն է կատարել Ասորեստանի թագավորներից մեկը: Այսպիսով, Խալդիի պաշտամունքը միայն Ուրարտուով չէր սահմանափակվում. այն տարածվում էր ուրարտական պետության քաղաքական և մշակութային ազդեցության ոլորտին զուգահեռ: Այս հանգամանքը մեզ հիմք է տալիս խորհել այն մասին, որ արձանագրությունը փորագրվել է մի երկրում, որը այս կամ այն կերպ ենթակա է եղել ուրարտացիներին, գտնվել է նրա ազդեցության ոլորտում: Այս կապակցութամբ առաջանում են մի շարք հարցեր.

1. Ո՞ր երկրում է հիմնվել արձանագրությունը և ե՞րբ է հիմնադրման մոտավոր ժամանակը:
2. Ո՞ր քաղաքն է Z'TR-ն, որն արձանագրությունում նշվում է որպես Խալդիի պաշտամունքային կենտրոն:
3. Ո՞վ է արձանագրության հեղինակը:

Արձանագրությունը գտնվել է Մանայի թագավորության տարածքում՝ մայրաքաղաք Իզիրտու-Ջիտրայի մոտակայքում: Մանայի թագավորության պատմության մասին տեղական աղբյուրներ հայտնի չեն: Այս երկիրը հիմնականում հիշատակվում է Ասորեստանի թագավորների թողած արձանագրություններում՝ սկսած Սալմանասար III-ից (մ.թ.ա. 860-825 թթ.) մինչև Աշուրբանիպալը (մ.թ.ա. 668-624 թթ.): Սալմանասար III-ը Մանան անվանում է «Մանեական ցեղերի երկիր»:<sup>5</sup> Շատ հաճախ է հիշատակվում Մանան նաև նրա մյուս հզոր հարևանի՝ Ուրարտուի արքաների սեպագրերում, սկսած Մինուլայից<sup>6</sup> (մ.թ.ա. 810-781), որը Մանան անվանում է «Մանա երկիր», մինչև Ռուսա II-ի (մ.թ.ա. 685-645) ժամանակաշրջանը: Հիշատակություններ Մանայի մասին կան նաև Աստվածաշնչում: Ասորեստանյան աղբյուրներում առկա են Մանա անվան մի քանի տարբերակներ՝ *Ma(n)a*, *Mannas* կամ *Munna*:<sup>7</sup> Ասորեստանյան

<sup>4</sup> АВИИУ, № 80.

<sup>5</sup> D. D. Luckenbill, *Ancient Records of Assyria and Babilonia (ARAB)*, Chicago, 1926-1927. Vol. I, § 12, 637

<sup>6</sup> УКН, № 28, 29.

<sup>7</sup> ARAB, vol. I, § 12, 637, 739

աղբյուրներում Մանա անվանումը իրենից ներկայացնում է մի կոնկրետ քաղաքական միավոր: Բայց ամենայն հավանականությամբ դա էթնիկական անվանում է:

Մանայի էթնիկական կազմի մասին շատ քիչ բան կարելի է ասել: Այն հիմնականում բաղկացած է եղել զագրո-էլամական, լուլուբեական, իրանական ցեղերից, որոնց մի մասն են կազմել նաև մանեական ցեղերը: Սրանց տարածման արեալը հիմնականում Ուրմիա լճի արևելյան ափին է: Ասորեստանյան աղբյուրներում հիշատակվող Մանաշ ձևը կարելի է համեմատել զագրո-էլամական Սուրիկաշ, Ուիշտիշ ձևերի հետ: Զագրո-էլամական ցեղերի առկայությունը մասին է խոսում նաև Եձ վերջածանցը որոշ տեղանուններում: Մայրաքաղաք Իզիրտան, Մանայի հարևան կամ նրա կաղմում գտնվող Զիկերտան և նրա մայրաքաղաք Պարզան:<sup>8</sup> Սակայն կա մի այլ տեսակետ ևս. Մանայի սահմաններում, նրա տարածքից դուրս և ենթակա շրջաններում ապրել են հիմնականում իրանալեզու ցեղեր, ինչի մասին վկայում են իրանական անձնանունները: Սարգոն II-ի տեքստերում նշված են չորս փոխարքաների իրանական անուններ:<sup>9</sup> Սակայն իրանական ցեղերի բնակավայրը Մանայի կենտրոնը չէ մայրաքաղաք Իզիրտոսով հանդերձ: Կենտրոնական շրջաններում բնակվում էին խուրի-մանական, խուրի-ուրարտական ցեղեր:

Ինչ վերաբերում է արամեական տարրին, ապա պարզ է, որ Հյուսիսային Սիրիայի և Վերին Միջագետքի արամեական ցեղերը՝ ակտիվորեն զբաղվելով առևտրով և արագորեն գրավելով հարևան երկրների միջանցիկ առևտուրը, նաև ունենալով զարգացած գիր, մեծ ազդեցություն ունեին տարածաշրջանում՝ Միջերկրականից մինչև Զագրոս և Պարսից ծոց: Արամեերեն լեզուն և գիրը ընդունված էին Ասորեստանում, գուցե նաև Ուրարտոսում: Քիչ բան է հայտնի

<sup>8</sup> Г.Меликишвили, Научи-Ураарту, с. 137; նույնի, Вопросы истории Манейцкого царства, ВДИ, № 1, 1949 г., с. 62.

<sup>9</sup> З.А.Грантовский, Ранняя история Иранских племен Персидской Азии, Москва, 1970, с. 291-292.

Մանայի թագավորության սոցիալ-տնտեսական կյանքի մասին: Մանան կառավարում էր թագավորը: Թագավորական դահլը ժառանգական էր: Մահայում թագավորական իշխանությանը զուգահեռ կար նաև զարգացած ազնվական դաս: Թագավորին շրջապատում էին պալատականներ, խորհրդականներ, ավագանի, որոնք «թագավորական տան սերմն էին»: Մանայի թագավորներն անկախ էին: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ հաճախ Ասորեստանի կամ Ուրարտուի թագավորները պատանդ էին վերցնում Մանայի թագավորների որդիներին: Մանայի մեծ մարզերի կառավարիչների իշխանությունը նույնպես ժառանգաբար էր փոխանցվում հորից որդուն: Փոխարքաները կամ կառավարիչները իշխանությունը ի գիրտուի թագավորական տնից չէին ստանում: Այդ իշխանությունը ավելի շուտ ցեղերի առաջնորդների իշխանության զարգացման արդյունք էր:

Մանայում զարգացած էին երկրագործությունն ու անասնապահությունը, հատկապես խաղողագործությունը, այգեգործությունը և ձիաբուծությունը: Մանայի բնակչությունը նստակյաց էր: Դրա վկայությունն է դարերի ընթացքում հիշատակվող Իգիրտու-Ջիտրա մայրաքաղաքը: Ասորեստանյան և ուրարտական աղբյուրներում հիշատակվում են բազմաթիվ այլ քաղաքներ ևս: Սարգոն II-ը, օրինակ, պարծենում է, որ Մանայի Ուիշդիշ շրջանում «գրավեց անթիվ-անհամար քաղաքներ»:<sup>10</sup> Նույնպիսի հիշատակություններ ունի նաև Աշուրբանիպալը: Ուրարտական աղբյուրներում ևս կան նման վկայություններ:

Այսպիսով, ակնհայտ է, որ Մանայի թե՛ աշխարհա-քաղաքական դիրքը, թե՛ զարգացած տնտեսությունը առիթ էին տալիս մշտապես լինել իր երկու հզոր հարևանների հետաքրքրության շրջանակում: Մանան կովախնձոր է եղել և ժամանակ առ ժամանակ հակվել է կա՛մ դեպի Ասորեստան, կա՛մ դեպի Ուրարտու: Հայտնի է, որ հատկապես Սարգոն II-ի և Ռուսա I-ի թագավորության տարիներին Մանան Ուրարտուի և Ասորեստանի միջև մրցակցության հիմնական թատերաբեմն էր:<sup>11</sup>

<sup>10</sup> АВИИУ, № 49 (163)-(164).

<sup>11</sup> АВИИУ, № 54 (280), 46 (75), 79.

Ըստ ուրարտական աղբյուրների՝ Մանա է արչավել  
 դեռևս Մինուան (մ.թ.ա. 840-782 թթ.), Արգիշթի I-ը (մ.թ.ա.  
 786-769 թթ.), Սարգուրի II-ը (մ.թ.ա. 764-735 թթ.): Մինու-  
 այի արչավանքի մասին է վկայում Մեիշտայում (ժամանա-  
 կակից Թաշ-Թեփե) գտնված արձանագրությունը: Մինուա-  
 յի արչավանքն ավարտվում է ամրոցի կառուցմամբ կամ  
 գոլցե վերականգնմամբ: Ըստ Հին արևելյան սովորույթի,  
 ամրոցի կառուցումը նշանավորում էր տվյալ շրջանի փոխ-  
 արքայություն դառնալը: Սակայն Մինուայի իշխանության  
 տարիներին և դեռ ավելի ուշ փոխարքա էր նշանակվում  
 տեղական կառավարիչը: Այսպիսով Մանայի թագավորութ-  
 յունը, գոյատևում էր: Արգիշթի I-ի թագավորության առա-  
 ջին տարում Մանան դեռևս գտնվում էր ուրարտական թա-  
 գավորներից կախման մեջ: Ըստ Խոռխորյան տարեգ-  
 րության՝ 775, 774, 772 թթ. Արգիշթի I-ն արչավել է  
 Մանա.<sup>12</sup> Արգիշթի I-ի կառավարման 765-764 թթ. ուրարտա-  
 կան զորքերը գրավում են Շիմերիխադիրի «արքայական  
 քաղաքը»: Սակայն այդ քաղաքը Մանայի մայրաքաղաքը  
 չէ: Դարերի ընթացքում անփոփոխ Մանայի մայրաքաղաքը  
 Իզիրտուն էր: Շիմերիխադիրի «արքայական քաղաքը»  
 վարչական կենտրոն էր,<sup>13</sup> քանի որ, ըստ ասորեստանյան և  
 ուրարտական տերմինաբանության փոխարքայի նստավայր  
 հանդիսացող ցանկացած քաղաք՝ կարող է կոչվել արքա-  
 յական: Իսկ ինչ վերաբերում է Իզիրտունին, ապա աղբյուր-  
 ներում որևէ տեղեկություն չկա ուրարտական զորքերի  
 կողմից քաղաքի գրավման մասին: Արգիշթի I-ի որդի  
 Սարգուրի II-ը<sup>14</sup> Մանայի վերաբերյալ ասում է. «Երեք ամ-  
 րոց մարտով առա, քսաներեք բնակավայր «քաղաք» մի  
 օրում գրավեցի, ամրոցները ավերեցի, իսկ բնակավայրերը  
 հրդեհեցի»:

<sup>12</sup> YKH, № № 28, 29, 127 III – 40/60, 127 IV–35, 43, 67-80, 127 V–13, 24-28, 127 IV-V, 128 B-2, 155 A, B.

<sup>13</sup> YKH, № 127 V – 39.

<sup>14</sup> Նույն տեղում:

Այժմ անդրադառնանք Ռուսա Լ-ի (մ.թ.ա.735-714(713) թթ.) կառավարման տարիներին: Նրա թագավորության վերջին շրջանը առավել հետաքրքիր է մեզ համար, քանի որ ըստ արձանագրության վերծանողների արամեերեն լեզվի և գրի մակարդակը համապատասխանում է այդ ժամանակահատվածին: Ռուսա Լ-ի կառավարման տարիներին սերտանում է Ուրարտու-Մանեական դաշինքը: Մ.թ.ա. 716 թ. Ռուսայի դրդամբ՝ Ուաուշ լեռան վրա Մանայի փոխարքաներ Բագդադի Ուիշգիշացու և Միտատի Ջիկիրտացու ձեռքով սպանվում է Մանայի թագավոր Ազան և նրա փոխարեն թագավոր է կարգվում Ազայի եղբայր Ուլլուսունուն: Մ.թ.ա. 715 թ. Ուլլուսունուն Ռուսային է հանձնում քսաներկու ամբոցներ,<sup>15</sup> պատանդ է ուղարկում իր որդուն և հավատարմության երգում է տալիս ի նշան շնորհակալության, Ասորեստանի դեմ պայքարում օգնելու համար: Սակայն արդեն մ.թ.ա. 714 թ. Սարգոն II-ը արշավում է Մանա: Ուլլուսունուն անցնում է Սարգոնի կողմը:<sup>16</sup> Այսպիսով Ուրարտու-Մանեական դաշինքը տևում է շատ կարճ՝ ընդամենը երկու տարի: Ամենայն հավանականությամբ հենց այս տարիներին Իզիրտուում հիմնադրվում է տաճար կամ գուցե միայն կոթող Խալդի աստծո հիշատակությամբ: Սակայն այն հանգամանքը, որ արձանագրության մեջ Խալդին հիշատակվում է Հադադից հետո (Հադադը նույնացվում է խուբինների թեռուք, ուրարտացիների թեյշեբա, լուվիացիների Տարհունց, լիկիացիների Տրքք աստծո հետ), բացարձակապես անհարիր է ուրարտական պետական մտածողությանը:<sup>17</sup> Սա հիմք է տալիս պնդելու, որ արձանագրությունը ուրարտական արքայի կամ Մուծածիրի քրմարքայի հրամանով չի գրվել: Մուծածիրը, ինչպես գիտենք, սահմանակից էր Մանային և Խալդիի պաշտամունքային կենտրոնն էր: Տպավորություն է ստեղծվում, որ արձանագրությունը գրվել է մի իշխանի կամ թագավորի կողմից

<sup>15</sup> И.М. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, гл. II, с. 207.

<sup>17</sup> АВИИУ, № 54 (28), № 46 (75), № 49.

<sup>18</sup> И.М. Дьяконов, К вопросу о символе Халди, Древний Восток, № 4, Ереван, 1983, с. 191-192.

(Ուլլուստունու ?), որի համար Նալգին գլխավոր աստվածութունն է: Սակայն նա ինչ-ինչ պատճառներով, հիշատակել է Նալգիի անունը, ավելին՝ նշել է Իզիրտուն որպես Նալգիի պաշտամունքային կենտրոն (Նալգին որ Z'TR-ում է): Հետևաբար Իզիրտունում կոթողի կամ տաճարի հիմնադրության խնդիրը պահանջում է պարզաբանում:

1. Z'TR -ն ոչ թե Մանայի մայրաքաղաք Իզիրտունն է, այլ Մուծածիրի իշխանութունում կամ նրա հարևանությամբ գտնվող Նալգիի պատշամունքի հետ առնչվող քաղաքներից մեկը, օրինակ Շատտերան:

2. Մյուս կողմից, եթե ընդունում ենք, որ Z'TR-ն Մանայի մայրաքաղաքն է, ապա պիտի ենթադրենք, որ Վանի թագավորները ինչ-որ ժամանակ գրավել են Իզիրտուն: Հին արևելյան կայսրութուններից և ոչ մեկը, բացառյալ Ուրարտուի, չէր պարտադրում գրաված տարածաշրջաններում իր պետական կրոնը: Ուրարտացիները նոր տեղում հիմնում էին Նալգիին ձոնված պաշտամունքի տաճար կամ բաց երկնքի տակ, այսպես կոչված՝ «դարպասներ» (šeštele), կամ էլ, ինչպես Կարմիր բլուրում է՝ կոթող (pulusi):

Սակայն ուրարտացիների կողմից Իզիրտուի գրավման մասին փաստեր, ինչպես արդեն վերը նշել ենք, չկան: Փաստորեն արձանագրութունից քաղված տվյալները չեն համապատասխանում Նալգիի պաշտամունքի մասին մեր ունեցած պատկերացումներին, սակայն ընդլայնում են դրանց սահմանները: Արձանագրության տվյալներից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ Նալգիի պաշտամունքը պարտադրվում էր ոչ միայն նվաճված, այլև դաշնակից երկրներին:

Վ.Ա.ՂԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԵՐԿՈՒ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ  
ԱՐՄԱՎԻՐԻՑ

Դավթի բլուր (Արգիշթիսինիլի) և Արմավիր բլուրների հնագիտական համալիրների պեղումներին զուգընթաց, նույն հուշարձանի շրջակայքում տարիներ շարունակ կատարվող դաշտային աշխատանքները պարբերաբար ի հայտ են բերում նյութական, մշակույթի հնագույն մնացորդներ, ըստ որոնց՝ մինչև վանտոսայան (ուրարտական) հզոր քաղաքամրոց, սպա նաև, անտիկ Հայաստանի առաջին մայրաքաղաք դառնալը, այս տարածքը դարձյալ որոշակի դեր ունշանակուած լուծն է ունեցել Հայկական լեռնաշխարհի և հարակից տարածաշրջանների տեղաբնիկների առևտրամշակութային փոխառնչությունների համակարգում:

Մասնավորապես այդ են վկայում Արմավիրում պատահաբար բացված երկաթեդարյան երկու դամբարանները: Դրանցից առաջինի նյութը XX դարի 20-ական թթ. հանձնվել է Էջմիածնի թանգարանին, իսկ 1931 թ. տեղափոխվել Հայաստանի Պատմության Պետական թանգարան (ժողովածու 777): Այստեղ են մուտք գործել նաև 1967 թ. պատահաբար բացված երկրորդ դամբարանի հնագիտական առարկաները (ՀՊՊԹ, ժողովածու 2369):

Առաջին դամբարանից (աղ. 1) հայտնաբերված սև փայլեցրած, գորշ և սև անփայլ խեցանոթների ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն, հավանաբար, երկու առանձին թաղումներ է պարունակել, որոնցից մեկը (աղ. 1, նկ. 2-4) ուղբորոնդեդարյան է և կարող է տեղավորվել մ.թ.ա. XIV-XIII դարերի ժամանակագրական սահմաններում, իսկ մյուսը (աղ. 1, նկ. 1, 5-7) համապատասխանում է Վաղ երկաթի շրջափուլին և թվագրվում մ.թ.ա. XII-X դարերով: Երկրորդ դամբարանի (աղ. 2) հնագիտական նյութն իր բազմաթիվ զուգահեռներն ունի Հայաստանի (Կարմիր բլուր, Աստղի բլուր, Քեթի, Հոռոմ, Մեծամոր, Կուլբիչև և այլն) երկաթեդարյան դամբարանների նյութերի հետ և վերաբերում է մ.թ.ա. XI-IX դարերին:

Արմավիրի հնագիտական այս երկու համալիրներում հայտնաբերված նյութերում հատկապես առանձնանում են առաջին դամբարանի երկաթեդարյան թաղման բրոնզե

դաշույնը (աղ. 1, նկ. 1) և երկրորդի՝ քառակող կալե անոթը (աղ. 2, նկ. 1):

Արմավիրի բրոնզե դաշույնը, ըստ մեր տիպաբանութ-  
յան, համապատասխանում է շրջանակալոր դաստակով գեն-  
քի երրորդ ենթախմբի տասներեքերորդ տարբերակին (Փի-  
լիպոսյան Ա., 1999, էջ 27-28, աղ. 14): Սրանք թամբաձև  
գլխիկով, հարթ (երբեմն միջնորմավոր) բռնակով, ուղղան-  
կյունաձև զանգվածեղ խաչարդով և հավասարաչափ նեղա-  
ցող շեղբով դաշույններ ու սրեր են: Հայկական լեռնաշ-  
խարհում այս զինատեսակը հանդիպում է Նոր Բայազետի  
(Կամո, Գավառ), Ներքին Գետաշենի (Աղբյաման), Հայա-  
ռատի, Զոլաքարի, Վանաձորի (Կիրովական), Զուղայի,  
Առաջաձորի և Խանլարի մ.թ.ա. XII-X դարերով թվագրվող  
հնագիտական համալիրներում (Լալայան Ե., 1931, էջ 99-  
100; Մարտիրոսյան Հ., 1969, աղ. 19, նկ. 4; Խնկիրկյան Օ.,  
1977, էջ 33, աղ. 5, նկ. 9; Փիլիպոսյան Ա., 1979, էջ 39-40;  
Փիլիպոսյան Ա., 1992, էջ 98-99; Гуммель Я., 1931, էջ 14,  
աղ. 1, նկ. 12; Гуммель Я., 1939, նկ. 1; Пиотровский Б.,  
1949, աղ. 6; Кушнарева К., 1957, էջ 136-137, նկ. 2;  
Мартиросян А., 1964, էջ 155, նկ. 63/1, 2; Есаян С.,  
1966, աղ. 12, նկ. 5):

Նմանատիպ չորս դաշույններ հայտնի են նաև Մինդե-  
չառերից և Խեչկիդեբերից (յուրաքանչյուրից երկուական) և  
դարձյալ թվագրվում են մ.թ.ա. II-I հազ. սահմանադժով  
(Асланов Г., Вайдов Р., Йоне Г., 1959, էջ 78-79, աղ.  
13, նկ. 7; Кашкай М., Селимханов И., 1973, էջ 126,  
212, աղ. 25/19, 21, նկ. 18/19, 21):

Հաջորդ տարածաշրջանը, ուր ներկայացված են այս դա-  
շույնները Իրանական սարահարթի արևմտյան հատվածն է:  
Դրանք հանդիպում են Աղա-Էվլարի, Չինա-Նանեի, Մար-  
լիկի և Խուրվիլիի հնագիտական համալիրներում (Schaeffer  
С., 1948, աղ. 217, նկ. 14, աղ. 227, նկ. 10, աղ. 237, նկ. 24;  
Vanden Berghe L., 1964, աղ. 34, նկ. 226; Negahban E.,  
1964, նկ. 51; Maxwell-Hislop K., Houdges H., 1966, աղ. 4,  
նկ. 1) և դարձյալ վերաբերում են II հազ. վերջերին:

Մերձավոր • Արևելքի մյուս տարածաշրջաններում  
(Փոքր Ասիա, Միրա-Պաղեստինյան աշխարհ, Միջագետք)  
այս տարբերակին վերաբերող շրջանակալոր դաստակով դա-  
շույններն ու սրերը բացակայում են: Սա թույլ է տալիս

ենթադրել, որ Արմավիրի բրոնզե դաշույնի զուգահեռներն առավելապես Հայկական լեռնաշխարհի արևելյան և Իրանական սարահարթի արևմտյան շրջաններին բնորոշ զինատեսակ են և վկայում են երկու հարակից տարածքներում Երկաթի դարաշրջանում գոյություն ունեցած զինագործական ընդհանրությունների մասին:

Արմավիրի երկրորդ դամբարանից հայտնաբերված կավե քառակող անոթը Հայաստանում իր զուգահեռներն ունի Արծվաքարի (Ղչլաղ), Թումանյանի բանավանի, Կուլբիշևի (Ջարխես) և Կառնուտի երկաթեդարյան հնագիտական գտածոներում (Լալայան Ե., 1931, էջ 83-84; Խնկիկյան Օ., 1987, էջ 83, նկ. 1; Փիլիպոսյան Ա., Բաղալյան Ռ., 1996, էջ 7-8): Այս անոթների վաղագույն օրինակները վկայված են Թուեղքի մ.թ.ա. III հազ. առաջին կեսի վաղբրոնզեդարյան (Жоржикашвили А., Горадзе Э., 1974, էջ 35, աղ. 39, նկ. 63) և Սիսիանի մ.թ.ա. XXII / XXI-XX դարերի միջինբրոնզեդարյան (Avetisyan P., Badalyan R., Gevorkyan A., Khnkikyan O., 2000, էջ 163-164, նկ. 2/4) հնագիտական համալիրներում:

Նմանատիպ անոթներ հանդիպում են նաև Իրանական սարահարթի արևմտյան շրջանների (Սուբուվին, Թեփե Սիալկ Բ) մ.թ.ա. II-I հազ. սահմանագծով թվագրվող դամբարաններում (Schaeffer C., 1948, աղ. 258, նկ. 19; Vanden Berghe L., 1964, աղ. XXVIII), ինչպես նաև Պակիստանի (Սվատ) մ.թ.ա. I հազ. համալիրներում (Antonini C., Stacul S., 1972, աղ. XXXI, նկ. b):

Մասնագիտական գրականության մեջ փորձ է արվել Անդրկովկասից և Իրանական սարահարթից հայտնաբերված վերոհիշյալ քառակող անոթները համարել մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսի չինական «ցուն» տիպի մետաղական պաշտամուսրային սպիրտներից արված բնոթինակում (Погребова М., 1977, էջ 90-93): Տեսակետ, որն անշուշտ գիտական լուրջ հիմնավորում չունի և տեղի հնագիտական նյութերին լավատեղյակ չլինելու արդյունք է: Մեր կարծիքով այսօր դժվար է Հայաստանից և հարակից շրջաններից, ինչպես նաև Իրանական սարահարթից հայտնաբերված քրննարկվող անոթները, ելնելով դրանց սահմանափակ քանակից, համարել դրսից ներմուծված: Առավել ևս, որ Հայկական լեռնաշխարհում դրանց վաղագույն օրինակներն արդեն հայտնի են: Չեռքի տակ եղած համապատասխան նյու-

Թի հիման վրա, առայժմ հնարավոր է փաստել Հայաստանյան և իրանական վաղերկաթեղարյան քառակող անոթների ձևերի և զարդարման մանրամասների ընդգծված նմանությունն ու, Թերևս, մշակութային նույն ոլորտին պատկանելը:

Այսպիսով՝ Արմավիրի վաղերկաթեղարյան վերոհիշյալ հնագիտական նյութերի ուսումնասիրությունը Թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումները:

1. Արմավիրն ու նրա շրջակայքը վանտոսայան (ուրարտական) և անտիկ ժամանակահատվածներից առաջ ևս գործառնությունների հենակետ է հանդիսացել:

2. Նրա տեղաբնիկների սպառազինությունն ու կենցաղային առարկաները Հայաստանի Ուշ Բրոնզի-Վաղ Երկաթի շրջափուլերի, այսպես կոչված «լճաշեն-մեծամորյան» մշակութի մասն են կազմել:


3. Շրջանակավոր դաստակով բրոնզե դաշույնի և քառակող կավե անոթի առկայությունը փաստում են Արմավիրի վաղերկաթեղարյան բնակչության մասնակցությունը Հայկական լեռնաշխարհի և Իրանական սարահարթի արևմտյան շրջանների միջև մ.թ.ա. II հազ. սահմանագծին նրկատվող արտադրական և մշակութային սերտ փոխառնչություններին:

### ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ

1. Լալայան Ե., Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան 1931:
2. Խնկիկյան Օ., Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», № 9, պրակ III, Երևան 1977:
3. Խնկիկյան Օ., Դամբարանների պեղումներ Կույբիշև գյուղում, «Լրաբեր», № 5, Երևան 1986:
4. Մարտիրոսյան Հ., Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», № 2, պրակ II, Երևան 1969:
5. Փիլիպոսյան Ա., Կամոյից Հայտնաբերված մի դաշույնի մասին, «Հայկ. ՄՍՀ-ում 1977-1978թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ», Երևան 1979:
6. Փիլիպոսյան Ա., Անիից Հայտնաբերված Թամբաձև վերնամասով դաշույնը, «Անի», № 3-4, Երևան 1992:


7. Փիլիպոսյան Ա., Բաղալյան Ռ., Կառնուտից Հայտնաբերված քառանիստ սափորն ու նրա Հինաևրեյական գուգահեռները, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» Հանրապետական երկրորդ գիտաժողով, զեկուցումների թեզիսներ, Գյումրի 1996:
8. Փիլիպոսյան Ա., Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը, Երևան 1999:
9. Асланов Р., Вайдов И., Ионе Г., Древний Минге-чаур, Баку 1959.
10. Гуммель Я., Погребальный курган (№ 1) около Еленендорфа, Азербайджанский ССР, Баку 1931.
11. Гуммель Я., Археологические раскопки в районах Азербайджанской ССР, "Изв. АЗФАН СССР", № 3, Баку 1939.
12. Есаян С., Оружие и военное дело Древней Ар-мении, Ереван 1966.
13. Жоржикашвили Л., Гогадзе Э., Памятники Три-олети эпохи ранней и средней бронзы, Тбилиси 1974.
14. Кашкай М.А., Селимханов И.Р., Из истории древней металлургии Кавказа, Баку 1973.
15. Кушнарeva К., Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, "Со-ветская Археология", XXVII, Москва 1957.
16. Мартиросян А., Армения в эпоху бронзы и ран-него железа, Ереван 1964.
17. Пиотровский Б., Археология Закавказья с древ-нейших времен до I тыс. до н. э., Ленинград, 1949.
18. Погребова М.Н., Иран и Закавказье в раннем железном веке, Москва 1977.
19. Antonini C.S., Stacul S., The Proto-Historic graveyards of Swat (Pakistan), Roma 1972.
20. Avetisyan P., Badalyan R., Gevorkyan A., Khnkikyan O., The 1988 Excavation campain at the Middle Bronze Age

A 86568




*Necropolis of Sisian, Armenia, "Studi Micenei ed Egeo – Anatolici", fasc. XLII/2, Roma 2000.*

21. *Maxwell-Hislop K., Houdges H., Three iron swords from Luristan, "Iraq" vol. 28, London 1966.*
22. *Negahban E.O., A Preliminary Report on Marlik Excavation, Teheran 1964.*
23. *Schaeffer C.A., Stratigraphie comparée et Chronologie de l'Asia Occidentale, London 1948.*
24. *Vanden Berghe L., La necropole de Khurvin, Istanbul 1964.*



ԱՂՅՈՒՄԱԿ 1



ԱՂՅՈՒՄԱԿ 2

ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դամբարանը հայտնաբերվել է 1984 թ. Անիի շրջանի Գուսանազուղում, բնակավայրի կենտրոնական հատվածում՝ հոր փորելիս: Տեղում կատարված հետազոտությունում որոշ ավյալներ հաջողվեց ստանալ միայն դամբանախցի կառուցվածքի, թաղման ծիսակարգի և գույքի վերաբերյալ, որոնց համախմբությունն էլ, այնուամենայնիվ, հնարավորություն է ընձեռում թվագրել և պատմա-մշակութային առումով արժեքավորել հիշյալ հնագիտական հուշարձանը:

Դամբանախոցը 2.1 X 0.7-0.95 X 1 մ չափերով, հատակագծում՝ ուղղանկյուն, կլորացող անկյուններով, հարավ-արևելք ուղղված ստորգետնյա քարարկղ էր, երկու ծածկասալերով փակված: Պատերը կառուցված էին հինգ շարք բազալտե որձաքարերով:

Ոսկրային մնացորդների մարդաբանական ուսումնասիրությունում պարզվեց, որ դամբարանում հուղարկավորված են եղել երեք ննջեցյալներ՝ մեկ կին և երկու տղամարդ, որոնցից մեկի գանգի գագաթոսկրը վնասված էր, հավանաբար, զենքի հարվածից: Այդ կոտրվածքի բնույթը վկայում է, որ վիրավորն առժամանակ ապաքինվել է: Հանգուցյալներն ամփոփվել էին դիաթաղման եղանակով: Կմախքներից մեկը դրված է եղել աջ կողքի, ծալված ոտքերով, գլուխը դամբանախցի հարավային անկյունում, դեմքով ուղղված արևելք:

Թաղման խցից հայտնաբերվել են երկաթե զենքեր՝ խողովակակոթառ երկու նիզակ (մեկը՝ թերի), բոլորատեգ, կոր դանակ (Ա.դ. I, 1-4), բրոնզե լկամ և շիգղ (Ա.դ. I, 6, 7), սրոցաքար (Ա.դ. I, 5), վանակատի միջուկ: Զենքերի փայտյա մասերը, որոնք ժամանակի ընթացքում փտել են, ամրացված են, եղել երկաթե սեղմակներով: Գտնվել են նաև խեցանոթներ՝ ալ-կարմիր քրեղան, միականթ սև սափոր, գույգ խուլ կանթերով կրճուճ, «խոհանոցային» գլանաձև անոթ (պատրաստվել է առանց դուրգի), միականթ թերի գավ (աղ. II, 1-5):

Բնակավորող հնագիտական համալիրի ղուգահեռները ներկայացված են Շիրակի, Վարաժնունիքի, Զորոփորի, Թուեղքի, Սևանի ավազանի, Սյունիքի մ.թ.ա. VII-VI դարերով թվագրվող

դամբանախմբերում: Այսպես, Գյումրիի դամբարանադաշտի № 8 դամբարանում հայտնաբերվել են երկաթե խողովակակոթառ «տերևաձև» նիզակ, կոր դանակ: Շիրակավանի I պեղավայրում հայտնաբերված ստորգետնյա քարարկղնեքը չափերով մոտ են Գուսանագյուղի դամբանախցին: Դրանցում ննջեցյալներն ամփոփված են դիաթաղման եղանակով, կծկված դիրքով: Թաղման գույքը, ամբողջութամբ վերցրած, նույնպես համադրելի է Գուսանագյուղի դամբանային իրերին:<sup>1</sup>

Դամբանախցերի կառուցվածքի, չափերի, թաղման ծիսակարգի մի քանի բնութագրիչների առումով սերտ առնչություններ կան Նրտանոցի դամբանադաշտի թաղումների հետ: Այստեղ ևս համատեղ են հանդես գալիս երկաթե նիզակներն ու կոր դանակները, բրոնզե կախոցակով սրոցաքարը, բոլորատեգերը, բրոնզը շիգղը: Ուշադրության է արժանի նաև սկյութական երկաթե կացնիկի առկայությունը:<sup>2</sup>

Գուսանագյուղի հավաքածոն լավ է համահարաբերակցվում լավարյան խմբի հուշարձանների մ.թ.ա. VII-VI դարերով թվագրվող դամբանային իրերին, մասնավորապես՝ Մուսիերիի № 242 դամբարանի գույքին, որտեղ, ի հավելումն, առկա են բրոնզե երկթե (սկյութական կոչված) նետասլաքներ:<sup>3</sup> Դեբեդի ավազանում կարելի է հիշատակել Ակների № 5 դամբարանը ևս, որի մետաղյա գույքը նմանություն է ցուցաբերում հիշյալ համալիրներին:

Հետաքրքիր զուգահեռներ են դիտվում (ըստ թաղման ծիսակարգի, գույքի) Բեշտաշենի դամբարանադաշտի քարարկղային թաղումներում, որտեղ առկա են նաև այսպես կոչված սկյութական նետասլաքներ, երկաթե կացիններ,<sup>4</sup> որոնք բացակայում են մեր հավաքածոյում:

<sup>1</sup> А.А. Мартыросян, О гревнем поселении и могильнике близ Лени-накана, КСИИМК, вып. 55, 1954, с. 110, 111, рис. 45,1,5; Օ.Խնկիկյան, Շիրակավանի մ.թ.ա. VII-VI դարերի դամբարանները, Գիտական աշխատություններ, II, Գյումրի, 1999, աղ. 2-5:

<sup>2</sup> А.А. Мартыросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, с. 274, рис. 107,4; նույնի՝ Раскопки в Головино, Ер., 1954, էջ 27-41, աղ. I, III, XIII, XV, XVI.

<sup>3</sup> J.de Morgan, Mission scientifique au Caucase, I, Paris, 1889, p. 51-59, 68-71, fig. 11-13, 17, 18, 25, 26.

<sup>4</sup> Б.А. Куфтин, Археологические раскопки в Триалети, I, Тбилиси, 1941, с. 41-46, таб. XV, XVI.

Քննարկվող թաղման գույքին որոշ նմանություն են դրսևորում Նորատուսի ուրարտական կնիքներ պարունակող դամբարաններում հայտնաբերված առարկաները: Նմանօրինակ հավաքածոներ, հատկապես մետաղյա իրերի առումով, հայտնի են Հարժիսի դամբարանադաշտից, որի № 2 դամբարանում գտնվել է նաև սկյութական եռաթև նետասլաք:

Վերը բերված զուգահեռները թույլ են տալիս եզրակացնել, որ Գուսանագյուղի դամբարանը կարելի է թվագրել մ.թ.ա. VII-VI դարերով:

Ուսումնասիրվող համալիրում հատկապես ուշադրավ է բրոնզե լկամի առկայությունը (Ա.դ. I, 6): Ասպանդակաձև ծայրերով նմանօրինակ լկամները, հետազոտողների կարծիքով, բնորոշ են կիմերա-սկյութական մշակույթներին և հայտնի են դեռևս չեռնոգորովսկյան փուլի հուշարձաններում (մ.թ.ա. IX-VIII դդ.):<sup>5</sup> Ջիասարքի նմանատիպ բաղադրամասեր հանդիպում են ինչպես Հայկական լեռնաշխարհի հուշարձաններում՝ Նորշունթեփե (Ծոփք), Իմիրլեր (Ամասիայի մարզ) և այլն,<sup>6</sup> այնպես էլ Աբխազիայում, Հարավային Օսեթիայում, Հյուսիսային Կովկասում, Կուբանում, Ուկրաինայում և այլուր:<sup>7</sup> Հարկ է նկատի ունենալ, որ հիշյալ տարածաշրջանների մի շարք հնագիտական համալիրներում ասպանդակաձև վերջավորություններով բրոնզե լկամները հանդես են գալիս երկաթե խողովակակոթառ նիզակների, կոր դանակների, կախօղակով սրոցաքարերի, բրոնզե շիգղերի հետ համատեղ:

<sup>5</sup> А.А.Иессен, К вопросу о памятниках VIII-VII вв. до н. э. на юге Европейской части СССР, СА, XVIII, 1953, с. 52, 79-89; А.И.Тереножкин, Куммеруйцы, Киев, 1976, с. 149 и т. г.

<sup>6</sup> Н. Hauptmann, Die Grabungen auf dem Norsun-Tepe, Keban Project Publications, ser. I, № 3, Ankara, 1972, s. 105, tab. 69, 2; V. Ünal, Zwei Gräber Eurasischer Reiternomaden im nördlichen Zentralanatolien, Beiträge der Allgemeinen und Vergleichenden Archäologie, № 4, München, 1982, s. 68, abb. 1, 4.

<sup>7</sup> М.М.Трапш, Памятники колхидской и скифской культур в селе Куланурхва Абхазской АССР, Сухуми, 1962, с. 23-25, таб. XX, 1; Е.И.Крупнов, Прикаспийская археологическая экспедиция, КСИИМК, вып. 55, 1954, с. 96, рис. 39, 6, 11, 12, 14; 42, 9; В.А.Ильинская, А.И.Тереножкин, Скифия VII-VI вв. до н. э., Киев, 1983, с. 66 и т. г.

<sup>8</sup> Ի դեպ, սրոցաքարը կիմերական սաղմիկների (թաղումների) գրեթե պարտադիր պիտույքն է:

Գուսանագյուղի հավաքածոյում առկա են վանտոսայան մշակույթին հատկանշական իրեր: Դրանցից է ալ փայլեցված մակերևույթով քրեղանը, որի հատակին թրծումից հետո խաչաձև նշան է քերծված (Աղ. II, 1): Հիշյալ տիպի քրեղանները, հավանաբար, ի հայտ են գալիս մ.թ.ա. VIII դարում, որն էլ այդ կավամանների լայն տարածման ժամանակաշրջանն է համարվում:<sup>9</sup> Ուշագրավ է, որ Մալաքլուի (Իգդիրի մոտ) ուրարտական դամբարանադաշտում հայտնաբերված խեցեղենը, բացառությամբ կարմիր փայլեցված թաս-քրեղանի,<sup>10</sup> այլ աղբյուրներ չի դրսևորում Գուսանագյուղի դամբարանի խեցանոթներին:<sup>11</sup> Քրեղանի այս տիպը շարունակում է մնալ հին հայկական խեցեղենի հայտնի ձևերից մեկը:

Հակիրճ անդրադառնանք զենքերից մեկին՝ երկաթե խոզովակակոթառ նիզակին, որի տերևաձև սայրն օժտված է երկայնական ողով (Աղ. I, 1): Համանման նիզակներ հայտնաբերվել են Հայաստանի մ.թ.ա. IX-VIII դարերով թվագրվող դամբարաններում<sup>12</sup> և մ.թ.ա. VIII-VII դարերի ուրարտական հոշարձաններում (Գեղհովիտ, Արգիշտիխինիլի, Կարմիր բլուր, Ոսկեբլուր (Ալթինթեփե) և այլն):<sup>13</sup> Ուսումնասիրողների

<sup>9</sup> А.А.Мартиросян, Архитектурные памятники, Ер., 1974, с. 147; S. Kroll, Keramik urartäischer Festungen in Iran, *Archaeologische Mitteilungen aus Iran*, Eb. 2, Berlin, 1976, s. 117, 118.

<sup>10</sup> Б.А. Куфтин, Урартский "Колумбарий" у подошвы Арарата и Куро-Араксский энеолит, ВГМГ, XII-В, Тбилиси, 1944, с. 19, 20, рис. 16, 3.

<sup>11</sup> Գուսանագյուղի դամբարանում հայտնաբերված մյուս խեցանոթները, տեղական արտադրանքի նմուշներ են, իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի մ.թ.ա. VII-VI դարերի խեցեղեն հավաքածոներում և ծագումնաբանորեն կապված են երկաթի դարաշրջանի նախորդ փուլերի համանման կավանոթների հետ:

<sup>12</sup> А.А. Мартиросян, Армения в эпоху бронзы..., с. 197, 208. С.А. Есаян, Астхилбурский могильник, ЛՀԳ, 1968, № 6, էջ 85, IX. II, 6:

<sup>13</sup> Ա.Ս.Փիլիպոսյան, Լ.Ե.Խաչատրյան, Գեղհովիտի վանտոսայան վիմափոր դամբարանը, ՀՀՀ, 16, պր. III, Եր., 1995, աղ. 1, 2, 3: А.А.Мартиросян, Архитектурные памятники, рис. 89б, 6. Б.Б. Пиотровский, Кармир-Блур I, Ер., 1950, рис. 21. T. Özgüç Aaltintepe. Architectural monuments and wall painting, *Türk tarih-kurumu basimevi*, Ankara, 1966, fig. 2-4.

կարծիքով, հիշյալ տիպի նիզակները և երկաթե կոր դանակները բնորոշ են ուրարտական մշակույթին: Ինչպես գտնում են, նիզակները սկզբնապես գրեթե իսպառ բացակայում էին կիմերների սպառազինությունից, իսկ սկյութական զինական համալիրի ծագումը կապված է առաջալորասիական մշակույթների հետ: Ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ կիմերա-սկյութական թաղումներում զենքի այս տեսակի հանդես գալը կարող է բացատրվել Հայկական լեռնաշխարհում այդ ցեղախմբերի գտնվելու ընթացքում արված փոխառությունը:

Հարկ է ընդձել, որ ուսումնասիրվող դամբարանի թաղման ծիսակարգի վերակազմվող բաղադրատարրերը (թաղման եղանակ, տեսակ, կմախքների դիրք) բնորոշ են ինչպես Հայաստանի երկաթի դարաշրջանի, այնպես էլ չեռնոգորովսկյան ժամանակաշրջանի կիմերների հուղարկալորություն ծիսակարգին:<sup>14</sup>

Միևնույն ժամանակ՝ երկաթե խողովակալոթառ տերևաձև նիզակները, կոր դանակները, կախօղակով սրոցաքարը (մեծամասամբ, սկյութական կոչված բրոնզե նետասլաքները ևս) միասին են հանդես գալիս նաև հին Հայկական մշակույթը ներկայացնող հնագիտական համալիրներում՝ Զրառատում, Աստղիբլուրում, Նորաշենում և այլուր:<sup>15</sup> Սրանցում հավաստված է նմանապես բրոնզե շիգդերի առկայությունը: Քննարկվող տիպի խեցանոթները ևս, երբեմն որոշ ձևափոխություններով, շարունակում են գոյատևել հին Հայկական մշակույթում: Նույնը կարելի է ասել թաղման ծեսի վերականգնվող բաղադրիչների վերաբերյալ:

<sup>14</sup> А.И. Тереножкин, *նշվ. աշխ.*, էջ 93: Ի դեպ, սկյութական թաղման ծիսակարգին բնորոշ է կմախքի մեջքի վրա ձգված դիրքը. տե՛ս Б.Н. Граков, Скифы, М., 1971, էջ 64: А.М. Лесков, Прегскифский период в степях Северного Причерноморья, Проблемы скифской археологии, М., 1971, էջ 88-91: Ուշագրավ է, որ Ուտիքում (Մինգչաուրի դամբարանադաշտ) նախկին կծկված դիաթաղումներին մ.թ.ա. VII դարում փոխարինում են մեջքի վրա ձգված դիրքով սկյութական թաղումները:




<sup>15</sup> Г.А. Тирациян, *Култура древней Армении. VI в. до н. э. — III в. н. э.*, Ер., 1988, с. 42-44, рис. 11. С.А. Есаян, *նշվ. աշխ.*, էջ 86-88, 94, IX. III, IV, VIII: ЁхЫЭЗ` Древняя культура племен Северо-Восточной Армении, Ер., 1976, с. 52. Ի. Կարապետյան, Նորաշենի վաղ Հայկական ամրոցը, ՊԲՀ, 1974, № 2, տախր. III, IV:

Հայ Հնագիտության երախտավոր Գ.Ա.Տիրացյանի գիտական աշխատություններում հին հայկական մշակույթի ժամանակադրական ստորին սահմանը համարվում է մ.թ.ա. VI դարը: Նա բամիցս մատնանշել է նաև, որ մշակույթի ակունքները շատ ավել խորն են և իրենց արմատներով հասնում են երկաթե լայն տարածման և, մինչև իսկ, վաղ երկաթի դարաշրջաններ: Ըստ Գ.Տիրացյանի համոզիչ փաստարկների՝ հին հայկական մշակութային ավանդույթները այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպիսիք են ամրոցաշինությունն ու բնակարանաշինությունը, խեցեգործությունն ու մյուս արհեստները, թաղման ծեսն ու հավատալիքները:<sup>16</sup>


Հաշվի առնելով ծագումնաբանական այս ակնհայտ առնչությունները, նպատակահարմար ենք գտնում հին հայկականին անմիջականորեն նախորդող հիշյալ Հնագիտական մշակույթն անվանել Հնագույն հայկական: Տարածքային առումով այդ մշակույթը սահմանափակված է Հայկական լեռնաշխարհով (այն ներառելով մասամբ) և ժամանակագրորեն, հավանաբար, ընդգրկում է մ.թ.ա. XII-VI դարերը:

Ամփոփենք: Գուսանագյուղի «հեծյալ ուղմիկի» դամբարանը Հնագույն հայկական մշակույթի ուշ փուլի Հնագիտական համալիր է: Նրանում դիտվում են երեք բաղադրիչ տարրեր. հիմնական՝ Հնագույն հայկական (դամբարանախցի կառուցվածք, թաղման ծիսակարգ, խեցեղեն), ուրարտական (ղենք, մեկ խեցանոթ) և կիմերական (ծիսասարք (լկամ), թաղման ծիսակարգ): Այս տիպի Հնագիտական համալիրները կամրջող օղակներ են Հնագույն և հին հայկական մշակույթների միջև:


<sup>16</sup> Տես՝ Գ.Ա.Тирацян, նշվ., աշխ., էջ 31, 34, 35, 40-45, 71-74: Հիմնարար այս աշխատության մեջ ըստ ամենայնի դիտարկված են նաև հին հայկական մշակույթի փոխառնչությունները ուրարտական և աքեմենյան մշակույթների հետ:




ԱՂՅՈՒՍԱԿ I




1




2




4



3



5



ԱՂՅՈՒՍԱԿ II

## ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄԻ «ՍԱՀՄԱՆԱՔԱՐԻ» ՇՈՒՐԶ

Ենթադրվում է, որ Ուրարտուում գոյություն ունեւ Հողատիրության չորս հիմնական ձև՝ պետական, տաճարապատկան, համայնքային և մասնավոր:<sup>1</sup> VIII-VII դդ. Ուրարտուում գոյատեւած մասնավոր Հողատիրության մասին վավերագիր է սովորաբար դիտարկվում Արգիշթե II-ի (714/13 - 685 թթ.) Հայկականքի (Վանի) արձանագրությունը, որտեղ ասվում է հետեյալը. «Արգիշթե Ռուստորգին նետը վերարձակեց այստեղից, Գիլուրանեի անտառի առջևից, մինչև Իշպելինե Բաթուորգու այգին. 950 արմնկաչափ»<sup>2</sup> (շուրջ 494 մետր):

Այս արձանագրության տեքստից արդեն ակնառու է, որ ոչ միայն մշակովի Հողատարածությունները, այլև անտառները կարող էին մասնավոր սեփականատիրական լինել: Հայտնի է, որ ինչպես Հին Արևելքում, այնպես էլ Հայաստանում հողամասերի սահմանները հաճախ նշվում էին յուրատեսակ սահմանաքարերով: Բնական է ենթադրել, որ նման սահմանաքարերի կարիքը կար նաև Վանի թագավորությունում, որպիսիք սակայն չեն ճանաչված, թերևս այն պատճառով, որ չեն ունեցել արձանագրություններ և կամ այն պատճառով, որ այս տեսանկյունով չեն մեկնաբանված վիճաքերը:<sup>3</sup>

<sup>1</sup> Г.А.Меликашвили, Некоторые вопросы социально-экономической истории Наирн-Урарту, ВДИ, 1951, № 4, с. 31-32, И.М.Дьяконов, К вопросу о судьбе пленных в Ассирии и Урарту, ВДИ, 1951, № 2, с. 92:

<sup>2</sup> Г.А.Меликашвили, Урартские клинообразные надписи, М., 1960 (УКН), № 277. Հ.Հ.Կարադյոզյան, Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարակից երկրների մասին: Տես «Հայ ժողովրդի պատմության քրեստմատիա», հատ. 1, Երևան, 1981, էջ 87:

<sup>3</sup> Ի.Մ.Դյակոնովը և Ն.Վ.Հարությունյանը գտնում են, որ սահմանաքարերի (<sup>NA</sup> pulusinili «կոթողներ» ձևով) մասին հիշատակություն կա Կարմիր բլուրում՝ Հայտնարեթված սեպագիր աղյուսակներից մեկում (И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963 № 1, с. 46: Ն.Վ.Հարությունյան, Կարմիր-բլուրի նորագյուտ սեպագիր աղյուսակը, ՊՔՀ, 1958, № 3, էջ 212:)

Այնուամենայնիւ, կա մեկ բացառութիւն Կատեպանցի արձանագրութիւնում. «Մինուայի դուստր Թարիրիային՝ այս խաղողուտը Թարիրիախինելե (է) անունը»:<sup>4</sup>

Ուրարտական ղիցակարգում ղիցուհիները պարզորոշ ստորակարգւած են աստվածներից, մասնավորապես, ամանօրյա տոնակատարութիւնների ժամանակ ղիցուհիներին ավելի պակաս քանակի գոհեր էին մատուցւում: Նույնիսկ ամենաբարձրակարգ ղիցուհին, բոլոր ղեպքերում հիշատակւում էր աստվածուհիների թվարկումից հետո միայն, ղիցուհիները երբեք չեն հիշատակւում առանց արական աստվածութիւնների ընկերակցութեան, և որ մեր խնդրի առումով ամենակարևորն է, հայտնի է որևէ պաշտամունքային կառույց, ձոնված որևէ ղիցուհու. եղած տվյալների համաձայն, ղիցուհիներին պաշտոն էր մատուցւում իրենց ամուսինների տաճարներում:<sup>5</sup> Այսինքն, Ուրարտուում գոյութիւն չունեցող ղիցուհիներին նվիրւած տաճարներ, հետևաբար և՛ տաճարապատկան հողեր: Բնական է ենթադրել, որ եթե մի բան, որը մերժւած էր ղիցուհուն, մերժւած էր նաև մահկանացու կնոջը այսինքն, կինն Ուրարտուում, ըստ ավանդական իրավունքի, չունեցող կալվածք ունենալու և այն կառավարելու իրավունք:

Իշպուլին (825-810 թթ.) ու Մինուայի (810-786 թթ.) համատեղ գահակալութեան տարիներին ձեռնարկվեց և իրագործվեց բարեփոխումների մի ծրագիր, որն ընդգրկւում էր երկրի կենսագործունեութեան գրեթե բոլոր ոլորտները (պետական լեզու և գիր, կրոն, բանակ, չափ ու կշիռ, հող, սոցիալական փոխհարաբերութիւններ, իրավունք և այլն):<sup>6</sup> Այս բարեփոխումների ընթացքում անհրաժեշտաբար պետք է, որ գիտարկւած լինեին նաև կնոջ ունեցած իրավունքների՝ այդ թվում նաև անշարժ գույք ունենալու և այն տնօրինելու իրավունքի խնդիրը: Եվ ինչպես ակնառու է Կատեպանցի արձանագրութիւնից, այդ իրավունքը կնոջը տրվել է:

<sup>4</sup> УКН, № 111. Н.В.Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, № 137:

<sup>5</sup> Ս.Գ.Համայակյան, Ուրարտական Իվարչա աստվածութեան մասին, «Աշխատութիւններ Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի», Երևան, 1981, էջ 20:

<sup>6</sup> Ս.Գ.Համայակյան, Իշպուլին և Մինուա արքաների ռազմավարական բարեփոխումների շուրջ – «Ազգ - պետութիւն - բանակ», Երևան, 1998, էջ 72-73:

Այս առումով ուշադրամ է, որ չնայած Կատեպանցի արձանագրության տեքստը կրկնվում է անգամ (այսինքն, տեղի սակավութունն չի եղել), արձանագրությունում չի նշվում, թե ու՞մ հրամանով է փորագրվել այն (Ուրարտուում վիճադիր արձանագրություններ կազմելու իրավունքը վերապահված էր միայն արքային): Սա էլ հազվագեպ մի երևույթ էր ուրարտական իրականության համար: Արդյո՞ք այս կերպ չի շեշտվել այն, որ Թարիրիան Թարիրիախինելիին տնօրինում էր ոչ թե հոր շնորհիվ ստացած իրավունքով, այլ ըստ օրինի:

Երկու խոսք Թարիրիախինելի մասին. Թարիրիախինելեն գտնվում էր այնտեղ, ուր և արձանագրությունը: Արձանագրությունը փորագրված է կրաքարե մի հազթ ժայռաբեկորի վրա, որը հնարավոր չէր տեղափոխել: Ըստ այդմ, Թարիրիախինելեն գտնվել է Հայոց Զոր դաշտում, Խոշաբ (Անգղ) գետի հովտում, փառահեղ Արտամետից ոչ հեռու, «Մինուայի ջրանցքի» («Շամիրամի առվի») ակունքի մոտ, Կատեպանց գյուղի տարածքում, տերության ամենագեղատեսիլ ու առողջարար վայրերից մեկում:

Այստեղից բխող ջրանցքը սնուցող աղբյուրի հսկայական ակը գտնվում է մի ժայռոտ լեռան ստորոտում, մի քանի հարյուր մետր բարձրության վրա: Երջակա ժայռերի բազում ճեղքերից բխում են ուրիշ աղբյուրներ, որոնք քարոտ գետնի վրայով հոսում են դեպի Խոշաբ:

Մինուայի հրամանով ջրանցքը սնուցող ջրերը ամբարվել են մի մեծ ջրամբարում և մղվել դեպի Վան առվով, որն ունի ավելի քան 70 կմ երկարություն, 4,5 մ լայնք, 1,5 մ խորություն և վարկյանում տանում է շուրջ 1500 լ ջուր:<sup>7</sup>

Կատեպանցում այժմ էլ պահպանված են ամրոցի (Կատեպանների բերդի) ավերակները և «չորս սյուներով և տասներկու խցիկներով կռանափոր քարայրը, որի որմերից մեկին փորագրված է 14 տողանոց մի սեպագիր արձանագրություն»,<sup>8</sup> որը պատմում է «Մինուայի ջրանցքի» շինարարության մասին: Գարեգին Սրվանձտյանցը հղելով առ թովմա Արծրունի, գտնում է, որ խոսափելով Երվանդ արքայից այս քարայրում են ապաստանել Սմբատն ու Արտաշեսը: Ավելի ուշ,

<sup>7</sup> К. Ф. Леман-Хаупт, Вступительная лекция по истории и культуре халгов. — "Труды Тбилисского гос. ун-та", VI, 1937, с. 248-251:

<sup>8</sup> Գարեգին Սրվանձտյանց, Համով-հոտով, «Երկիր», հատ. 1, Երևան, 1978, էջ 384-386:

Արտաշեսը հիշում է իր՝ փախստականի, կյանքի օրերը, կառուցապատում և այգեստան է դարձնում այս տեղանքը, իսկ մոտակայքում, բարձր մի աշտարակի վրա տեղադրում է Աստղիկ դիցուհու պատկերը: Իսկ աշնանը Սաթենիկի հետ գալիս է այստեղ գրոսնելու:<sup>9</sup>

Այս փոքրիկ հովտում, Հայոց Ջորում, միախառնվել են չորս տիկնանց կերպարներ՝ Աստղիկի, Շամիրամի, Սաթենիկի ու Թարիրիայի: Եվ մեր խնդրի առումով ուշագրավ է առանձնապես այն դրույցը, որտեղ Շամիրամը տղամարդու հագուստ հագած և տղամարդու իրավունքներն իրեն վերապահած մի հերոսուհի է ու տիրակալ: Արքայի՝ կին լինելու մասին գաղտնիքը բացահայտում է մի ներքինի երիտասարդ, ու սարսափահար փախչում է. Շամիրամը իր հույսքերը պարսատիկ դարձնելով, մի հաղթ ժայռ է նետում փախչողի ետևից «Ծամ քարը» ընկնում է Արտամետի ձորը:<sup>10</sup> Գարեգին Սրվանձտյանցի վկայությամբ, հենց կատեպանցի հարևանությամբ է մատնացույց արվել այդ քարը իր ժամանակներում:<sup>11</sup>

Եվ արդյո՞ք նորակառույց Ջրանցքի ակունքներին տիրող Թարիրիա տիկնոջ մասին եղած հիշողությունները չեն պատճառը «Մինուայի Ջրանցքի» շինարարությունը մի կնոջ վերադրելու. տիկին, ում մասին հիշողությունները ավելի ուշ միաձուլվել են «Շամիրամական» դրույցներին:

Եթե կապ կա Շամիրամի և Թարիրիայի կերպարների միջև, ապա մեջ բերված առասպելախառն դրույցը վկայում է այն մասին, որ ժողովուրդը յուզ կալվածքը ինքնուրույն կառավարող կնոջ կերպարը արտառոց է համարել. այսինքն, իր ժամանակների համար այն եղել է բացառիկ մի երևույթ. ուրեմն և Իշպուհների և Մինուայի բարբիտոսման փորձն այս առումով, հաջողություն չի ունեցել:

<sup>9</sup> Գարեգին Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 385-386: Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ա, 5-ը:

<sup>10</sup> Ա. Ղանադանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 77 և 70:

<sup>11</sup> Գարեգին Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 384:

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ  
ՇՈՒՐԶ

Մ.թ.ա. VII դ. կեսերին, Ասորեստանի դեմ պայքարի ընթացքում, Քարքաշչի տիրակալ Կաշտարիտիին հաջողվեց միավորել Իրանական բարձրավանդակի Հյուսիսի փոքր թագավորությունները և ստեղծել մեկ միասնական պետություն՝ Մեդական թագավորությունը: Կաշտարիտի սկսած գործը շարունակեց նրա որդին Կիաքսարը, որը մ.թ.ա. 612 թ. դաշնակից բաբելոնացիների հետ միասին գրավեց Նինվեն: Կաշտարիտի հայրենիքը, Քարքաշչին, նշանակում է «Քասիտների բնակավայր» (ենթադրվում է, որ այն էկբատանայի շրջանում էր) (8, էջ 273-316): Կաշտարիտի անվանը իրանական ծագում են վերագրում (8, էջ 277), սակայն նկատենք, որ այն զուգահեռներ է ի հայտ բերում նաև քասիտական թագավորական դինաստիայի արքայացանկում, որտեղ առկա է Կաշտիլիաշ (Կաշտիրիաշ) անունը: Քսենոփոնի վկայություն համաձայն Մեդիայի թագավոր Կիաքսարը հնագույն ծագում ունեցող թագավորական տոհմից էր (Xenoph., *Cyrop.*, V, V, 8):

Մ.թ.ա. 550 թ. Կաշտարիտի դինաստիայից իշխանությունը անցնում է Կյուրոսին: Կյուրոսի (Կուրաշ II) տոհմը, համաձայն Աշուրբանապալի տարեգրությունների, թագավորում էր Պարսուաշում (Քարշում): Պարսուաշը գտնվում էր Վանա լճից հարավ, Փոքր Զաբի և Դիալայի ակունքների շրջակայքում: Հյուսիսից այն սահմանակից էր Մաննային, հարավից Բիթ-Համբանին, իսկ արևելքից Մեդիային (4, էջ 55): Պարսուաշը և Մաննան Լուլունների երկրի թագավորություններից էին և առաջին անգամ հիշատակվում են մ.թ.ա. IX դարի կեսերին, Սալմանասար III-ի տարեգրություններում (АВИИУ, № 28): Պարսուաշի տեղանունների ուսումնասիրությունը հիմք է տվել եզրակացնել, որ նրա բնակչությունը պատկանում էր Զագրոսի նախալեռների բնիկների թվին և դժվար թե առնչություն ունենար իրանացիների հետ (ВДИ, 1951, № 2, с. 334, КОМ. 13 - И.Дьяконов, КОМ. К АВИИУ): Փորձերը այս տեղանունը ստուգաբանել իրանական «ծայրամաս, եզր» բառով (8, էջ 69) և փորձերը այն կապել պարսիկների ցեղանվան հետ, մեկնաբանելով որպես «հաղթանգամ» (7, էջ 42), համոզիչ չեն

Թիվում: «Պարս» բառը չունի հուսալի իրանական ստուգաբանութիւն:

Բաբելոնյան «Մանիֆեստ»-ը Կյուրոսին կոչում է Անշանի թագաւոր: Աքադացիների համար Անշանը համարժեք էր այնպիսի աշխարհագրական անվանումների, ինչպես «Գուտիում»-ը և «ուժման-մանդա»-ն, որով նրանք կոչում էին Զագրոսի նախալեռների բնիկներին (8, էջ 294, ծանոթ. 1): Մ.թ.ա. XXII դ. Լագաշի տիրակալ Գուդեան նրանց անվանում է «ուժման Անշան» (17, էջ 25): Կյուրոսը իրեն Անշանի թագաւոր է կոչում լոկ հավատարիմ մնալով Բաբելոնի պատմական ավանդույթներին (8, էջ 294, ծանոթ. 1), և Պարսուաշը կապ չունի էլամի արևելքում գտնվող Անշանի հետ: Կյուրոս Մեծի, նրա նախնիների և նրա որդիների անունները (Չիշպիշ, բաբելոնյան տարբերակով՝ Շիշպիշ, հունարեն՝ Թեիսպես, Կուրաշ I, Կամբուժիյա I, Կուրաշ II, Կամբուժիյա II, Բարգիյա, բաբելոնյան տարբերակով՝ Բարգիյա) իրանական չեն (1, էջ 340; 6, էջ 103), այլ անկասկած տեղական ծագում ունեն: Դրանք կազմված են տեղական աստվածութիւնների անուններից. Կուրաշ՝ Կուրի «աստված, տիրակալ» (տես 16, էջ 36) բառից, Կամբուժիյա՝ Հումբան (Համբան) աստծու (տես 3, էջ 80, ծանոթ. 3) անունից: Հումբան աստծու անունով Բեհիսթունի շրջանը կոչվում էր Բիթ-Համբան (աքադերեն), Կամպանդա (հին պարսկերեն) և Կամբադենա (հին հունարեն) (17, էջ 3; 6, էջ 20): Այս սրբավայրը հին հույներին հայտնի էր Բագիստանոն անվամբ (Diod., II, 13(1-2)) և ակնհայտ է, որ Բագան,<sup>1</sup> որի պաշտամունքը հնագույն ժամանակներից վկայված է Զագրոսի բնակչութիւն մոտ, նույնական է Հումբան աստծուն: Այդ տարածքում դեռևս մ.թ.ա. 3 հազ. I կեսից այդ աստծու անունը արձանագրված է որպես թագաւորական անունների բաղադրիչ մաս (Անուբանինի) (3, էջ 82): Բարգիյա անունը, հավանաբար, կազմված էր Անշանի հովանաւոր Բարթի (Պարթի) աստվածուհու (տես 14, էջ 39, 40, 144; 3, էջ 95) անունից, որը, ըստ երևույթին, Զագրոսի հովանաւոր խաղողի վազի և գինու աստվածուհու անուններից

<sup>1</sup> Բախտական Բուգաշ անունով դիցաբանական կերպարը ընդհանրական է կուտիական Բագեշ (արձանագրված կուտիական Ինիմարագեշ (մոտ մ.թ.ա. 2170 թ.) թագաւորական անվան մեջ), հին հնդկական Բհագա, հին պարսկական Բագա, հին փոյուգիական bagun «բախտ», Բագայոս (Ջևսի փոյուգիական անվանումը), ռուսերեն "бог", հայերեն «բախտ», նուրիստանյան Բագիշտ անվանումների հետ:

էր,<sup>2</sup> և որը, ամենայն հավանականութեամբ, նույնական է Արդինի-Մուծածիրի աստվածուհու՝ Բագբարթուրի անվանը: Այս անունից կաղմված թագաւորական անվանաբանութիւն վկայված է ինչպէս Էլամում (Էպարդյանների դինաստիան), այնպէս էլ Մեդիայում (Էպարդի) (3, էջ 96): Ուշագրաւ է, որ Կյուրոսն իր մի որդուն կոչել է Հումբան աստծու անունով, իսկ մյուս որդուն նրա զույգի՝ Բարթի աստվածուհու, հետևաբար, Կյուրոս Մեծի հովանավոր աստվածներն էին Հումբանը և Բարթին:

Քանի որ Հին իրանական հնագույն գիրը Դարեհ I-ի Բեհիսթունյան արձանագրութիւնն է, Կյուրոս Մեծի մեզ հասած իրաներեն արձանագրութիւնները ավելի ուշ շրջանի կեղծվածքներ են (6, էջ 32-60): Աքադերենի բաբելոնյան բարբառով գրված իր արձանագրութիւններում Կյուրոսը իրեն երբեք չի անվանում արիացի և չի հիշատակում Ահուրամազդային (6, էջ 250): Կյուրոս Մեծի դամբարանը իր ճարտարապետական հորինվածքով ունի տեղական հնագույն ավանդույթներ և արմատապէս տարբերվում է Դարեհ I-ի և նրա հաջորդների դամբարաններից:<sup>3</sup>

<sup>2</sup> Մ.թ.ա. 3 հազ. սկզբի շումերական էպիկական ասքերում հիշատակված Արատտա երկրի, որը գիտնականների մեծ մասը հակված են տեղադրել իրանական բարձրավանդակում (9, էջ 247; 16, էջ 20-21) և հովանավոր աստվածները Դումուզին և Գեշտինաննան (շումերերեն «Երկնքի խաղող») էին: Միջագետքի հարավում այդքան վաղ ժամանակներում խաղող չէր աճում, հետևաբար «Երկնքի խաղող» անվանումով աստվածուհին չէր կարող միջագետքյան ծագում ունենալ: Զագրոսի նախալեռները խաղողագործութեան և գինեգործութեան հնագույն օջախն էին: Ուրմիա լճից հարավ, Հաջի Փիրուզ Թեփե բնակավայրի (մ.թ.ա. 5400-5000 թթ.) պեղումներից հայտնաբերվել է առ այսօր հայտնի հնագույն գինին (19, էջ 33): Սա ենթադրում է Զագրոսի նախալեռներում խաղողագործութիւնը և գինեգործութիւնը հովանավորող աստվածութեան հնագույն պաշտամունք: Այս առումով ուշագրաւ է Հին Հունական խաղողագործութեան և գինեգործութեան աստված Դիոնիսոսի արխաիկ մարմնավորումներից մեկի՝ Զագրեփի անվան ակնհայտ կապը Զագրոս լեռնանվան հետ (2, էջ 157): Այսպիսով Դիոնիսոս-Զագրեփի պաշտամունքը Հնաց Զագրոսի լեռներից պետք է ծագած լինի, և շումերական Գեշտինաննան անվամբ հայտնի աստվածուհին նրա իգական մարմնավորումն էր:

<sup>3</sup> Լուրիստանի վաղ բրոնզի ժամանակաշրջանի դամբարաններից շատերը ունեն երկթեք ծածկ (Позребова М., Закавказье и его связь с Передней Азией в скифское время, М., 1984, էջ 166): Այդ ավանդույթը շարունակվում է նաև մ.թ.ա. I հազ., ինչպէս վկայում են Միալիի մ.թ.ա. X-VIII դ.դ. դամբարանադաշտի պեղումները (7, էջ 56-57), և Կյուրոս Մեծի դամբարանը, որի երկթեք տանիքի և Մուծածիրի տաճարի ծածկի նմանութեանը ուշագրութիւնն է դարձրել է. Հերցֆելդը (17, էջ 16):

Կյուրոս Մեծի կառուցած քաղաքը, որը Հին հունական պատմիչները սխալմամբ անվանում են Պասարգադ, իրականում կոչվում էր Պատրակատաշ և ոչ մի կապ չունի իրանական պասարգադ ցեղի, որին պատկանում էր նաև Աքեմենյանների տոհմը, անվան հետ (7, էջ 243): Պատրակատաշ անունը համեմատելի է ուրարտերեն *patari* «քաղաք» բառին, որը Լեհման-Հաուպտը կապում էր Լիկիայի Պատարա քաղաքի անվան հետ, իսկ լիկիացիները, համաձայն հունական ավանդությունների, գաղթել էին Կրետեից (Herod., I, 182; Strabo, XIV, III, 3, 6, 10; 11, էջ 47): Հնարավոր է, որ նույն արմատից է կազմված նաև քասիտ արքաների հայրենի տարածքի՝ Պաղան (Պաղիր)–ի անվանումը: Պատահական չէ, որ Պասարգադի աշտարակաձև կառույցը (այսպես կոչված Զնդան–ի Սուլեյման), Նաղշ–ի Ռուստամի համանման կառույցի (այսպես կոչված Քաաբա–ի Զարդուշտ) հետ մեկտեղ հիշեցնում են ուրարտական «սուսի» տաճարները (7, էջ 245, 328–329): Ամենայն հավանականությամբ, Պասարգադի և Նաղշ–ի Ռուստամի աշտարակաձև կառույցները տաճարներ էին (7, էջ 328–329): Հայտնի է, որ հնդիրանացիները տաճարներ չէին կառուցում: Իրանական աշխարհում տաճարները ի հայտ են գալիս միայն ուշ արեմենյան կամ նույնիսկ հելլենիստական ժամանակաշրջանում (Herod., I, 131–132; տես *В.Гайбов, Г.Кошеленко, Тоголок-21 и проблемы религиозной истории гревней Маргуаны, ВДИ, 1989, №1, с.172-173; Б.Литвинский, Протоиранский храм в Маргуане?, ВДИ, 1989, №1, էջ 177-178*): Հետևաբար, հիշյալ պաշտամունքային կառույցները, ինչպես նաև Մեդիայի տարածքում պեղված մ.թ.ա. VIII դ. թվագրվող տաճարը (Նուշ–ի Զան–թեփե) (7, էջ 88–90) չէին կարող իրանական լինել:

Մ.թ.ա 539 թ. Բաբելոնը առանց դիմադրություն հանձնվեց Կյուրոսին: Նա այնտեղ կատարեց բոլոր Հին թագավորական ծեսերը, իշխանությունը ստանալով Մարդուկ աստծու ձեռքից, ինչը Բաբելոնի արքաները արդեն վաղուց խուսափում էին կատարել, և տեղի ժողովուրդը ցնծություններով ընդունեց դա: Կյուրոսը պահպանեց Բաբելոնյան թագավորությունը: Բռնի ուժով Բաբելոն տարաբնակեցված ժողովուրդներին Կյուրոսը թույլ տվեց վերադառնալ իրենց հայրենի երկրները, ինչով շահեց նրանց համակրանքը: Հրեաները, մասնավորապես, նրան անվանեցին իրենց փրկիչ: Այնուհետև արևմտյան բոլոր երկրները մինչև Եգիպտոսի սահմանը ինքնակամ ենթարկվեցին Կյուրոսին, քանի որ Փյունիկիայի, Բաբելոնի և Փոքր Ասիայի

առևտրականները շահագրգռված էին լինելու Հզոր մեծ պետության կազմում, անվտանգ ճանապարհներով, Արևմուտքի և Արևելքի միջև տարանցիկ առևտուրը իրենց ձեռքը վերցնելու համար:

Մ.թ.ա. 530 թ. հոր դահլը ժառանգած Կամբյուսեսը շարունակեց հոր քաղաքականությունը: Անտիկ հեղինակների պատմած Կամբյուսեսի կատարած վայրագությունները Եգիպտոսում չեն հաստատվում եգիպտական աղբյուրների կողմից: Իրականում Կամբյուսեսը հարգել է բոլոր տեղական սովորույթները և պաշտպանել տաճարները (6, էջ 108-117, 251, ծանոթ. 68): Չի կարող համապատասխանել իրականությանը նաև մեղադրանքը, իբր Կամբյուսեսը սպանել էր իր եղբորը՝ Բարգիլային: Եգիպտոս արշավելուց առաջ Կամբյուսեսը պետք է ապահովեր հաջորդականությունը իրեն ժառանգորդ նշանակելով: Նա զավակ չունեի և միակ ժառանգը Բարգիլայն էր (Herod., III, 66; I, էջ 344): Բարգիլայն թագադրվում է մ.թ.ա. 522 թ. գարնանը, Կամբյուսեսի մահից հետո (6, էջ 141-142, ծանոթ. 89):

Այդ ժամանակը շնորհիվ էլամի արևելքում, Պարսա կոչվող վայրում բնակվում էին իրանացիներ, որոնց գլուխ կանգնած էր, հավանաբար, Աքեմենյանների տոհմը (Herod., I, 125; I, էջ 339; 7, էջ 42-43): Տեղանքի անունից այստեղ բնակվող իրանացիները և նրանց երկիրը անվանվում էին Պարսա: Հին հույները, իսկ հետագայում նաև մյուս ժողովուրդները այս անունը տարածեցին բոլոր իրանացիների և նրանց ողջ երկրի վրա (7, էջ 249): Դարեհ I-ը վկայում է, որ ինքը պատկանում է Կյուրոսի տոհմին: Սակայն գիտնականները ուշադրություն են դարձրել, որ Դարեհի և նրա նախնիների անունները բացահայտ իրանական են: Դարեհը Հախամանիչին և իր մյուս նախնիներին արհեստականորեն է կցել թագավորական ընտանիքին, իր բռնազավթումը օրինականացնելու համար (1, էջ 338-340): Դարեհ I-ը և Քսերքսեսը իրենց արձանագրություններում պարտադիր հիշատակում են Ահուրամազդային և ընդգծում են, որ իրենք «արիացի են, արիական սերմից» (12, էջ 117, ծանոթ. 5): Թվում է, թե Աքեմենյանների դինաստիայում ամենատարածվածը պետք է լիներ պետության հիմնադիրի՝ Կյուրոսի անունը, սակայն այդ անունը նրանց տոհմում բացակայում է, և միայն Դարեհ II-ը այդպես կոչեց իր կրտսեր որդուն:

Բեհիսթունյան արձանագրության և անտիկ հեղինակների տվյալների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած Դարեհի հավաստիացումներին, որ ինքը ճշմար-

տությունն է ասում, իրականում Դարեհը և իր համախոհները սպանել են ոչ թե իշխանությունը զավթած մոզին, այլ օրինական թագավորին՝ Բարդիայային (I, էջ 337-346; 6, էջ 121-233): Անտիկ հեղինակների տեղեկությունները այս դեպքում չեն կարող արժանահավատ համարվել, քանի որ նրանք հաղորդում են Աքեմենյանների պաշտոնական տեսակետը: Ուշագրավ է, որ ժամանակագրական առումով այս իրադարձություններին ամենից մոտ կանգնած հույն գրողը՝ Էսքիլեսը չի կասկածում Դարեհի նախորդի լեգիտիմությունը (6, էջ 134-135): Դարեհը մանրամասն պատմում է, թե ինչպես իր դեմ ապստամբած երկրների առաջնորդներին խոշտանգումների է ենթարկել և սպանելուց հետո նրանց մարմինները ժողովուրդին ի ցույց դրել: Թվում է, նախ և առաջ նա այդպես պետք է վարվեր Գառլամատայի մարմնի հետ, սակայն Դարեհը տարօրինակ կերպով լռում է սպանված Գառլամատայի մարմնի հետագա ճակատագրի մասին: Չվերագրելով Դարեհին չափազանց հարուստ երևակայություն, ավելի ճիշտ է ենթադրել, որ մոզ Գառլամատան և Բարդիայան նույն անձնավորությունն էին, և պատահական չէ, որ Հերոդոտոսը պատմում է, թե նրանք երկուսն էլ նույն անունն էին կրում և չափազանց նման էին իրար (Herod., III, 61), ինչը տարօրինակ է երկու իրար հետ ազգակցական կապ չունեցող մարդկանց դեպքում: Ենթադրվում է, որ Հերոդոտոսի հիշատակած Պատիզեյտը (III, 61, 63) (իրան. «վերակացու») ոչ թե մոզի անունն էր, այլ Բարդիայի տիտղոսը (6, էջ 122, ծանոթ. 7): Եվ իրոք, այս բառը համադրելի է «Կառավարիչ» տիտղոսին, որը կրում էր Էլամի գահաժառանգը (14, էջ 86):

Ամենայն հավանականությամբ, Բարդիայան պայքար էր սկսել Աքեմենյանների դեմ: Այդպես կարելի է մեկնաբանել Դարեհի այն խոսքերը, թե Գառլամատան ձգտում էր զավթել իրենց տունը և ավերել էր (հավանաբար Աքեմենյանների տոհմական) սրբավայրերը (Beh., I, 61-71): Դարեհին և իր տոհմակիցներին հեշտ չէր ի կատար ածել թագավորի սպանությունը: Հերոդոտոսի պատմածը, իբր թագավորի պահակախումբը նրանց թույլ է տվել ազատ ելումուտ անել պալատում (Herod., III, 77), անհավանական է:

Բեհիսթունյան արձանագրության տվյալների համաձայն՝ Դարեհը և վեց պարսիկները թագավորին սպանեցին մ.թ.ա. 522 թ. բազայադիչ ամսվա 10-ին (սեպտեմբերի 29-ին) Սիկայահուվատիչ ամրոցում, Նիսայա մարզում, Մեդիայում (Beh., I, 48-

61): է. Հերցֆելդը Սիկայահավանտի լեռնաշղթայում է Sikayahvant և նույնացնում է ներկայիս Սակավենդի (Քերմանշահից հարավ) և ասորեստանյան շաբաթներին Սանգիրուտուտի հետ (18, էջ 206), որը սահմանակից էր Բարդիսայի ժառանգական երկրին՝ Պարսու-աշին (4, էջ 166): Յ.Մարկվարտը Սիկայավուհատի լեռնաշղթայում է ներկայիս Հարունաբադի շրջակայքում և համարում է, որ Նիսայա մարզի տարածքը համընկնում էր պարթևական Մեդիա նորագույն մարզի տարածքի հետ (3, էջ 295, ծանոթ. 2): Հերո-դոտոսը հաղորդում է, որ այդ սպանությունը օրը պարսիկների մեծագույն տոնն էր և կոչվում էր «Մոգերի կոտորած» (Herod., III, 79): Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անտիկ հեղինակների կողմից սխալմամբ «Մագոֆոնիա» ընկալ-ված տոնը իրականում կոչվում էր «Բագադան» («Բագայի սպանություն»)։ Հետագայում այս տոնը վերանվանվում է «Միհրադան»-ի (6, էջ 151-153, ծանոթ. 130, 131): Դա աշանային գիշերահավասարի տոնն էր և նվիրված էր խաղողի բերքահավաքին և գինու պատրաստմանը (13, էջ 82, 616; 10, էջ 160-161): Էլամում այս տոնը նվիրված էր Մեծ Մայր-աստվածուհուն, տեղի էր ունենում նորալուսնի օրը և կոչվում էր «Արյունահեղություն օր» (14, էջ 57): Դոմոլգիի և Գեշտի-նանայի մասին շումերական առասպելի համաձայն՝ կես տարի Դոմոլգին պետք է մնար անդրաշխարհում, իսկ հաջորդ կես տարին՝ Գեշտինանան։ Հետևաբար, աշանային գիշերա-հավասարի տոնը, որը նվիրված էր խաղողի վազի և գինու աստվածուհուն, կոչվում էր «Բագայի (աստծու) սպանություն», քանի որ, որպեսզի երկիր վերադառնար խաղողի վազի և գինու աստվածուհին, պետք է նրա աստվածային զույգը իջներ անդրաշխարհ։ Դավադիրները ընտրեցին ամենից հարմար պահը թագավորի սպանության համար<sup>4</sup>։ Գառնատա անունը կարելի է մեկնաբանել որպես «հարեցուցիչ ըմպելիքը գովերգող» (տես Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հ. I, Եր., 1971, էջ 582-583 («գով»), Հ. III, Եր., 1977, էջ 272 («մատուռակ»))։ Մեկ այլ տեղեկության համաձայն մոգի անունը Սպենտոդատ էր (6, էջ 124-125): Այս անունը կարելի է թարգմանել «հեղում կատարելու համար կարգված» (հնդեւր. \*sp<sup>h</sup>ent «կատարել հեղում», էլամերեն tatta «դնել, նշանակել», հնդեւր. \*d<sup>h</sup>eH արմատից) (5, էջ 18, 19): Հաշվի առնելով, որ Բարդիսայի անունը

<sup>4</sup> Որոշ գիտնականներ գտնում են, որ դավադիրները որոշել էին թագավորին սպանել Միհրադան տոնի ժամանակ, քանի որ դա միակ օրն էր, երբ թագավորը կարող էր հրապարակորեն հարբել (3, էջ 310, ծանոթ. 4):

կաղմված էր Բարթի աստվածուհու անունից, կարելի է ենթադրել, որ նա նվիրված էր այդ աստվածուհուն, նրա քուրմն էր և պետք է գլխավորեր ծիսակատարությունները: Նիսայան, որտեղ կատարվեց սպանությունը, հիշեցնում է առասպելական Նիսան՝ Դիոնիսոսի հայրենիքը, այսինքն գինու աստվածուհու պաշտամունքային կենտրոնն էր: Այդ ծիսակատարությունները վաթխանալիաների բնույթ էին կրում և ուղեկցվում էին օրգիաներով՝ գիշերային գաղանի ծեսերով, որոնք տեղի էին ունենում լեռների վրա և անտառային հովիտներում, երաժշտության, ջահերթի և բլթացնող պարերի ուղեկցութամբ (տես Իրցաբանական բառարան, Եր., 1985, էջ 257): Զագրոսի անտառներում գիշերային ծիսակատարությունների մասին ակնարկում է Տակիտոսը (Ann., XII, 13): Ամենայն հավանականութամբ, յոթ պարսիկները թագավորին և նրա մերձավոր անձանց (Beh., I, 48-61) սպանել են Զագրոսի անտառներում, նորալուսնի տակ գիշերային օրգիայի ժամանակ: Այդ ծիսակատարություններին օտարների ներկայությունը արգելվում էր: Դատելով Հերոդոտոսի և Կտեսիասի պատմածից, կարելի է ենթադրել, որ դավադիրներին օգնել է Բարդիսայի շրջապատից ինչ-որ կին (3, էջ 310, ծանոթ. 4):

Թագավորի սպանությունը ցնցեց ողջ Ասիան: Նրա մահը դառնորեն ողբում էին բոլոր ասիական ժողովուրդները, բացառութամբ պարսիկների (Herod., III, 67): Կյուրոսի ըստեղծած տերության բոլոր երկրները ապստամբեցին բռնատիրոջի դեմ (1, էջ 340): Դարեհը, որը պետք է նախօրոք պատրաստ լիներ գեպքերի նման ընթացքին, գաժանորեն ճնշեց ապստամբությունները, բաժանեց տերությունը սատրապությունների և հարկեր դրեց, իսկ Կյուրոսի և Կամբյուսեսի ժամանակ, ինչպես վկայում է Հերոդոտոսը, հարկեր չկային, այլ միայն կամավոր նվերներ (Herod., III, 89):

Դարեհ I-ը գահը ժառանգություն թողեց ոչ թե ավագ որդուն, այլ Քսերքսեսին: Այդ րայլով պարսիկ Աքեմենյանները դառնում էին տեղի հնագույն թագավորական տոհմերի օրինական ժառանգները, քանի որ Քսերքսեսը Կյուրոս Մեծի թոռն էր, նրա ազգական Ատոսսայի որդին (Herod., VII, 2-3): Աքեմենյան արքաները պահպանեցին իրենց նախորդների իշխանության ատրիբուտները: Դրանց թվում էին խաղողի վազը, պատրաստված ոսկուց, որի ողկույզները կանաչ բյուրեղներից էին, հնդկական սուտակներից և այլ թանկարժեք քարերից. այդ խաղողի վազը ձգված էր Աքեմենյան թագավորների մահճի գլխավերևում (Herod., VII, 27; Athen.,

*Deipnosoph.*, XII, 514 f, XII, 539 d), և անշուշտ, խորհրդանշում էր խաղողի վազի և գինու գիցուհուն, որի աստվածային ամուսնու երկրային մարմնացումն էր թագավորը, և ոսկե սոսին (*Herod.*, VII, 27; *Athen.*, *Deipnosoph.*, XII, 539 d), որը պետք է խորհրդանշեր աստվածուհու զուգակցին: Աքեմենյանների պատմուճանի անվանումը՝ սարապիս (*Xenoph.*, *Cyrop.*, VIII, III, 13; Ксенофонт, *Киропедия*, М., 1976, примечания к гл. VIII, р. 316), նույնական է էլամական սախարպի բառին (3, էջ 97), իսկ Աքեմենյանների խուլրի անվանումը՝ կիդարիս (*Athen.*, *Deipnosoph.*, XII, 514a), հավանաբար, ծագում է քասիտական պատերազմի աստծու՝ Գիդարի անունից:

Եւ այսպես, Ասորեստանյան պետութւյան փլատակների վրա կաղմավորված Մեդական թագավորութւյան, այնուհետև Կյուրոս Մեծի տերութւյան հիմնադիրները Ջագրոսի նախալեռների հնագույն ժողովուրդներից էին: Այդ ժողովուրդները դեռևս մ.թ.ա. III հազ. սկզբից ունեին իրենց պետութւյունները և կարևոր դեր էին կատարում Առաջավոր Ասիայում: Դարեհ I-ի պետական հեղաշրջման հետևանքով Աքեմենյանների իրանական տոհմի իշխանութւյան դալուց հետո միայն իրանական տարրը աստիճանաբար սկսեց գերակշռել իրանական բարձրական-դակում:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ադոնց Ն., Հայաստանի պատմութւյուն, Եր. 1972:
2. Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեւրոպական առասպելաբանութւյան համատեքստում և հայոց ազգածնման խնդիրը, Եր., 1997:
3. Алиев И., История Мидии, Баку, 1960.
4. Арутюнян Н., Топонимика Урарту, Ер. 1985.
5. Гамкрелидзе Т., Иванов В., Древняя Передняя Азия и индоевропейская проблема. Временные и ареальные характеристики общиндоевропейского языка по лингвистическим и культурно-историческим данным, ВДИ, № 3, 1980.
6. Дандамаев М., Иран при первых Ахеменидах (VI в. до н.э.), М., 1963.
7. Дандамаев М., Лукошин В., Культура и экономика древнего Ирана, М., 1980.

8. Дяконов И., *История Мидии от древнейших времен до конца IV в. до н.э.*, М.-Л., 1956.
9. Канева И., *Шумерский героический эпос как исторический источник*, ВДИ, 1964, № 3.
10. Луконин В., *Искусство Древнего Ирана*, М., 1977.
11. Пиотровский Б., *Ванское царство*, М., 1959.
12. Струве В., *Арийская проблема*, Советская этнография, 1947, № 6-7.
13. Фирдоуси, *Шахнаме*, т. 1, М., 1957.
14. Хишц В., *Государство Элам*, М., 1977.
15. Шумерский героический эпос, ВДИ, 1964, № 4.
16. Юсифов Ю., *Ранние контакты Месопотамии с северо-восточными странами (приурмийская зона)*, ВДИ, 1987, № 1.
17. Herzfeld E., *Archaeological History of Iran*, London, 1935
18. Herzfeld E., *Iran in the Ancient East*, London – New York, 1941.
19. McGovern P., *Vine for Eternity*, *Archaeology*, July/August, 1998.

## ՀԻՆ ԱՐՏԱՇԱՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ

Արտաշատի պեղումների շնորհիվ հնարավոր եղավ ուսումնասիրել Հայաստանի անտիկ շրջանի քաղաքաշինութունը: Առաջին հերթին անհրաժեշտ էր որոշել քաղաքի տեղադրությունը, սահմանները, որը կարևոր նշանակություն ունի ուսումնասիրություն համար:

Թեև Ստրաբոնի (XI, 14, 6), Տակիտոսի (Ann., XIII, 39), և Մովսես Խորենացու (II, 49) և այլ հեղինակների վկայությունները հուշում են Արտաշատի գտնվելու վայրը, որը սակայն, երկար ժամանակ անորոշ է եղել: Հայտնվել են տարբեր կարծիքներ: Դրան նպաստել են Արտաշատի և V դ. երկրորդ կեսին մարզպանական Հայաստանի կենտրոն դարձած Դվինի, իրարից ընդամենը 10-15 կմ հեռավորության վրա լինելը, և Դվինի մոտ գտնվող Արտաշատ-Արտաշար բնակավայրի առկայությունը: Թյուրքիմացություն պատճառ է դարձել նաև Արտաշատը Արաքսի և Մեծամորի միախառնման տեղում կառուցված լինելու մասին Մովսես Խորենացու վկայությունը, քանզի VII դ. Մեծամորը փոխելով իր հունը՝ Արաքսին է խառնվում և որ Վիրապից 25-30 կմ դեպի արևմուտք: Եփոթություն է առաջացրել նաև Փալատոս Բուզանդի (III, 8) վկայությունը, թե Դվին բլուրը «...գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում»: Ուսումնասիրողներն ու ճանապարհորդները Արտաշատի գտնվելու վայրը ցույց են տվել Արտաշատ-Արտաշարի տեղում: Արտաշատի տեղադրության հարցը լավագույնս քննարկել է Ա.Շահնազարյանը, որը ուսումնասիրել է Մեծամորի և Արաքսի հավանական հուները, մ.թ.ա. II դ. նրանց միախառնվելու վայրը<sup>1</sup>: Թ.Ա.վդալբեգյանը, Արաքսի հնագրայան հունի հարցին նվիրված իր աշխատանքում գրում

<sup>1</sup> *Աс. Шахназарян*, Двин, Историко-географический очерк, Изг-во Армфан, Ереван, 1940, с. 8-14; Ա. Շահնազարյան, Սև ջրի (Մեծամորի) ստորին հոսանքի ուղղությունը նախկին դարերում, ԳԱ հայկական ֆիլիալի Տեղեկագիր, 1941, № 2, էջ 7-13, քարտեզը՝ էջ 12; Ա. Շահնազարյան, Արտաշատ, Պատմա-աշխարհագրական տեսություն, ՀՍՍՌ ԳԱ պետական-պատմական թանգարան, աշխատություններ, 1952, № 4, էջ 151-164; Գրականություն տես նշված աշխատություններում:

են Մեծամորի և Արաքսի Հավանական Հուները, մ.թ.ա. Ող. դրանց միախառնվելու վայրը<sup>6</sup>:

Աս.Շահնազարյանի կարծիքով Մեծամորը Հոսելով Արաքսին գոգահեռ, իր մեջ ընդունելով Հրազդան և Աղատ գետերը, թեքվում է դեպի Նոր Վիրապի բլուրները և դրանց արևմտյան կողմից թափվում է Արաքս գետը: Այսինքն, ստացվում է, որ Արտաշատը թերակղզու վրա չի կառուցվել:

Հենդիազարյանը, իր կողմից, քանիցս կատարած հնագիտական հետազոտությունների հիման վրա որոշում է Մեծամոր ու Տափերական կամուրջների տեղերը: Մեծամորի կամուրջը, նա ցույց է տալիս Արտաշատից մի փոքր դեպի Հյուսիսարևմուտք թեքված վայրում, ուր, ըստ նրա, պահպանվել են քաղաքի գլխավոր մուտքի հետքերը, և ճանապարհը գնացել է Վաղարշապատ ու Դվին քաղաքները, իսկ Տափերականը ենթադրում է, որ եղել է Հարավ-արևելյան կողմում, այն վայրում, որտեղ պահպանվել են քաղաքը շրջափակող ամրոցների այդ հատվածի գլխավոր մուտքի հետքերը, որտեղից ճանապարհը գնում էր Հարավ:<sup>7</sup> Նա գտնում է, որ Մեծամորը Հոսելով Արաքսին գոգահեռ, Մուղամ և Ռեհանլու գյուղերի մոտով, Յուվա գյուղի Հարավային կողմում միացել է Աղատ գետին, այնուհետև, նույն ուղղությունամբ ընթանալով, շրջանցել է Արտաշատ քաղաքի բլուրները Հյուսիսից, Արաքսին է միացել նրա արևելյան կողմում: Արտաշատի Հյուսիսային մասից մինչև Արաքսին միանալու վայրի միջև ընկած 5-6 կմ տարածքը, ասում է նա, ճահիճներով ու եղեգնուտներով ծածկված լինելու պատճառով, գետի հունը կորչում է:<sup>8</sup> Այսինքն, նրան չի Հաջողվել քաղաքի տարածքին մոտ տեղամասում Մեծամորի հունը որոշել: Դա դրեթե Փոքր Վեդի գյուղի Հյուսիսային հատվածից մինչև Արաքս ընկած հողերն են: Քարտեզի բացակայությունը դժվարացնում է Հասկանալ, թե ըստ Հեղինակի, որտեղով են անցնում քաղաքի սահմանները և ինչպես է հոսել Մեծամորը Արտաշատի Հյուսիսային և արևելյան մասով, մինչև Արաքսին միանալը:

<sup>6</sup> Հ.Եղիազարյան, Արտաշատ քաղաքի տեղադրության խնդրի շուրջ, «էջմիածին», 1956, № 3 և 5,6, էջ 78-79: Գրականություն տես նշված աշխատություններում:

<sup>7</sup> Աս. Շահնազարյան, Սև ջրի..., էջ 12; Նույնի, Արտաշատ: Պատմա-աշխարհագրական տեսություն, էջ 159:

<sup>8</sup> Հ.Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 78:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 79:

Մեծամորի հուներ ցույց է տրվում նաև I բլրի Հյուսիսային կողմով, Լուսառատ գյուղի արևելյան մասով, որից հետո միանում է Արաքսին դեպի Հարավ թեքվող Հատվածում:<sup>10</sup> Մեծամորը, սակայն, այդպես հոսել չէր կարող, որովհետև XI-XII բլուրների արևմտյան մասում տեղանքն ավելի ցածր է:<sup>11</sup> Փոքր Վեդի գյուղի այդ տարածքի հողերի ռելիեֆը դեպի բլուրներն ու Արաքսը, յուրաքանչյուր հինգ մետրի վրա մեկ մետրով իջնում է:

Պեղումներով պարզվեց, որ քաղաքն ավելի մեծ է, քան ենթադրվում էր: Արտաշատը զբաղեցրել է Խոր Վիրապի տասը բլուրները (բարձր. 20-70 մ), դրանց հարող դաշտավայրի հարավային և հարավ-արևելյան Հատվածները, որտեղ կան ևս երկու բարձր ու մեծ բլուրներ (XI և XII, բարձր. մոտ 50 մ): Սև մարմարից կաղմված այդ բլուրները, VII, IX, X բլուրների նման, ծառայել են որպես քարհանք և պայթեցվել են, ուստի, դրանց նախնական տեսքը դժվար է վերականգնել: XII բլրի Հյուսիսային կողմում, 25 մ բարձրությամբ վրա պահպանվել է սև մարմարից շարված պարսպի 2 քմ մի հատված, որը վկայում է այդ բլուրների պարսպապատ լինելը: Դրանք, սակայն, քաղաքի պարիսպների ընդհանուր համակարգի մեջ չեն մտել:

1990 թ և 1998 թ. կատարված հետախուզական աշխատանքները Հնարավորություն են ձեռնարկում պարզել Խոր Վիրապի արևելյան լանջերով անցնող Մեծամորի հուներ: Այն օգնում է պատկերացում կազմել, թե ինչպես են պարիսպներն անցել հարթավայրային Հատվածում, որոշել քաղաքի արևելյան, հարավ արևելյան և Հյուսիսային սահմանները:

Մեծամորը Հյուսիսային կողմից մոտենալով Խոր Վիրապի բլուրներին, I բլրի արևելյան ծայրից և դրա դիմաց գտնվող բավականին մեծ բլրի (XIII) - միջով անցնելով, բլուրների փեշերով հասել է II բլրի հարավ արևելյան մասը, որտեղ փոփոխվելով, ժամանակակից գերեզմանոցի միջով գնացել է մինչև

<sup>10</sup> A.Tonikian, *The Layout of Artashat and its historical development, Mesopotamia, XXVII, Casa Editrice le lettere, Firenze (Torino), 1992, p. 168-171, Fig. B.*

<sup>11</sup> Փորեն խաչատրյան, Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազամուլյն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին, «Լրաբեր Հաս. գիտ.», 1987, N 2, էջ 50-51; Zores D.Khachatryan, *Artaxata Capitale dell' Armenia Antica (II sec. A.C.-IV sec. D.C.), Ai piedi dell' Ararat, Artaxta E l'Armenia Ellenistico-Romana, a cura di Antonio Invernizzi. Torino, 1988, p. 99*

VI բլուր, վերջինիս և ուշ միջնադարյան գերեզմաններով բլրի միջով անցել է դեպի X բլրի Հյուսիսային կողմը. այստեղ լայնորեն փռվելով՝ հոսել է հարավ արևելք և նախքան հարավ թեքվող ոլորանին հասնելը, 2-3 հարյուր մետր այս կողմ, միացել է Արաքսին: XI-XII բլուրներից հարավ ընկած տարածքը ճահճահողեր են և մշակութային ոչ մի հետք չկա: Այն ի հայտ է գալիս Արաքսից 1-1.5 կմ հեռավորութան վրա, որտեղ մեկ մետր խորությունից գտնվեց անտիկ խեցեղեն և հեծյալի կավե արձանիկ:

Այդպիսով՝ հարթավայրում ստացվել է եռանկյունաձև մի թերակղզի, որը արևմտյան կողմում փակվում է բլուրներով: Բլուրներից արևմուտք գտնվող հարթավայրում բնակութան ոչ մի հետք չկա: Բլուրների արևմտյան լանջով են անցել (Տափերական և Մեծամորի կամրջով) «Արքունի պողոտայ»-ի Տիգրանակերտ-Արտաշատ հատվածը<sup>12</sup> և դրա եզրով Արտաշեսի կառուցած Արաքս և Մեծամոր գետերը միացնող ջրանցքը: Արևմտյան մասում III և IV բլուրների դիմաց, բլրակների վրա գտնվում է քաղաքի դամբարանաշտերից մեկը:

Արտաշատի հարավային սահմանը հասել է մինչև Արաքս գետը, ինչպես վկայում են նաև Ստրաբոնը (XI, 14, 6) և Կորնելիոս Տակիտոսը (Ann., XIII, 39), արևելյան և հարավ արևելյան սահմանները՝ Մեծամոր գետը: Քաղաքի արևելյան սահմանները չեն հասել Նոր կյանքի դաշտերին, իսկ Հյուսիսայինը՝ Փոքր Վեզի գյուղին, ինչպես ենթադրվում է:<sup>13</sup>


Արտաշատի կառուցման պատմությունը, ըստ պեղումների, բաժանվում է մի քանի էտապի: Արտաշեսի կողմից հիմնադրված քաղաքի հնագույն մասը զբաղեցրել են իննը բլուրները: Արտաշատի դիմաց, Արաքսի աջ ափին գտնվող մեծ բլրի վրա է կառուցվում (կանգնեցվում) Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմեսին նվիրված տաճարական համալիրը, իր բընակելի թաղամասով և արհեստանոցներով: Այս բլրի կողքով է անցել Տափերական կամրջով դեպի հարավ արևմուտք և հարավ արևելք տանող ճանապարհը: Դրա մոտով է հոսում Արաքսի վտակ Գինեգետը, որտեղ բազմանում են որդան կարմիր ներկի որդերը: Այստեղ, Տրդատ I-ի օրոք, կառուցվում (կանգնեց-

<sup>12</sup> Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 50:

<sup>13</sup> Տես՝ Բ. Կ. Արաքելյան, Арташат, I, Основные результаты раскопок 1970-1977 гг., Ереван, 1982, с. 20; Г. А. Тирациян, Культура древней Армении VI в. до н.э. — III в. н.э. (по археологическим данным), Ереван, 1988, с. 94.

վում) է Ապոլոնի հետ համադրված Տիրի տաճարը: Այս բլուրը նույնպես, XI-XII բլուրների նման, պետք է պարսպապատված լիներ:<sup>14</sup> Արդեն մ.թ.ա. I դ. վերջերին քաղաքը զբաղեցրել է Մեծամոր և Արաքս գետերի միջև եղած ամբողջ եռանկյունին, երբ Տիրքան II-ը և Արտավազդ II-ը հելլենիստական երկրներից Հայաստան գաղթեցված բնակչության մի մասին բնակեցրեցին Արտաշատում: Քաղաքն այդ ժամանակ զբաղեցրել է մոտ 400 հա: Այդ շրջանին է վերաբերում Ստրաբոնի տեղեկությունները Արտաշատի մասին: Քաղաքը դուրս էր եկել պարիսպներից. բնակվել են II բլրի արևմտյան լանջին, ճանապարհի հարևանությամբ, V բլրի հյուսիսային լանջին: Հարթավայրային մասում, ստորգետնյա ջրերի պատճառով, բնակարանները կառուցվել են ցածր բլուրների ու թմբերի վրա: Դրժբախտաբար դրանք, 60-ական թվականներից սկսած՝ հարթեցվել են, ուստի դժվար է ճիշտ պատկերը ներկայացնել: Բավական ընդարձակ մակերես ունի I բլրի արևելյան կողմում գտնվող բլրակը (XIII բլ.), որը խիտ բնակեցված է եղել: Խոր Վիրապ տանող ճանապարհն այսօր անցնում է թմբի վրա կառուցված մի մեծ թաղամասի վրայով (<sup>3</sup>“A” և <sup>3</sup>“B” համալիրներ): Մեծ աղյուսաշեն համալիր է բացվել նույն ճանապարհի այսօր հարավային եզրին, որը հարդարված է եղել որմնանկարներով և ծածկված կղմինդրներով (մ.թ. I դ.) և այլն: Այսինքն, պարիսպներից դուրս այս տեղամասում, քաղաքն հասել է Խոր Վիրապի ճանապարհին, որովհետև ճանապարհից հյուսիս բացվել են միայն առանձին դամբարաններ: Իր ծաղկման շրջանում՝ մ.թ. I-II դդ., Տրդատ I-ի կողմից քաղաքի վերականգնումից հետո, Արտաշատն իր գերեզմանոցներով զբաղեցրել է ավելի քան 600 հա տարածություն:

<sup>14</sup> Ժորես Խաչատրյան, Գուշակության արվեստի և դրա ժառանգականության հարցի շուրջ (մ.թ.ա. III դ.-մ.թ. IV դ.), Իրան նամե, 1996, № 4-5, էջ 46-48; Ժորես Խաչատրյան, Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, էջ 50-51:



## ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՅՈՒՆԱԶԱՐԴ ԴԱՀԼԻՃՆԵՐԸ ԵՎ ՀՈՂՄԻԿԻ ՏԱՃԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Հին Հայաստանի ճարտարապետական ժառանգության հարցը վաղուց ի վեր ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է եղել: Մնդրո առարկայի համար հատկապես բեկումնային դարձան 1960-ական թվականներին Գ.Ա.Տիրացյանի պրպտումները: Հնագիտական նոր հատկապես Գառնիի ամրոցի ընձեռած նյութի առաջավորասիական տարածաշրջանից ստացած տվյալների համակարգված ուսումնասիրության հիման վրա Գ.Ա.Տիրացյանը փաստացի հիմնավորեց Հին Հայաստանի տարբեր դարաշրջանների և Հայ միջնադարի ժառանգության խնդիրը:<sup>2</sup> Հատկապես ընդձվեց ուրարտական ճարտարապետության ազդեցությունը Հայաստանի վաղ միջնադարի քաղաքաշինության, դանդախության բնակելի և մոնումենտալ կառույցների վրա:<sup>3</sup> Կ.Կ. Ղաֆազարյանը հիմնավորեց, որ ինչպես Արգիշտիխիսիլի քաղաքի միջնաբերդի, այնպես էլ նախկինում ուսումնասիրված Թեյշեբախիի և Էրեբունու ամրոցների կենսական ու ֆունկցիոնալ կիզակետը «կենտրոնական սրահ»-ն է (որոշ դեպքերում էլ այն փոխարինվում է «կենտրոնական բակ»-ով): Նմանապես, ուրարտական բնակելի տան հորինվածքային կորիզը «ընդհանուր սենյակ»-ն է կամ կենտրոնական դահլիճը: Հեղինակը ցույց տվեց, որ տվյալ կառուցվածքային համակարգը ծագում է ուրարտական և, ընդհանրապես, հինարևելյան ժողովրդական բնակարանից: Հենց այս առումով էլ նա հնարավոր համարեց դիտել «ուղղակի և անուղղակի կապը ուրարտական պալատական շինությունների և Դվինի ու Արուծի Հայոց կաթողիկոսական կոմպոզիցիոն

<sup>1</sup> Б.Б.Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1944.

<sup>2</sup> Г.А.Тирация. Ахеменидские традиции в древней Армении. XXV Международный конгресс востоковедов в Москве. М., 1960. Գ.Ա.Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Արեմեյան Իրանը, ՊԲՀ, 1964, թիվ 2:

<sup>3</sup> Константин Оганесян. Урартские корни гревнеармянского культурного зодчества. -Второй Международный симпозиум по армянскому искусству. Сборник докладов, том I, Ереван, 1979, с. 192-198.

Հորինվածքների միջև»:<sup>4</sup> Այս «Ժառանգականության տեսությունը» հետադաշուժ բազմակողմանիորեն զարգացրեց Գ.Ա. Տիրացյանը: Մի կողմից սրան օժանդակեցին Ռուսախինիլիի (Բաստամ) տվյալները, իսկ մյուս կողմից այն ամրապնդվեց իրանա-աքեմենյան և փոռոգիա-լիդիական մշակութային դաշտի ընձեռած փաստական նյութով, աքեմենյան դարաշրջանի և վաղմիջնադարյան Հայաստանի սյունադարձ համանման շինությունների ընձեռած հնարավորություններով: Մասնավորապես, ուշագրավ էին Դվինի Կենտրոնական թաղամասում 1971-1973 թթ. ստացված արդյունքները. խոսքը 470-480-ական թվականներին կառուցված պալատական շինության մասին է, «հավանաբար կաթողիկոսական նախնական շենքի», որ կառուցվել էր կաթողիկոսական կենտրոնը Դվին տեղափոխելուց անմիջապես հետո:<sup>5</sup>

Սյունազարդ դահլիճների ձևավորման կենտրոնների ժամանակագրական ու աշխարհագրական տեղայնացումը զգալի չափով աղերսվում է տորաձև սյան խարիսխների առաջացման ու զարգացման պատմությանը: Վերջինիս վերաբերյալ առկա է Կենտրոնական Ասիային, Միջագետքին, Իրանին, Փոքր Ասիային առնչվող ուսումնասիրությունները համակարգվեցին Ի.Ռ. Պիճիկյանի ղեկուցման մեջ:<sup>6</sup> Արևելագետի այս և հաջորդ աշխատանքները նվիրված ընդհանրապես Արևելյան օրդերի ծագման ժամանակին ու աշխարհագրությանը, ավելի սևեռեցին ուսումնասիրողների հայացքը դեպի ուրարտական և ասորեստանյան (չատ խնդիրներում ընդհանուր) մշակութային տա-

<sup>4</sup> К.К.Кафадарян. Архитектура города Аргиштихинили.-Автореферат диссертации на соискание ученой степени кандидата архитектуры. Ереван, 1975, с. 31, рис. 5,6.

<sup>5</sup> Г.А.Тирациян, Урарту и Армения (К вопросу о преемственности материальной культуры).-Второй Международный симпозиум по армянскому искусству. Сборник докладов, том I, Ереван, 1979, с. 181-191. Ա.Ա.Քալանթարյան, Դվինի Կենտրոնական թաղամասի 1971-1973 թթ. պեղումները: -Լրագրեր Հասարակական գիտությունների, 1975, թիվ 7, նկ. 3, էջ 99:

<sup>6</sup> И.Р.Пичикян. Регион распространения и хронология торовидных баз. Вторая Республиканская научная конференция по проблемам культуры и искусства Армении. Тезисы. Ереван, 1976, с. 165.

րածքի՝ որպես այս օրդերի ձևավորման սկզբունքային կենտրոններից մեկի վրա:

1976-ին սկսված ու Հաջորդ տարիներին զգալի չափով բացված Օշականի մ.թ.ա. VI դարով թվագրվող պալատական երկրորդ համալիրն ու հատկապես 27-րդ սրահն իր չորս զույգ սյուներով՝ ամրապնդեց ուշ ուրարտական և աքեմենյան Հայաստանում սյունազարդ դահլիճների լայն տարածման տեսակետը:<sup>8</sup> Սա ևս կռվան դարձավ՝ հաստատելու այն իրողությունը, որ Աքեմենյան սյունազարդ դահլիճները կրել են ուշ ուրարտական սյունազարդ դահլիճների ներգործությունը:<sup>9</sup>

Հելլենիստական և անտիկ Հայաստանում սյունազարդ դահլիճների գոյության մասին՝ հին Արտաշատի սյան խարխսների կողքին հիմնավորումներ ստացվեցին նաև Դվինից, ուր 1960-ականներից որվագծվում էին մոնումենտալ ինչ-որ շինության հետքեր:<sup>10</sup>

1977-ին սկսված անտիկ Շիրակավանի պեղումները մի անգամ ևս հաստատեցին այս դարաշրջանում Հայաստանում սյունազարդ շենքերի լայն տարածման հանգամանքը: Հնավայրի 3-րդ տեղամասում՝ վերին շերտում բացվեցին սյուների քառանկյուն տուֆից երեք խարխսներ, և «բնակելի համալիրի հիմնական մասը կաղմում էր խարխսներով մեծ սենյակը»:<sup>11</sup> սա II-I դարերով վերաթվագրված «աշխարհիկ, սյունազարդ, սալահատակ ունեցող սրահ» էր: Ֆ.Տեր-Մարտիրոսովը ենթադրում է, որ դրանից վեր I դարերի սահմանադրված տարածվում էր 16.5x16.5մ չափի, վեց կամ ութ սյուների վրա հենված տա-

<sup>7</sup> И.Р.Пичкян. Традиция Востока в гревнеармянской архитектуре. Второй Международный симпозиум по армянскому искусству. Сборник докладов, том I, Ереван, 1976., с. 165.

<sup>8</sup> С.А.Есаян, А.А.Калантарян, Ошакан I. Основные результаты раскопок 1971-1983гг.. Ереван, 1988, с. 27-29, табл. XI.

<sup>9</sup> Գ.Ա.Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, ՊԲՀ, 1964, թիվ 2, էջ 163:

<sup>10</sup> Գ.Գ.Քոչարյան, Դվինը անտիկ դարաշրջանում. Դվին III, Երևան, 1991, էջ 18-20:

<sup>11</sup> Ֆ.Ի.Տեր-Մարտիրոսով, Անտիկ Շիրակավանը (1979-1980թթ. պեղումների արդյունքները): ՀՀԴՀԱԳՆ, Երևան, 1981, էջ 27:

նիքով մի շինություն,<sup>12</sup> և որ հին շերտից պահպանվել է «յոթ սյուններից միայն հինգը»:<sup>13</sup>

Հելլենիստական և անտիկ դարաշրջանների վերահիշյալ Հնավայրերը, տրամադրելով հույժ արժեքավոր տվյալներ դահլիճների վերաբերյալ, ցավոք անկարող են ամբողջական պատկերացում տալ երևույթի մասին. մի դեպքում, ինչպես Դվինում, ենթադրվող կառույցները ծածկված են արժեքավոր հեռացման չենթակա վաղմիջնադարյան մոնումենտալ շենքերով, մի այլ դեպքում էլ, ինչպես Շիրակավանում, չլուսաբանված, մի քանի անգամ վերաթվագրած կառույցների հատվածների գոյության պայմաններում, դժվար է ուրվագծել կառույցների համոզեցողիչ պատկերն ու ստույգ ժամանակը: Այս հանգամանքներում անգնահատելի են Շիրակի և Աշոցքի հետևյալ Հնավայրերի գյուտերը: Ժամանակագրորեն ավելի ուշ բացված Շիրակի Բենիամին գյուղին հարևանող հսկայածավալ հնավայրը թույլ տվեց դատել Աքեմենյան տիպի դանդակաձև խոյակներով սյունազարդ դահլիճների հարդարանքի մասին.<sup>14</sup> Մ.թ.ա. V/IV- III/II դարերի շերտագրորեն միմյանց վերադրված կառույցները ավելացնում են հայտնի տվյալները հին Հայաստանի մոնումենտալ ճարտարապետության և ընդհանրապես, մշակույթի վերաբերյալ: Մ.թ.ա. I դարով թվագրվող, գրեթե ամբողջական պահպանված սյունազարդ դահլիճն իր վեց զույգ սյուներով կազմված եռանավ սրահով, սլաքաձև ռելյեֆ անկյուններով տորաձև խարիսխներով ու նախասրահով<sup>15</sup> լավագույնս լուսաբանում է ուշ հելլենիստական և վաղ հռոմեական

<sup>12</sup> **Ф.И.Тер-Мартиросов, Г.Х. Караханян.** Раскопки поселения и некрополя Шуракаван.- *Գիտական աշխատություններ, Գյումրի, 1998, էջ 23:*

<sup>13</sup> **Ֆ.Ի.Տեր-Մարտիրոսով,** Շիրակավան: -Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1996, էջ 236:

<sup>14</sup> **Ֆ.Ի.Տեր-Մարտիրոսյան,** Բենիամինի անտիկ բնակավայրի 1989-1990թթ. պեղումները: ՀՀԴՀԱԳՆ, Երևան, 1991, էջ 86-90: **Н.Р.Акопян, Beniamin. М.Н.Зардарян, Н.Р.Акопян.** Archaeological Excavations of Ancient Monuments In Armenia 1985-1990.-In: Ancient Civilizations, 1, 2. Leiden, E.J.Brill, 1994, p. 185-187. **Ф.И.Тер-Мартиросов,** Шурак в эпоху классической античности. - *Գիտական աշխատություններ II, Գյումրի, 1999, էջ 35-38:*

<sup>15</sup> **Հ.Խաչատրյան,** Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը: - *Գիտական աշխատություններ II, Գյումրի, 1999, էջ 47-59:*

չրջանի Հայաստանի սյունադարդ սրահների առանձնահատկութիւնները: Հեղինակներն այս շինութեան կենտրոնում տեսնում են գլխատանը բնորոշ հազարաչեն ծածկ:<sup>16</sup>

1987-ից ուսումնասիրվող Հողմիկի տաճարական համալիրն Աշոցքում առ այսօր, ըստ էութեան, միակ հուշարձանն է, որ ամբողջական պատկերացում է տալիս Հին Հայաստանի պաշտամունքային ու թերևս նաև պալատական կենտրոնների պաշտամունքային, տնտեսական, ծավալա-տարածական, կառուցվածքային առանձնահատկութիւնների մասին:<sup>17</sup> Չնայած այն լուսաբանող հոդվածներին ու պարբերաբար ներկայացվող հազորդուձևներին՝ փոքր բացառութեամբ, ավելի շատ հայտնի է արտերկրի, քան հայրենական մասնագետներին:

Ծագելով մ.թ.ա. II դարում, բնակավայրն իր չորս շինարարական փուլերով հարատեւել է ընդհուպ մինչև քրիստոնեութեան շեմը՝ մ.թ.ա. III դարի վերջը: Հնավայրի վերին շերտն ավելի շատ վնասված է XX դարի վերջին տասնամյակներին. ինչ-իսկ պատճառներով, գործունեութեան վերջին փուլում հնավայրը դերժ է մնացել ավերումներից: Անգամ անգեւ ագքով դժվար է նկատել, որ տաճարական համալիրի ցարդ պեղված քառանկյան ներսում ամենացայտուն գիծը մի առանցքի վրա շարված հյուսիսից հարավ կամ արևմուտքից արևելք ձգվող սրահներն են: Սրանց հորինվածքն այնքան զուսպ ու կատարյալ է, որ կասկած չի հարուցում նախորդ դարաշրջաններում սյունադարդ և այլ կարգի մոնումենտալ կառուցների

<sup>16</sup> *Փ.И.Тер-Мартиросов. Памятник классической античности Армении.-Բանբեր Երևանի համալսարանի, 1993, էջ 59-67: Նույնի՝ Ширак в эпоху классической античности. Գիտական աշխատություններ II, Գյումրի, 1999, էջ 42: Հ.Սաչատրյան, նշվ. աշխ., էջ 51:*

<sup>17</sup> *Հ.Պ.Հակոբյան, Ռ.Ե.Վարդանյան, Հողմիկի հելլենիստական հուշարձանի պեղումների նախնական արդյունքները: ՀՀԴՀԱԳՆ, Երևան, 1989, էջ 61-63: Հ.Պ.Հակոբյան, Ռ.Ե.Վարդանյան, Վ.Գ.Զինջիրջյան, Ախուրյան դեռի վերին հոսանքում կատարված հնագիտական պեղումների նախնական արդյունքները. Ջրածոր և Հողմիկ գյուղերի տարածք (աղյ.СХVI-СХХIV):-Հնագիտական աշխատանքների Հայաստանի նորակառույցներում (1986-1987թթ. պեղումների արդյունքները), I, Երևան, 1992, էջ 106-117, 19 էջ, իլյուստրացիաներ գրքի վերջում: Н.Р.Акопян, Hakhmik.-М.Н.Зардарян, Н.Р.Акопян. Archaeological Excavations of Ancient Monuments In Armenia 1985-1990.-In: Ancient Civilizations, 1, 2. Leiden, E.J.Brill, 1994, p. 190-192, fig. 9. Haik Pion Akopian. Die Tempelanlagen von Ocnmik.-Archäo*

Հորինվածքի և մանրամասների մշակման երկար ու արդյունավետ ուղու մասին: Բացված կենտրոնական կից երեք սրահներին, որ ունեն մոտ 13x10մ մակերեսներ, բնորոշ են երկու շարքով շարված չորսական սյան խարիսխներ (որոշ դեպքերում զույգ կենտրոնական տորաձև խարիսխներով): Սրանով հիշյալ սրահները (նկ. 1) լավագույնս շարունակում են Հասանլուի (մ.թ.ա. XI-X դարեր), Բաբաջան-Թեփեի (VIII-VI դարեր) սրահներին,<sup>18</sup> Պասարգադեի՝ Կյուրոսի պալատի և պրոպիլեի,<sup>19</sup> Օշականի պալատական երկրորդ համալիրի թիվ 27 և 25-րդ սրահներին (VI-V դարեր) Հորինվածքը: Խարիսխների կենտրոնական քառյակը քիչ ավելի է հեռացված միմյանցից, որ թույլ է տալիս դատել հարթ կամ երկթեք ծածկով և զմբեթավոր միջնամասով գոյություն ունեցած կից երեք սրահներին մասին: Շինությունների մի զգալի մասը երկու կից պատերի երկայնքով սալարկված է «L»-ձև կանոնավոր քարի սալահատակով, երբեմն նաև եզրաքարերով, կենտրոնում թողնելով կավածեփ հատակը: Գրեթե բոլոր սրահների մեկ կամ երկու պատերի երկայնքով կառուցված են ոչ բարձր հարթակներ: Սրահներն, ինչպես ուրարտական դարաշրջանի օրինակներում, շրջապատված են օժանդակ պահեստային սենյակներով և միջանցքներով: Որոշ սենյակներ էլ օժտված են չորս համաչափ հեռացած խարիսխներով, որ թույլ է տալիս դատել հարթ կամ երկթեք ծածկով և զմբեթավոր միջնամասով գոյություն ունեցած կից երեք սրահների մասին: Շինությունների մի զգալի մասը երկու կից պատերի երկայնքով սալարկված է «L»-ձև կանոնավոր քարի սալահատակով, երբեմն նաև եզրաքարերով, կենտրոնում թողնելով կավածեփ հատակը: Գրեթե բոլոր սրահների մեկ կամ երկու պատերի երկայնքով կառուցված են ոչ բարձր հարթակներ: Սրահներն, ինչպես ուրարտական դարաշրջանի օրինակներում, շրջապատված են օժանդակ պահեստային սենյակներով և միջանցքներով: Որոշ սենյակներ էլ օժտված են չորս համաչափ հեռացած խարիսխներով, որ թույլ է տալիս, օրինակ, մոտ 8x8 մ չափի թիվ 26 սրահում և թիվ 24 սենյակում տեսնել կենտրոնազմբեթ կառուցվածք: Թիվ 17, 19 և 25 կից սենյակների անֆիլադան տալիս է ծածկի մի այլ՝ հին արևելյան, մասնավորապես ուրար-

<sup>18</sup> Г.А.Тирация. Культура гревней Армении. VI в.до н.э. - III в.до н.э. (по археологическим данным): Ереван, 1988, Է.25, примеч. 18.


<sup>19</sup> Архитектура Древнего мира.- Всеобщая история архитектуры, т. I, второе изд., М., 1970, с. 289, рис. 7.

տական ճարտարապետությանը հարազատ եղանակ՝ միջնորմ-  
ների վրա հենվող ծածկի միջոցով: Նույն եղանակով է  
լուծված ծածկը նաև թիվ 3 և 7 սրահներում՝ մ.թ.ա. I դարի  
վերջի վերակառուցման հետևանքով: Ընդարձակ սրահների մի  
այլ խումբ՝ թիվ 6, 23 և 22, բնորոշվում է երեք զուգահեռ  
առանցքների վրա դրված չորսական սյուներով, որով սույն  
կառույցները զուգահեռներ են գտնում Նուշ ի-Ջան Թեփեի  
(VIII-VI դդ.) և Պերսեպոլիսի մի շարք (մ.թ.ա. V դ.) սյու-  
նադարը հորինվածքներում:<sup>20</sup> Սակայն Հողմիկի հիշյալ երեք  
սրահները ժամանակով ու զարգացման միտումներով արդեն  
թեևակոխել են հաջորդ փուլը. այստեղ երեք առանցքներից  
կենտրոնականի սյուներն են, որ կրում են տանիքը և նրա  
ծանրությունը բաժանում երկայնական պատերի հետ,  
մինչդեռ, վերջիններիս երկայնքով կանգնած չորսական  
սյուները ստացել են գործնականից բացի, գուցե էլ ավելի  
շեշտված դեկորատիվ որմնամուկյթերի նշանակութուն: Երկու  
առումներով էլ՝ Հողմիկի որմնամուկյթերը, չունենալով  
համաժամանակյա օրինակներ Հայաստանում, էական են վաղ  
միջնադարյան պաշտամունքային կառույցների երկայնակի  
պատերին վեր ձգվող սյուն-որմնամուկյթերի ծագումնաբա-  
նության խնդրում:

Չնայած բազմաթիվ ավերիչ բնական գործոնների ազդե-  
ցությանը, Հողմիկի համալիրին բնորոշ է խիստ կանոնավոր  
կառուցվածքը և անգամ ելակետային միավորը (մոդուլ), որ  
թերևս 51,8 սմ է եղել: Օրինակ, զոհասեղանների մի մասին  
բնորոշ է 10 $\pm$ սմ երկարութուն: Մի այլ խնդիր է շինութ-  
յունների չափային համամասնութունը: Դիցուք, թիվ 1  
սրահի կից պատերն (1310x1036 սմ) ունեն 4:5 հարաբերութ-  
յուն մոտ 20x51,8 և 25x51,8 սմ չափեր: Սրան հյուսիսից  
հարևանող թիվ 2 սրահին (1318x825 սմ) կողմերի 5:8 հարաբե-  
րությունը, մոտ՝ «ոսկի հատույթին», որ հայտնի էր թե՛  
ուրարտական ճարտարապետությունից<sup>21</sup> և թե՛ Գառնիի նշանա-  
վոր տաճարից: Հավանաբար, հենց Հողմիկի շինությունների  
հնագիտական ամբողջականութունն ու կառուցվածքային  
բազմազանութունն ի նկատի ունեն Գ.Ա.Տիրացյանը, երբ  
1987-ին արտահայտեց այն միտքը, թե վերջապես ի հայտ եկավ  
շղթայի բացակայող օղակը:

<sup>20</sup> Նշվ. աշխ., էջ 299-300, նկ. 8

<sup>21</sup> Նշվ. աշխ., էջ 258:



Նկ.1 Հոլմիկի հնավայրի ընդհանուր տեսքը 1989թ.  
հնագիտական աշխատանքներից հետո

ՀԱՅՈՅ ԹԱԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Անդրադարձները հայկական թագի քննությանը, գերազանցապես հպանցիկ՝ Աքեմենյանների արքայանշանների հետազոտման համատեքստում, ունեն երկար պատմություն, կազմելով հեղինակների սովոր մի ցանկ:<sup>1</sup> Վերջիններիս համեմատ Գեորգ Տիրացյանի գիտական սովոր ժառանգության շրջանակներում իրենց ուրույն տեղը գրավող Արտաշեսյանների թագի դիտարկումներն ունեն ավելի բարձր արժեք: Հիմնախնդրի տարբեր ասպեկտների լուսաբանությանը կարող ենք հանդիպել վաստակաշատ հնագետի տարբեր աշխատություններում, սակայն առավել հանգամանորեն դրանք շարադրված են նրա հատուկ մի հոդվածում:<sup>2</sup> Այստեղ ի մի են բերված և արժեվորված նաև խնդրին առնչվող առավել նշանակալի այլ ուսումնասիրությունները: Կարելի է ասել, որ Գ.Տիրացյանի հիշյալ հոդվածը իրենից ներկայացնում է համապարփակ, խոր հետազոտություն, որտեղ հեղինակը ներկայացնում է հայկական թագի տվյալ տիպի ձևավորման վերաբերյալ իր դրույթները, հենվելով առկա տեսակետների միջանցիկ վերլուծության վրա: Ստորև հիշատակենք նշված դրույթներից առավել կարևորները.

1. Արտաշեսյանների ատամնավոր թագը փոխառված է Աքեմենյաններից;

2. նույն ծագումն ունի նաև երկար ականջակալներով և ծոծրակալով գլխարկը՝ այսպես կոչված քոչվորական գլխանոցը, որն Աքեմենյանների իշխանական համակարգի կայացումից հետո ձևեր է բերում սատրապական «թագի» նշանակություն;

<sup>1</sup> Դրանց թվում՝ E.Babelon, H.Seyrig, J.H.Young, D.Schlumberger, H. von Gall, P.Calmeyer և այլք: Այս շարքում առավել հանգամանալից է Զոն Յանգի աշխատությունը, նվիրված Կոմմագենի արքայական թագի տիպերին (տես. Young J.H., Commagenian Tiaras. Royal and Divine. AJA 68, 1964, № 1):

<sup>2</sup> Тирациян Г.А., Армянская тиара: опыт культурно-исторической интерпретации. ВДИ, 1982, № 2.

3. Հայկական թագը ձևավորվել է աքեմենյան ատամնավոր թագի և սատրապական գլխանոցի «Հարադրմամբ» թագին ազուցվել են գլխանոցի ականջակալներն ու ծոծրակալը;

4. Իրանական թագի պսակը զարդարված է 4-5, երբեմն 10 ատամներով և չունի դիցակապ (դիադեմա):<sup>3</sup> Մինչդեռ հայկականը գերազանցապես հնգատամ է (Հազվագեպ՝ 4) և, որպես կանոն, երիզված դիցակապով;

5. Արտաշեսյան թագի հերալդիկ պատկերների՝ ութթևյան վարդյակի երկու կողմերում կանգնած արծիվների և բուսազարդով շրջափակված աստղի մոտիվները ծագում են պարթևա-հելլենիստական աշխարհից;

6. Հայկական թագի «մեկնարկային» տարբերակը ընդունվել է երվանդ Գ-ի կամ Արտաշես Ա-ի օրոք;

7. մեկ արքայական տան շրջանակներում դոյուլթյուն է ունեցել նույն թագի մի քանի տարբերակ (չեղագրով տրված բնորոշումները ըստ Գ.Տ.-ի):

Ներկայացված դոյուլթյունների քննությունից հանգում ենք եզրակացություն, որ հայկական թագի ողջ «համալիրը» բուն թագը, գլխանոցը, հերալդիկ պատկերները Գ.Տիրացյանն արժեվորում է բացառապես իրանական մշակութային ավանդույթի համատեքստում: Հայկական և իրանական թագերի, հոգվածում նշված «մասնակի» տարբերությունները չեն փոխում եզրահանգման միանշանակ բնույթը:<sup>4</sup>

Այսպիսով, քննվող աշխատությունը, հայկական թագի տիպաբանական գույքահանգումների և ձևավորման պատմա-մշակութային համատեքստի բացահայտման տեսանկյունից՝ շահեկանորեն տարբերվելով իր նախորդներից, հայեցակարգային առումով՝ լիովին համահունչ է վերջիններս: Մինչդեռ, հայկական թագի իրանական ծագման բացարձակացումը, ինչպես և ցանկացած բացարձակացում, թերևս, արդարացված չէ:

Խնդրի առավել հանգամանալից քննության համար սկզբնապես դիտարկենք հայկական թագի հիմնական տարրերը՝

<sup>3</sup> Գ.Տիրացյանը նշում է Աքեմենյանների մոտ դիցակապի առկայություն հիշատակություններն անտիկ աղբյուրներում, սակայն շեշտում է նաև արքայական պատկերազրույթյան մեջ վերջինիս բացակայությունը:

<sup>4</sup> Հարկ է նշել, որ առաժժին դեպքերում հեղինակը, իրեն հատուկ դիտական բժախնդրությամբ, ռեզիվաժողում է սեփական դիրքորոշմանը հակադրվելու հնարավոր շրջանակները (տես «քոչվորական գլխանոցի» ոչ աքեմենյան գույքահանգումների հիշատակումը /նշվ.աշխ. էջ 90/ և այլն), սակայն անգամ թուուցիկ, չանդրադառնալով դրանց վերլուծությանը:

ատամնավոր թագը, գլխանոցը, դիցակապը, հերալդիկ պատկերները, համադրելով դրանք առկա տիպաբանական զուգահեռները հետ:<sup>5</sup>

Ա. Թագ. Ատամնազարդով երիզված ցածր թագերը («ատամնավոր օղակ») հանդես են գալիս ասորեստանյան բարձրաքանդակներում: Կարելի է ենթադրել, որ այս, թերևս, սկզբնական տիպի թագն, ինչպես և իշխանության ու պաշտամունքի մի շարք այլ սիմվոլներ,<sup>6</sup> արմատավորվեցին աքեմենյան միջակուլթում միջագետքյան ավանդույթի ազդեցության տակ, այս տարածքի հպատակեցումից հետո: Համենայնդեպս, Աքեմենյանների հնագույն պաշտոնական «մանիֆեստում»՝ Բեհիսթունում, Դարեհ Ա-ը հանդես է գալիս հենց նման պարզ թագով:<sup>7</sup> Վերջինիս քիչ ավելի բարձր տարբերակները հանդիպում են արքայի ոսկեդրամների դարիկների, կնիքների վրա, ինչպես նաև Պաղիրիկի գորգերի պատկերներում: Եվ ամենայն հավանականությամբ, սա է այն «կիրաբիսը» (κίταρισ, κίδαρισ), որը հիշատակվում է անտիկ աղբյուրներում որպես Աքեմենյանների պաշտոնական թագ: Վերջինիս ավելի ձգված տարբերակը հանդես է գալիս Ք.ա. V դարի կեսերից, Արտաքսերքսես Ա-ի շրջանում (Պերսեպոլիս):<sup>8</sup>

<sup>5</sup> Հայոց թագի պատկերային մանրամասների քննութունը հիմնվում է առավելապես դրամագիտական նյութերից քաղվող տեղեկատվության վրա (բացառությամբ Կոմագենի որոշ բարձրաքանդակների): Աքեմենյան զուգահեռների փաստագրական հենքն ավելի ծավալուն է դրամներ, որմնաքանդակներ, սեքստիլ, գլխատիկա և այլն: Ստորև տեքստի ավելորդ ծանրաբեռնումից խուսափելու նպատակով, բաց են թողնվում հզումները հայկական և առաջավորասիական հանրաժանութ հուշարձանների և հնագիտական նյութերի հրատարակութուններին: Առավել ևս, որ դրանց զգալի մասը հանգամանորեն ներկայացված է Գ.Տիրացյանի նշված հոդվածում:

<sup>6</sup> Ինչպես օրինակ Ահուրամազդայի թևավոր խորհրդանիշը և շատ ուրիշներ:

<sup>7</sup> Ի դեպ, Դարեհի թագի օղակը զարդարված է նույնպիսի վարդյակների շղթայով, ինչպես և ասուրական արքաների գլխազարդերը (Նինվե), ինչը կրկին վկայում է պարսկական կրկնակի միջագետքյան ակունքների օգտին:

<sup>8</sup> Պերսեպոլիսի «Արտաքսերքսեսը հովանոցի տակ» բարձրաքանդակը՝ այն հազվագյուտներից է, որոնց վրա է հիմնվում Բարձր ատամնավոր թագի պարսկական ծագման վարկածը: Մինչդեռ, արքայի գլխարկի պսակն այստեղ խիստ լայնարկված է և դժվար է միանշանակ բնորոշել նրա երկրժատամներ, թե «լեզվակաղարգ», որը հանդիպում է աքեմենյան գլանաձև խուլրի վրա: Նկատենք, որ երևի թե հենց այս վերջինն է այսպես կոչված

Անկախ ատամնավոր թագի տարբերակներից, այս ավանդույթի ձևավորման առաջօր Հայտնի Հնագույն ակունքից՝ Միջագետքից, Հայկական բարձրավանդակ անմիջական փոխանցման որևէ վստահելի վկայություն մեզ Հայտնի չէ: Այս պարագայում հարկ է ընդունել Հայկական թագի ողջ «համակարգի» տվյալ էլեմենտի այստեղ տարածման «պարսկական վարկածը»:

Որոշակի հստակեցման կարիք ունի թագի (ինչպես պարսկական, այնպես էլ հայկական) ատամնաղարդի ընկալումը: Ինչպես իրավացիորեն նշում է Գ.Տիրացյանը, պարսկական թագի ատամների քանակն ունի տատանման զգալի լայնույթ՝ 4-10 (երբեմն՝ 3, Մ.Զ.): Մեր կարծիքով, գրականությունից մեջ ավանդաբար բերվող այս թվերը փաստում են միայն որոշակի հուշարձաններում թագի վերարտադրություն ձևը, սակայն ոչ նրա իրական բնութագիրը: Դժվար չէ նկատել, որ պարսկական թագի ատամների նվազագույն քանակը պատկերված է գերազանցապես դրամների և կնիքների վրա (3-6), իսկ առավելագույնը բարձրաքանդակների (8-10): Տեղին է ենթադրել, որ փոքրածավալ իրերի վրա ատամների քանակը կրճատվում էր՝ սահմանափակ մակերեսի խնայման և առանցքային կերպարը չմանրացնելու նպատակով, մինչդեռ մեծածավալների վրա դրանք պատկերվում էին հանգամանորեն, բնօրինակին հարազատ: Ասել է, թե այս խնդրում որպես ելակետային պետք է ընդունել ատամնաշարի 8-10 թվաքանակը: Սակայն, այն ևս վերջնական չէ. հաշվի առնելով առհասարակ ռելիեֆներում ծավալների, տվյալ դեպքում օղակի, գլանի, հարթական ներկայացման հանգամանքը (հետևաբար նրանց «ստվերային» կեսի առկայությունը) և թագի առաջին ու վերջին ատամները գնահատելով որպես «առանցքային», աքեմենյան թագի ողջ ատամնաղարդը կարելի է գնահատել 14-18 միավորի սահմաններում:

Նույն մեթոդիկական կիրառելի է նաև հայկական թագի ատամնաղարդի հաշվարկի համար: Ինչպես արդեն նշվել է,

---

ուղիղ «տիրան» (ορθη τιαρα). որն ի տարբերություն կիսաձվածե մեդական, կոնաձե սկյութական կամ «շարքային» պարսիկների ակոսավոր տիրանների, ատամնավոր կիգարիսի հետ մեկտեղ, պատկանում էր Աքեմենյանների արքայանշանների թվին: Ինչ վերաբերում է Արտաքսերքսես Բ-ի հիշյալ գլխազարդին, ապա այն կարիք ունի հավելյալ քննություն, որը կարող է կռվաններ տրամադրել Բարձր թագի պարսկական ակունքների տեսակետի վերանայման համար:

վերջինիս տարբեր բնույթի վերարտադրություններում ատամ-  
ների քանակը բավականաչափ կայուն է՝ գերազանցապես 5:  
Այս թիվն ունենալով վերոհիշյալ հաշվարկի հիմքում  
ստանում ենք հայցվող տվյալները թագի այս տիպի համար՝ 8  
ատամ (3+3+2): Մեր այս եզրահանգումը կողմնակիորեն  
հաստատելու են գալիս Հայոց թագի առանձնակի ռեա-  
լիստական վերարտադրությունները եռապետ Անտոնիոսի  
«հաղթական» դենարների վրա:<sup>9</sup>

Բ. Գլխանոց. Թագի տվյալ էլեմենտի պարսկական ծագման  
մասին համընդհանուր տեսակետը հիմնված է աքեմենյան  
«կիրբասիոնի», Պերսեպոլսում պատկերված հայկական հարկա-  
տուների, Մոփաց և Կոմմագենեի որոշ արքաների գլխարկների  
մասնակի նմանության և կարևորը գլխանոցի պարսկական  
տարբերակի ժամանակագրական ու տիպաբանական գերակա-  
յության a priori ընդունման վրա: Մինչդեռ, այս կռվաններից  
և ոչ մեկը առանձնապես հավաստի է:

Նախ, համառոտ, ընդհանրությունների մասին: Դրանք  
բավականաչափ հարաբերական են և ունեն առավելապես  
ֆունկցիոնալ, այլ ոչ թե տիպային զուգահեռականության  
բնույթ: Մինչդեռ տարբերությունները, ընդ որում՝ ա-  
ռանցքային մանրամասներում (գազաթ, ականջակալ, ծոծրա-  
կակալ), նկատելի են: Դրանք պարզորոշ դրսևորվում են  
«Օքսուսի գանձի» համապատասխան գտածոների, Գավգալ-  
մելայի ճակատամարտը պատկերող Պոմպեյի խճանկարում  
բերված աքեմենյան գլխանոցներին, հայկական և այլ նյու-  
թերի միջանցիկ քննության ժամանակ: Ինչ վերաբերում է  
այսօրինակ գլխարկ կրելու ավանդույթին, ապա անիմաստ է  
դրա ակունքները որոնել Բ.ա. VII-VI դարերի միջինասիական  
մշակութային դաշտում, այն դեպքում, երբ հայկական

<sup>9</sup> Հայաստանի նվաճմանը նվիրված այս դրամների վրա հայկական թագը  
յոթնատամ է: Ընդ որում, ի տարբերություն մյուս բոլոր պատկերների,  
ներկայացված է ծախսի որոշակի ընդգծմամբ: Վերջին հանգամանքի  
հաշվառմամբ կատարված պարզադույն մոդելավորումն անգամ ցուցա-  
դրում է ութնատամ թագի պրոֆիլային պատկերման դեպքում՝  
ատամներից մեկի պարտադիր «սլման» փաստը: Ազգագրական, հերալդիկ  
և այլ մանրամասների «սեդանտիկ» վերարտադրությունը բնորոշ էր  
Հանրապետական Հոռմի մեդալյերային արվեստին: Նման մոտեցում է  
դրսևորված նաև Արտաշեսյան թագի պատկերում: Վերջապես չպետք է  
մոռանալ, որ Բ.ա. 36-ին Արտավազ Բ-ին գերելուց հետո հռոմեացիք  
հնարավորություն ունեցան «մոտիկից» ծանոթանալու Հայոց թագին,  
ինչն ավելի ևս վստահելի է դարձնում դենարների վրա նրա  
պատկերները:

գլխանոցի ուղղակի նմանակները, ընդ որում ժամանակագրորեն աքեմենյաններին նախորդող, առկա են բուն Հայկական բարձրավանդակում (էրեբունի, Ք.ա. VIII դ. և նրա մերձակա շրջապատում (Ոստոտուշաշ, Ք.ա. XIV դ.): Հաշվի առնելով Մերձավոր Արևելքի հուշարձաններում այսպիսի գլխարկ կրող որոշակի անձնավորությունների դիցական բնույթն ու արքայական իշխանությունների «կարգավիճակը» («Ամպրոպի աստված - Արքա») հնդեվրոպական ավանդույթի համատեքստում), շարունակելով տրամաբանական շարքը, կարելի է ենթադրել, որ դեռևս նախքան երկրի Աքեմենյան կայսրության կազմում ընդգրկվելը, երկար ականջակալներով, ծոծրակակալով գլխանոցը, պարուրված դիցակապով՝ արդեն իսկ դասված էր Հայոց արքաների իշխանական ատրիբուտների շարքը: Երկդարյա ընդհատումից հետո, Ք.ա. IV դ. 30-ականներին անկախություն վերահաստատման հետ մեկտեղ, պետք է վերականգնվեր նաև ավանդական արքայական խորհրդանիշի օգտագործումը: Հետագայում, արդեն ատամնավոր թագի ընդունումից հետո, վերջինս համադրվեց գլխանոցի հետ, բայց ոչ որպես սատրապական և արքայական իշխանության մեկտեղման «ցուցիչ», ինչպես ենթադրում է Գ.Տիրացյանը, այլ որպես դարերից եկող լեգիտիմ հայրենական իշխանության և «Արքայից Արքայի» կարգավիճակի միաձուլման դրսևորում:<sup>10</sup>

Այսպիսով, «ատամնավոր թագ-գլխանոց» համադրությունը իսկապես կոնտամինացիայի արդյունք է, սակայն ոչ թե պարսկական թագի և պարսկական իսկ (քոչվորական) կիրքասիոնի, այլ երկու տեղական և «համարեելյան» թագերի: Այս առումով երկմաս հայկական թագը մասամբ համադրելի է Ք.ա. II հազ. սկզբում Վերին և Ստորին Եգիպտոսների միավորումից հետո ձևավորված «համաեգիպտական» թագին:

<sup>10</sup> Դժվար է ընդունել, թե Տիգրան Բ-ը, ստանձնելով «Արքայից Արքա» տիտղոսը և վերջինիս համապատասխանող Աքեմենյանների ատամնավոր թագը, դրա հետ մեկտեղ իր պաշտոնական ատրիբուտիկայում ընդգրկելու մի էլեմենտ, որը կցուցադրեր նույն Աքեմենյանների համեմատությունը իր տոհմի երբեմնի ստորագաս կարգավիճակը: Գ.Տիրացյանը միանգամայն իրավացի է՝ շեշտելով, որ Հելլենիստական Արևելքի շատ արքայատոհմեր կապակցում էին իշխանության իրենց իրավունքը «պարսից ժառանգության» հետ: Սակայն դրանց շարքում հազիվ թե գտնվեր մեկը, որն ինքնակամ կդնար սեփական գահի անիմաստ նսեմացման: Եվ այն էլ՝ Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր «գահերի» հպատակեցումից հետո:

Ինչ վերաբերում է աքեմենյան սատրապների գլխարկներին, ապա դրանք, ներառյալ Հայաստանի երբեմնի սատրապ Օրոնտես-Երվանդինը, տիպիկ կիրքասիոններ են, որոնց մասնակի տարբերությունները հիմնականում ժամանակային վերաձևությունների արդյունք են:

Այժմ թագի որոշ կառուցվածքային մանրամասների մասին. ենթադրությունն առ այն, թե ականջակալներն ու ծոծրակապը առանձնացվել և ազուցվել են ատամնավոր թագին, իրատեսական չէ: Դաստիարակ Պլուտարքոսի մոտ պահպանված մի Հաղորդումից (Ant. LIV), թագը պարզապես դրվել է նախապես Հազցված գլխանոցին:

Գլխանոցի քննությունը շրջանակներում տեղին է կանգ առնել մի խնդրի վրա ևս: Կոմպոզիցիոն տարբեր լուծումներում քոչվորական կիրքասիոնի պատկերումը սրբազան ավանդույթ էր Պարթևստանի դրամատիկների համար, դրամահատության սկզբնավորումից ի վեր: Սակայն, մինչ Ք.ա. I դարի սկիզբը, կիրքասիոնների տիպերի առատությունը հանդերձ, սրանց զանգվածում չի հանդիպում գլխարկի որևէ պատկեր, մասամբ թեկուզ համադրելի վերը քննարկված գլխանոցի հետ: Վերջինս, մեղական կիսաձվաձև տիարայի գուգակցությունում, «անսպասելիորեն» հայտնվում է Միհրդատ Բ-ի 96/5 թվականից թողարկված դրամների վրա: Պարթևաց «Արքայից Արքայի» պաշտոնական պատկերատիպում նորամուծության ժամանակը և էթնո-հերարխիկ երկու ինքնուրույն ցուցիչների համադրության հանգամանքը տեղիք են տալիս դրանք կապակցելու այս նույն տարիներին Հայպարթևական հարաբերություններում տեղ գտած Հայտնի քաղաքական անցքերի հետ: Սակայն այս հարցադրումը դեռևս կարոտ է հավելյալ քննություն:

Գ. Դիցակապ. Դիպոմա կրելը ևս չէր պատկանում «պարսկական փոխառությունների» թվին: Գ.Տիրացյանը իրավացի է, երբ երկմտում է աքեմենյան իրականությունում այս ավանդույթի կայունության վերաբերյալ — նկատի ունենալով դիցակապի հիշատակությունները անտիկ աղբյուրներում և բացակայությունը արքայական պատկերազրույցի մեջ: Մինչգեո Մերձավոր Արևելքի բազում այլ մշակութային տարածքներում դիցակապի հիշատակություններն ու պատկերները սովորական են և ի հայտ են գալիս Աքեմենյանների քաղաքական ասպարեզ իջնելուց դարեր առաջ: Ք.ա. II հազ. կեսերի խեթական աղբյուրներն անգամ

Հիշատակում են արքայական հանդերձանքի այս տարրի գույները՝ կարմիր և սպիտակ:<sup>11</sup> Երկար ծոպերով ճոխ դիցակապերը առկա են ասուրական արքաներին պատկերող ռելիեֆներում (Նինվե, Խորսաբադ): Դրանք տարածված են նաև ուրարտական պատկերագրության մեջ: Հետագայում Հելլենիստական ընդհանրության ձևավորումից հետո, դիադեման դառնում է արքայական պատկերագրության պարտադիր տարրերից մեկը:

Ասվածից պետք է եզրակացնել, որ դիցակապի առկայությունը հայկական թագի վրա՝ առավելապես տեղական և Հելլենիստական ավանդույթների շարունակության դրսևորում է և ոչ թե արեմենյան մշակույթի ներադրման արդյունք:

Դ. Թագի հերալդիկ պատկերները. Ինչպես արդեն նշվել է, վերջիններիս ակունքները Գ.Տիրացյանը տեսնում է «պարթևա-հելլենիստական աշխարհում»: Չանդրադառնալով բնորոշման ճշտությանը, նկատենք, սակայն, որ այս տեսակետը հաստատելու կոչված եզակի դուգահեռները (Հագրա) չեն նախորդում նույն Տիգրան Բ-ի ժամանակաշրջանին: Եվ դեռ հարկ է պարզել, արդյո՞ք «արծիվ-արև-արծիվ» կոմպոզիցիան չի թափանցել Հյուսիսային Միջագետք Հայոց արքայի արշավանքների հետևանքով: Ինչ վերաբերում է Տիգրանի թագի հորինվածքին, ապա այն, ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մարմնամասերով, միանգամայն հարազատ է վերը Հիշատակված «Ամպրոպի աստված-Արքա» առասպելաբանական սցենարին: Խեթական մշակույթում հատկապես ակներև նրա տարբերակները արմատավորված էին նաև Հայկական լեռնաշխարհում, ընդ որում՝ «պարթևա-հելլենիստական» մշակույթների ձևավորումից շատ ավելի վաղ: Հատկանշական է, ու, թերևս, օրինաչափ, որ Կոմագենեի արքայական թագի պատկերները ևս վերծանվում են նույն առասպելաբանական «բանալիով»:

Տիգրանի թագի վրա արծիվների պատկերին որոշակիորեն ձայնակցում է նաև «Անգղ» (SIC) բերդի տաճարում նրա թագադրման մասին պատումը: Այս դրվագում, ասես, ամբողջանում են իշխանության գաղափարի առասպելական Հենքն ու արքայական պատկերագրությունը:

<sup>11</sup> Ардзунба В., Ритуалы и мифы древней Анатолии, М. 1982, с. 56. Հատկանշական է, որ Կուրտիոս Ռուփոսի հաղորդման համաձայն՝ համադրելի գույներ ունեն նաև պարսկական դիցակապը՝ մանուշակագույն և սպիտակ (Curt. III, 3, 19):

Ուշադրութեան է արժանի նաև թագի կոմպոզիցիայի կենտրոնում գետեղված աստղ/արևը, սովորաբար 8 ճառագայթով (Հմմտ. թագի ատամների քանակի հետ): Ութթևյան աստղը, որպես տարաբնույթ հորինվածքների առանցքային տարր, Արևելքում ավանդական է դառնում արդեն Ք.ա. II հազ. վերջում (տես. կասսիտ Մելիշիպակ II-ի կոթողը և այլն): Սակայն դառնալով մասնավորապես դրամական պատկերագրութեանը, պետք է նշել, որ պարթևականում, ի տարբերութեամբ այլոց, աստղի 8 ճառագայթներով տարբերակն արմատավորվում է Ք.ա. I դ. կեսերից միայն և չի կարող գնահատվել որպես հայկականի նախատիպը:

Ինչ վերաբերում է թագի ընդհանուր պատկերագրական հորինվածքին, ապա այն սուսլիկապես հինարևելյան է և ոչ թե հելլենիստական:

Հայկական ատամնավոր թագի ընդունման ժամանակի մասին դժվար է խոսել վստահորեն: Կովանների ներկայիս ծավալը թույլ չի տալիս հիմնավոր կերպով բանավիճել այդ խնդրի վերաբերյալ նախորդ հետազոտողի ուշագրավ մտքերի շուրջ: Այդուհանդերձ, կարելի է ենթադրել, որ թագի որպես ավարտուն համակարգի, կայացումը տեղի է ունեցել Տիգրան Բ-ի օրոք: Սակայն այն չի եղել ստատիկ. միանգամայն իրավացի է Գ.Տիրացյանը, մատնանշելով նույն հարստութեան և նույնիսկ վերջինիս առանձին ճյուղերի շրջանակներում «մեկնարկային» թագի տարբերակների առկայությունը: Այս երևույթը հատուկ էր Արևելքին, և նրա դրսևորումները ակներև են ինչպես անտիկ դարաշրջանում (Հայաստան, Կոմագենե, Պարթևստան և այլն), այնպես էլ վաղ միջնադարում (Սասանյաններ):

Ամփոփելով Հայոց թագի վերաբերյալ մեր տեսակետը, պետք է փաստել, որ այն իրենից ներկայացնում է բարդ մի համակարգ, որի ձևավորումն ունեցել է տեղական պատմութեամբ, տեղական ավանդույթի և որոշակի նորութեանների բազմաշերտ համադրությամբ: Թագի ընդունումը հնարավոր է մեկնաբանել որպես արտաքին մշակութային ազդեցության մեխանիկական փոխառություն արդյունք: Նրա տիպաբանական և գաղափարախոսական գուգահեռներն ընդգրկում են աշխարհագրական մեծ և մշակութայինորեն ոչ միատարր տարածք: Այդուհանդերձ, թագի տվյալ տիպն իր ամբողջութեան մեջ իրավամբ գնահատելի է որպես հայկական:

ԱՐՏԱՎԱԶԴ ԻԻ ԴԻՄԱՊԱՏԿԵՐԻ  
ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՄԻ ՏԱՐՐԻ ՄԱՍԻՆ

Արտավազդ ԻԻ-ի դրամաթողարկման մեջ այժմ կարելի է առանձնացնել երեք փուլ:

Առաջին փուլը ներկայացնում է առայժմ եզակի պղնձե մի դրամ ΒΑΣΙΛΕΩ[...], ΑΡΤΑΥΑ[...], գրությամբ, որի դիմերեսին Արտավազդի դիմապատկերն է դեպի աջ, երիտասարդ դիմագծերով, թագը վզկալով և իջևցված ականջակալով, գլխի հետևում հունարեն Α տառը: Դարձերեսին պատկերված է, հավանաբար, նոճի, որի երկու կողմից վերոհիշյալ գրությունը վերից վար դիրքով:

Երկրորդ փուլը կազմում են նրա հիմնական թողարկումները՝ դրախմաները և պղինձները, ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΟΥ գրությամբ: Դրախմաների դիմերեսին Արտավազդի կիսանդրին է աջ դիրքով, երիտասարդ դիմագծերով, թագը վզկալով և ականջակալով, որը, սակայն, բարձրացված է վեր: Դարձերեսին պատկերված է դեԱլի ձախ սլացող քառաձի մարտակառք, գլխին ճառագայթապսակ ունեցող կառապանով, որի դիմաց ճախրող Նիկեն նրան պսակ է մատուցում: Կենտրոնական դաշտում եղած Հ և Ζ տառերը ցույց են տալիս, որ դրամները թողարկվել են արքայի իշխանության վեցերորդ և յոթերորդ տարիներին, այսինքն՝ Ք.Ա. 50/49 և 49/8 թթ.: Գրությունը տեղադրված է հորիզոնական դիրքով՝ վերևում և ներքևում: Պղնձե դրամների դիմերեսի պատկերատիպը նման է դրախմաների տիպին, բայց գլխի հետևում պատկերված է Α տառը: Դարձերեսի տիպերը երկուսն են՝ նոճի և Նիկե, որոնց երկու կողմից վերից վար դիրքով տեղադրված է վերոհիշյալ գրությունը:

Երրորդ փուլը ներկայացված է միայն տետրադրախմաներով՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑΥΑΖΔΕΩ ΘΕΙΟΥ գրությամբ: Տետրադրախմաների թե՛ դիմերեսի, թե՛ դարձերեսի

<sup>1</sup> Այս փոքրիկ պղնձե դրամը (կշիռը 2.76 գ, տրամ. 14.0 մմ, առ. հարաբ. 11) որը տեսել եմ անձամբ և վերցրել եմ նրա չափադիտական տվյալներն ու նկարագրությունը, գտնվում է Սիրիայում, մի անձնական հավաքածուի կազմում: Յավոք, ստիպված եմ այն միայն նկարագրել, քանի որ չունեմ դրամի լուսանկարը:

տիպերն ընդհանուր առմամբ կրկնում են դրախմաներինը, երկու սերիաներն էլ կրում են նույն մենագիրը, մանրամասնությունների մեջ, սակայն, որոշակի տարբերություններ կան: Դրանք արտահայտված են գրության, թագը զարդարող տարրերի մեջ, տետրադրախմաների վրա բացակայում է նիկեն, դարձերեսի պատկերը վերցված է ստեմմայի մեջ: Բացի այդ, տետրադրախմաները թողարկված են արքայի իշխանության YZ (17) և IH (18) տարիներին, այսինքն՝ Բ.Ա. 39/8 և 38/7 թթ.:

Արտավազդ II-ի դրամաթողարկման երեք փուլերին համապատասխանում են նրա դրամական դիմապատկերի երեք տիպեր: Դրանցում նկատվող պատկերազրական տարբերություններն առավելապես վերաբերում են թագին:

Արտավազդի վաղագույն պղնձե դրամը ներկայացնում է դիմապատկերի առաջին տիպը, որտեղ արքան պատկերված է նույնպիսի թագով, ինչպիսին տեսնում ենք նրա հոր Տիգրան Մեծի, դրամների վրա (նկ. 1)՝ վզկալով և իջեցված ականջակալներով: Մեզ հայտնի այս միակ օրինակի վրա թագի կենտրոնական մասի պատկերը հստակ չէ, բայց թվում է, թե այն զարդարված է երկու արծիվների միջև գտնվող աստղով:

Դիմապատկերի երկրորդ տիպը ներկայանում է դրախմաների (նկ. 6) և պղնձե մյուս դրամների վրա, ուր թագի պատկերազրության մեջ առկա են, մասնավորապես, երկու հիմնական առանձնահատկություններ, որոնցով Արտավազդի դիմապատկերն արդեն որոշակիորեն տարբերվում է Տիգրան Մեծի դիմապատկերից: Առաջին հայացքից աչքի զարնող տարբերությունը բարձրացված և թագի ճակատային մասում շեղակի ամրացված ականջակալն է, որի շնորհիվ երևում է արքայի ականջը և նրանից կախված ականջօղը: Դրախմաների վրա պարզ երևում է, որ Արտավազդի թագը զարդարված է երկու արծիվների միջև գտնվող ութաթև արև-աստղով:

Արտավազդ II-ի դիմապատկերի երրորդ տիպը ներկայացնում են նրա տետրադրախմաները (նկ. 5): Ընդհանուր առմամբ նման լինելով դրախմայի դիմապատկերի տիպին, այդ թվում և ականջակալի բարձրացված լինելու հանգամանքով, այն տարբերվում է մի էական հատկանիշով՝ թագը կենտրոնում զարդարված է մեծ, ութ ճառագայթներով արև-աստղի խորհրդանշանով, եղբրված Մ-աձև կետավոր շրջանակով, որից ձախ և աջ գտնվող երկու շերտերը լցված են ոլորագիծ, հավանաբար, բուսական զարդանախշերով:

Ինչպես տեսնում ենք, Արտավազդն իր վաղ թողարկած դրամների վրա պատկերվել է ճիշտ այնպես, ինչպես իր հայրը: Հետագայում նրա պատկերադրուժյան մեջ կատարված էական նորամուծուժյուհներ եղավ այն, որ արքան սկսեց պատկերվել բարձրացված ականջակալով ու երևացող ականջով: Ինչո՞ւ: Հազիվ թե ականջը և օղբ ցուցադրելու ցանկուժյուհներ պայմանավորված լինեն միայն Արտավազդի քմահաճուքով և հորից ինչ որ բանով տարբերվելու մղումով: Անշուշտ եղել է նաև խորհրդանշական իմաստ պարունակող մեկ այլ պատճառ, որն ամբողջովին բացահայտել ու հասկանալ ի վիճակի չենք, բայց կարող ենք ենթադրել հնարավոր դրդապատճառի մասին շնորհիվ այն զուգադիպուժյան, որ հանդիպում ենք նույն ժամանակների պարթև արքաների դրամական դիմապատկերներում:

Ականջը և նրանից կախված օղբ ծածկող երկար մազերով արքայական դիմապատկերը պարթևական դրամների վրա ձևավորվեց Ք.Ա. 80-ական թվականների ընթացքում և շուտով դարձավ գերիշխող տիպը (նկ. 2-4): Դրան զուգահեռ, Ք.Ա. I դ. առաջին կեսին կար դրամական դիմապատկերի մեկ այլ տիպ, որտեղ արքան պատկերվում էր խուլյրով, որն ուներ վզկալ և ականջները ծածկող ականջակալներ: Տիգրան Մեծին ժամանակակից պարթև արքաների դիմապատկերների երկու ձևերում էլ ականջը քողարկված է կամ ականջակալով (Sel., types 28, 29, 31, 32, 33, 34, 37, 39), ինչպես Տիգրանի դիմապատկերներում, կամ երկար մազերով (Sel., types 30, 35, 36, 38, 40, 41): Արտավազդի ժամանակակիցը՝ Որոդես II-ը (57-38 Ք.Ա.), նույնպես պատկերվում էր ականջը ծածկող երկար մազերով (Sel., types 42-48, նկ. 7-8), մինչդեռ նրա որդի և գահակից, Արտավազդ II-ի փեսա Պակորոսը դրամների վրա պատկերված է անմորուս, կարճ մազերով, երևում է ականջը և նրանից կախված օղբ (Sel., types 49, նկ. 9): Պակորոսը զոհվեց Ք.Ա. 38-ին, Սիրիայում հռոմեացիների դեմ կռվելիս, իսկ որոշ ժամանակ անց Որոդես II-ը պարթևական գահը հանձնեց իր ավագ որդուն՝ Հրահատ IV-ին (38-2 Ք.Ա.), որին դրամների վրա տեսնում ենք ականջները ծածկող երկարամազ սանրվածքով (Sel., types 50-55, նկ. 11-12): Պակորոսից հետո այս ավանդուժյուհ երկրորդ անգամ խախտում է Հրահատակը (Ք. Ա. 2- Ք. Հ. 4 թթ.), Հրահատ IV-ի որդին, որը ծնվել էր Օգոստոսի կողմից պարթև արքային որպես նվեր ուղարկված իտալուհի Մուսայից: Տետրադրամների վրա, որոնք թողարկվում էին առավելապես հունական կամ հելլենականացած բնակչուժյուհ

ունեցող Տիգրիսի Սելեկիայում, Հրահատակը թեև պատկերվում էր երկար մազերով, բայց այնպես, որ ընդգծված կերպով երևում էր ականջը և օղը (նկ. 15): Մինչդեռ դրախմանների ու բրոնզե դրամների վրա, որոնք հատվում էին քաղաքներում, ուր գերակշռում էր իրանական բնակչությունը և իրանականմշակութային ազդեցությունը, արքան պատկերվում էր ավանդական տեսքով՝ ականջները ծածկող երկար մազերով (նկ. 17):

Հրահատակից հետո, Հռոմում դաստիարակություն ստացած և ակնհայտորեն հռոմեասեր Վոնոնը (Ք.Հ. 8-12 թթ.) թե՛ տետրադրախմանների, և թե՛ դրախմանների վրա պատկերվում էր բաց ականջով (Sel., types 60, YI. 19-20): Ահա գրեթե այս նույն ժամանակներում (այսինքն՝ Ք.Հ. առաջին տասնամյակում) հայկական դրամների վրա կրկին ի հայտ է գալիս ականջը և օղը ցուցադրող արքայական դիմապատկերը, այս անգամ վերը հիշատակված Տիգրան V-ի դրամների վրա (Bed. no. 167, նկ. 18): Նկատենք, որ Արտավազդ II-ից հետո իշխած մյուս հայ արքաների՝ Տիգրան III-ի (Bed. nos. 137-147, նկ. 10), Տիգրան IV-ի (Bed. nos. 148-159, 161-162, նկ. 13), Արտավազդ III-ի (Bed. no. 160, նկ. 14) դրամների վրա թագը պատկերվում էր իջեցված ականջակալով:

Ականջը և օղը պատկերելու միտումը որոշ ժամանակ պահպանվում էր Վոնոնին հաջորդած Արտավան II-ի (Ք.Հ. 10-38 թթ.) տետրադրախմանների վրա (Sel., types 61, 62, նկ. 21), իսկ դրախմանների վրա շարունակվում էր ավանդական ձևը (նկ. 22): Հաջորդ արքաները՝ Վարդան I-ը (Ք.Հ. 40-45 թթ., Sel., types 64, նկ. 23-24), Գոտարզ II-ը (Ք.Հ. 40-51 թթ., Sel., types 65, 66) և մյուսները, ովքեր պատկերվում էին առանց թագի, վերադառնում են դիմապատկերի ավանդական՝ ականջը ծածկող երկար մազերով, ձևին:

Ահա այսպիսին է Ք.Ա. I դարի երկրորդ կեսին և Ք.Հ. I դարի առաջին տասնամյակներին պարթևական և հայկական դրամների վրա հանդիպող պատկերազրական այս տարրի «վարքը»: Այժմ փորձենք հասկանալ դրա ի հայտ գալու և անհետանալու պատճառները: Կրկին անդրադառնալով Պակորոսին, հիշենք, որ նա գործակցում էր հռոմեացի զորավար Լաբի-

<sup>2</sup> Արտավազդ II-ի անմիջական հաջորդի՝ Արտաշես II-ի պղնձե հազվագյուտ երկու փոքրիկ դրամների վրա լավ երևում է, վզկալը, բայց ականջակալի առկայությունը պարզ չէ. թվում է, թե այն ոչ թե բարձրացված է վեր, այլ բացակայում է: Ականջը և օղը նույնպես հնարավոր չէ տարբերել:

ենոսի հետ, որի եռանդուն մասնակցութեամբ կազմակերպվեցին ու իրականացվեցին պարթևների սիրիա-փյունիկյան արշավանքները Ք.Ա. 39, 40 թթ., և որ Պակորոսի հանդեպ Սիրիական նվաճված քաղաքներում «արտակարգ սեր էին տածում, ինչպես մի ժամանակ իրենց վրա իշխած լավագույն թագավորների հանդեպ, նրա արդարամտութեան և համեստութեան համար»:<sup>3</sup> Այս տեղեկությունները, զուգորդելով նրա դիմապատկերային առանձնահատկությունների հետ, թույլ են տալիս ենթադրել Պակորոսի փոխարձ համակրանքի մասին հունահռոմեական մշակութային առանձին դրսևորումների նկատմամբ: Ուստի կարելի է համաձայնվել Դ.Սելվոդի մեկնաբանության հետ, ըստ որի Պակորոսի կարճ մազերով, անմորուս դիմապատկերի հայտնվելն այն ազդեցության հետևանքն է, որ ուներ նրա վրա իր «անվանական ենթական»՝ Հռոմին դավաճանած Լաբրենոսը:<sup>4</sup> Կարճ սանրվածքը, սափրված դեմքը, ականջը և օղը երևալու հանգամանքներն ինքնին զուտ հռոմեական յուրահատկություններ չեն, բայց դիմապատկերի նման տիպի հայտնվելը հենց այս պատմական իրավիճակում կարող է մեկնաբանվել միայն որպես հունահռոմեական դիմապատկերային կանոններին որոշ չափով մոտենալու ձգտում, այնքանով, որքանով այն տեղավորվում էր պարթևական պատկերադրական կանոնների սահմաններում:

Այս միտումն առավել ևս ակնհայտ է դրսևորված Հրահատակի (Sel., types 58) և, հատկապես, Վոնոնի թե' դիմապատկերներում, և թե' դրամական պատկերատիպերի մյուս տարրերում ընդհանրապես: Պարթև այս երկու արքաների Հռոմի հետ առնչված լինելու մասին գրավոր և դրամագիտական տրվյալների փոխհամաձայնությունն ավելի որոշակի է: Հրահատակը Հրահատ IV-ի և իտալուհի Մուսայի որդին էր: Մուսայի դիրքն ու ազդեցությունն այնքան մեծ էր,<sup>5</sup> որ Հրահատակի դրամական

<sup>3</sup> Dio Cass., XLIX, 20, 4 (Ս.Կրկյաշարյանի թարգմանությունը, Հին հունական աղբյուրներ Ա, Երևան, 1976)

<sup>4</sup> Sellwood, D.G., Parthian Coins, in The Cambridge History of Iran 3 (1), Cambridge, 1983, p. 291.

<sup>5</sup> «Եթե նա (Մուսան) արդեն դարձավ այնպիսին, որ նրա ամեն ասածը թագավորի (Հրահատ IV-ի) հավանությունն էր արժանանում, շտապեց իր որդուն դարձնել պարթևների առաջնորդ...», «Այսպիսով նրանք (Հրահատ IV-ի մյուս որդիները), քանի որ Փրատտեսի համար հեշտ չէր հակաճառել թեսմուսայի թեղաբանքներին, ուղեկցվեցին Հռոմ» և այլն, տե'ս Josephus Antiquitates Jud., XVIII, 39-44 (Ս. Կրկյաշարյանի թարգմանությունը, Հին հունական աղբյուրներ Ա. Երևան 1976):

Թողարկումներից մեկի դարձերեսին (*Sel.*, types 58), պարթևական դրամաթողարկման ամբողջ ընթացքում միակ անգամ, պատկերվել է Թագուհու դիմապատկերը՝ նրա անվամբ և աստվածային տիտղոսներով (նկ. 16): Ուստի երկար մազերով, բայց ականջը բաց թողնող սանրվածքի ի հայտ գալը Ք.Ա. I դ. վերջին և Ք.Հ. I դ. առաջին երկու տասնամյակներում, այս համատեքստում նույնպես կարող է դիտարկվել որպես հռոմեական ազդեցությունների գրասևրում, քանի որ և՛ դրանից առաջ (բացառությամբ Պակորոսի), և՛ դրանից հետո պարթևական արքաների դիմապատկերներում ականջը քողարկվում էր երկար մազերով:<sup>6</sup>

Ինչ վերաբերում է Վոնոն I-ին՝ Հրահատ IV-ի մյուս որդուն, նա, ինչպես ասվեց վերևում, դատարարակվել էր Յոնոմում,<sup>7</sup> ձեռք բերելով պարթևներին խորթ աշխարհայացք և վարքագիծ ու այդ պատճառով ատելի էր դարձել նրանց:<sup>8</sup>

Այսպիսով, Հայկական (Արտավազդ II, Տիգրան V) և պարթևական (Պակորոս I, Հրահատակ, Վոնոն I, Արտավան II) դրամներում նկատվող այս գուգադիպությունը դժվար է պատահական համարել: Այն, Ք.Ա. 40-30-ական թվականներին, և ապա I դ. վերջին և Ք.Ա. I դ. սկզբի տարիներին պարթևական և Հայկական դրամական պատկերազրույթյան մեջ հռոմեական ազդեցություններից արձագանքներից մեկն էր:

<sup>6</sup> Պարթև թագավորների երկար մազեր պահելու սովորույթի մասին կարելի է միայն ենթադրություններ անել, մինչդեռ, պատկերազրական առումով, Ք.Ա. 80-ական թթ. իշխած անհայտ արքայի (*Sel.* 30) տետրադրախմաները ցուցադրում են նախկինում պարթև արքաներին բնորոշ կարճ սանրվածքը երկարամազ սանրվածքի վերափոխվելու փուլերը (տե՛ս, օր., *Dobbins, W., The Successors of Mithradates II of Parthia, Numismatic Chronicle XV (1975), Pl. 2, 2-6*), որից հետո երկար մազերը ձեռք են բերում ավանդական սանրվածքի բնույթ (տե՛ս նկ. 2-4):

<sup>7</sup> *Josephus Antiquitates Jud.*, XVIII, 52.

<sup>8</sup> *Josephus Antiquitates Jud.*, XVIII, 46-47.



2

4



5

6

7

8



10

11

9



13

12



14

15

16

17



18

19

20



21

22



23

24

ՏԱՐԱԶԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՅ.

ՀԱՅ-ՀՈՒՆԱ-ՀՌՈՍՄԵԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ  
ՓՈԽԱՌՆԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծանուն հայագետ, հնագետ Գևորգ Տիրացյանը իր հույժ ուշագրավ հոդվածում<sup>1</sup> ներկայացրել է մի շարք կարևոր նկատառումներ մ. թ. ա. III - մ. թ. III դդ. թվագրվող հայկական տարազի վերաբերյալ, որոնք այսօր էլ չեն կորցրել գիտական արժեքը: Միանգամայն ընդունելի է հեղինակի անհամաձայնությունը Վ. Հացունու այն տեսակետին, ուր դիտարկվող ժամանակաշրջանի տարազը ներկայացվել է «մարսեկեկյան» և «պարթևական» խորագրերով, անհարկի գերահաստեղծով այլ էթնիկ մշակույթի ազդեցությունը հայկական տարազի համակարգում<sup>2</sup>: Հնագիտական և մատենագրական նյութերի համադրմամբ, հեղինակը վերականգնել է հայոց տարազի նկարագիրը: Տարազը, ըստ այդ նյութերի, ունի հետևյալ կառուցվածքը. վարտիք, պարեգոտ-պատմուճան, քղամիդ-մեկնոց, գլխի հարդարանք, ոտնաման<sup>3</sup>: Դրա հիման վրա Գ. Տիրացյանը բաղդատելով հայկական տարազը արևմտյան՝ հունա-հռոմեականի և արևելյան՝ իրանական տարազների հետ, արել է կարևոր եզրահանգումներ հայոց տարազին քննատիպություն, հայ էթնոսին հարևան էթնիկական ընդհանրությունների հետ ունեցած մշակութային փոխառնչությունների վերաբերյալ: Ընդհանուր գծերին զուգահեռ՝ (քղամիդ՝ ճարմանդով ամրացվող) հայոց տարազը հունա-հռոմեականից տարբերվել է գլխի հարդարանքի տարրերի առկայությամբ, դրանց ձևով և երկար վարտիքով:

Նեմրուժ-դաղի պատկերաքանդակների, հայկական և հռոմեական դրամների վրա եղած հայկական թագերն ունեն առանձնահատկություններ: Այսպես՝ Տիգրան Մեծի թագն ունի երկու արծվով և արևանախշով հորինվածքային լուծում, թագն ունի մարգարտազարդ ականջապանակ: Թագազարդ ժպավենը հանգուցված է ծոծրակին և ծայրերը կախված են

<sup>1</sup> Գ. Տիրացյան, Դիտողություններ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազի մասին: - Տեղեկագիր, 1959, 11-12, էջ 97-101:

<sup>2</sup> տես Վ. Հացունի, Պատմություն հայ հին տարազին, Վենետիկ, 1923:

<sup>3</sup> Գ. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 98-99:

ուսերն ի վար <sup>4</sup>: Տիգրան Դ-ի կնոջ՝ Էրատոյի թագի մարգարտազարդ կախիկների ավանդույթները շարունակվել են հայկական միջնադարյան և ժողովրդական տարազաձևերում:

Հնարավոր է, որ հայ Արշակունիները կրել են Արտաշիսյանների նման թագ, որը երբեք սրածայր չի եղել: <sup>5</sup> Մինչդեռ Միհրի գլխարկը սրագագաթ էր: Արտաշատի կավե արձանիկներից մեկի գլուխը հարդարված է ուղիղ գծերով ժապավենաձև գլխազարդով: <sup>6</sup> Իսկ զինվորի արձանիկի տարազում (պահվում է Հայաստանի պատմութան պետական թանգարանում) կոնաձև գլխարկի ականջակալները ծածկում են ուսերը: <sup>7</sup> Արտաշատի կորոպլաստիկայի նյութերը կարևոր աղբյուր են ժամանակաշրջանի տարազի, հատկապես գլխի հարդարանքի ուսումնասիրութան առումով: Արտաշատի քնարահարի արձանիկներից մեկն ուշագրավ է նաև ազգային տարազի գլխի հարդարանքի տափակ ձևով, «որը հայերի կենցաղում պահպանվել է առայսօր»: <sup>8</sup> Գլխի հարդարանքի տիպով հայկական տարազը տարբերվում է հունա-հռոմեական և պարթևական համալիրներից: Հունա-հռոմեական տարազի համալիրում փակ տիպի գլխի հարդարանք չի օգտագործվել (կիրառվել են ճակատակալներ, գլխի ժապավեններ, պսակներ և այլն): Պարսիկ ազնվականների գլխանոցը ևս տարբերվում էր հայկականից: Այսուհանդերձ, հնագետի և տարազագետի համատեղ ուսումնասիրություններն առավել ամբողջական կդարձնեին հելլենիստական տարազի դիտարկվող համակարգի հետազոտումը:

Մեր դիտարկումներով հայոց տարազի համակարգում վարտիքի առկայությունը դրա ինքնատիպ լինելու կարևոր կռվան է, և մշակութային այդ տարրի՝ «քոչվորական, թյուրքական» համարվելու կարծիքն անհիմն է: <sup>9</sup> Վարտիքը որպես տարազի մաս հին պատմությունն ունի: Դրա կիրառության փաստը հայտնի է դեռևս ուրարտական մշակույթից: Մյուսնխենի թանգարանում պահվող ձիու փորքաշի վարդի վրա

<sup>4</sup> Ա. Պատրիկ, Հայկական տարազ, Եր., 1986, տախտակ 6, էջ 28:

<sup>5</sup> Ժ. Խաչատրյան, Արտաշատ II, Անտիկ դամբարանադաշտեր (1971-1977 թթ. պեղումները), Եր., 1981, էջ 183:

<sup>6</sup> Անդ., էջ 184:

<sup>7</sup> Անդ., էջ 185:

<sup>8</sup> Անդ., էջ 178:

<sup>9</sup> В. Курьлев, Одежда, анатолийских туток. - В кн.: Традиционная культура народов Передней и Средней Азии, Л., 1970. Сборник музея антропологии и этниграфии, т. 26, стр. 244.

պատկերված նետաձիգը կրում է ծնկները գԿրկող վարտիք:<sup>10</sup> Ուշադրութուն դարձնենք զգեստի անվանման վրա, ըստ Հր. Աճառյանի, այն պահլավերեն «ծածկել» հոմանիշ ձևից է:<sup>11</sup> Այն հայերենում հոգնակի թվով է գործածվել: Զգեստի այս մասը, ինչպես և թեքերը սկզբնապես առանձին զգեստներ են եղել, քուղերի, կալիչների օգնությամբ կապվել են մարմնի համապատասխան մասերին, հետո կարի զարգացմամբ, առանձին մասերն իրար են միացվել:<sup>12</sup> Արդյունքում՝ մի նոր ամբողջական զգեստ՝ հին անվանմամբ, որը իրի ծագումնաբանության բացահայտման յուրատեսակ բանալի է:

Նեապոլի Պոսեյդոնյան թանգարանում պահվող կնոջ տարազով քանդակը ներկայացնում է Հռոմեական կայսրության տիրույթներից մեկը Արմենիան (մ. թ. II դ.): Տիկինը հագել է երկար վարտիք, գոտիով ամրացված և ինչերը վեր բարձրացած երկարաթև պատմուճան, աջ ուսին՝ գնդաձև ճարմանդով ամրացված քղամիդ մեկնոց: Գլխին կրում է բարձրադիր, աստիճանաբար նեղացող (հատած կոնի ձևով), մինչև ուսերը հասնող հարդարանք:<sup>13</sup> Մ. թ. II դ. սկզբում Հայաստանի գահակալ Պարթև Արշակունին (Հռոմի Տրոյանոսի Հուշասյան քանդակներից մեկի վրա) կրում է վարտիք, երկարափեշ պատմուճան գոտիով և աջ ուսին ճարմանդով ամրացվող մեկնոց:

Բրիտանական թանգարանում գտնվող II դ. թվագրվող Հռոմեական դրամների վրա «Հայաստանը պարտյալ» գրության տակի կերպարները կրում են երկարափեշ պատմուճան գոտիով, եզրերը ալիքաձև գդակ-թագ, կոնաձև, ստորին մասում ալիքաձև կտրված գլխարկ: Զինվորները երկարաթևք և կիսաթևք պարեգոտով են, վարտիքով, գլխներին կրում են սրածայր գլխարկ, ոտներին՝ սրաքիթ ճտքակոշիկ և կենտրոնում ամրացվող թիկնոց:<sup>14</sup>

Նկատվում է արտառոց երկակի մոտեցում՝ դիտարկվող ժամանակաշրջանի հայկական տարադի նկատմամբ: Ոմանք այն նույնացնում են մարական, պարթևական հագուստի, ոմանք էլ՝ հունականի հետ. երկուսն էլ, ըստ իս, արդարացված չեն:

<sup>10</sup> Ս. Նսայան, Ս. Հմայական, Ուրարտական զգեստը. - Պ. Բ. Հ., 1980, 3, էջ 209:

<sup>11</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Եր., 1982, հ. 4, էջ 325-326:

<sup>12</sup> Ю. Липперт, История костюма, СПб., 1907, стр. 122-123:

<sup>13</sup> Ա. Պատրիկ, նշվ. աշխ., տախտակ 9.1:

<sup>14</sup> Նույն տեղում, տախտակ 87 1-5, էջ 190:

Ըստ Ստրաբոնի տեղեկությունների (մ.թ.ա. I- մ.թ. I դդ.), «իբերները հանդերձավորվում են մեղական և հայկական ձևերով»:<sup>15</sup> Մի այլ տեղ Ստրաբոնը նշել է. «...մարաց սովորություններից շատերը նման են հայոց հետ, ...պարսկական կոչված երկար զգեստը մարերից են պարսիկներին անցել: Հագուստներն են՝ ապարոշ (տիարա), խուլյր (կիտարիս), թաղիքե գլխարկ (պիլոս), երկար թևքերով վերարկուներ և լայն տաբատներ, որոնք ցուրտ և հյուսիսային երկրներին հարմար զգեստներ են»:<sup>16</sup>

Նույն հեղինակի մի այլ տեղեկությամբ՝ «ասում են, թե հայոց զգեստը թեսալական է, ինչպես այն երկար վերարկուները, որ ողբերգությանց մեջ թեսալական են կոչվում և գոտիով կապվում կրծքի վրա, և այն շորերը, որ ողբերբրգակները օրինակել են թեսալացիներից...»:<sup>17</sup>

Իրանականի հետ համեմատած հայկական պատմուճանք երկարափեշ է եղել: Պարթևական համալիրին բնորոշ էին կարճ, մինչև ծնկները հասնող վերնազգեստներ: Իր հերթին, հայկական երկարափեշ զգեստը տարբերվում էր հունականից երկար թևքերով, հունական և հռոմեական տարադիրն հատուկ էր կարճ, մինչև ծնկները հասնող խիտոն:<sup>18</sup> Հայ և հունահռոմեական տարազների համեմատությունից երևում է հայկականի առանձնահատկությունը: Ամենամեծ տարբերությունը երկար վարտիքի գործածությունն է: Հայկական տարազն արևմտյան տարազաձևերից տարբերվում է նաև գոտիով կապվող երկարափեշ զգեստով: Ստրաբոնի հայկական տարազի ծագման թեսալական վարկածը թեական է թվում իր իսկ հեղինակի խոսքերից: Հավանական է թվում հայկական տարազի սերտ կապերն ուրարտական զգեստի հետ: Մեզ հասած ուրարտական զգեստների պատկերներն ակնհայտ նմանություն են դրսևորում հայկական միջնադարյան մանրանկարներից հայտնի տարազի առանձին մասերի, առնձնապես գլխի հարդարանքի տիպերի հետ: Հատկանշական է թվում, որ երկարափեշ զգեստի ավանդույթները հետագայում պահպանվեցին և հարատևեցին հայ կանանց ավանդական տարազի բոլոր համալիրներում, ինչպես նաև Կարնո տղամարդկանց տարազի

<sup>15</sup> Страбон, География, Л., 1967, 13.

<sup>16</sup> Ստրաբոն, Եր., 1940, էջ 81:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>18</sup> Գ. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 100-101:

Համալիրում և տղամարդկանց արևելահայկական տարազա-  
ձևում.<sup>19</sup>

Վերնազգեատ-պարեգոտը, ըստ մատենագրական և ազգա-  
գրական-բանահյուսական նյութերի, միջնադարյան Հայաստա-  
նում հայտնի է եղել կապա, ճ(ջ)ուկպա անվանումներով.<sup>20</sup> Ըստ  
Վ. Հացունու, կապան համարժեք է պարսկական գաբային և  
նշանակում է պարեգոտ, իսկ ազնվականներինը կոչվել է պատ-  
մուճան.<sup>21</sup> Ճ(ջ)ուկպան արաբերենից փոխառված լայնաթեզան  
վերարկուն է:<sup>22</sup>

Ինչ վերաբերում է թիկնոցին (բղամիդ, մեկնոց), ապա դրա  
թաղիքե տարբերակի մասին տակավին հիշատակել է հույն պատ-  
միչ Քսենոփոնը «Անաբազիսում»:<sup>23</sup> Փ. Դյուբուա դե Մոնպերեն<sup>24</sup>  
տղամարդկանց հնամենի ունաչորը համեմատել է կովկասյան  
այծենակաճի (յափունջու) հետ: Քղամիդ թիկնոցը հետագայում  
կովկասյան տարազաձևում օգտագործվող թիկնոցն է, այն ևս  
գցվում է ուսերին, տարբերութամբ, որ հին օրինակը  
պատրաստվում էր նուրբ, բարակ կտորից, իսկ կովկասյանը  
ամուր և կոշտ թաղիքից:

Հայոց տարազի համակարգում հաճախ են հանդիպում այլէթ-  
նիկ ծագմամբ, հատկապես թուրքերենից (արխալուղ, յափունջի,  
չալվար, բաչլիկ, յամանի, չարուխ), պարսկերենից (չուխա, կապա  
և այլն) փոխառյալ բառեր, որոնց կիրառությունը կապված է  
Առաջավոր Ասիայի ժողովուրդների պատմական ճակատագրի  
հետ: Հակված ենք կարծելու, որ փոխառված անվանումը բնավ չի  
ենթադրում, որ այս կամ այն անունը կրող երևույթը ևս պետք է  
փոխառված լինի: Բավական ճիշտ է թվում այն կարծիքը, ըստ  
որի ինքը՝ առարկան, ավելի հին է, քան դրա անվանումը.<sup>25</sup>

<sup>19</sup> Ս. Պողոսյան, Երբակ - Զավախքի տղամարդու ավանդութային  
տարազը. - ՊԲՀ, 1993, 1-2, էջ 130:

<sup>20</sup> Աբրահամ Կրետացի, Պատմություն, Եր., 1973, էջ 161. Նահապետ  
Քուչակ, Հայրենիք; Մ. Աբեղյան, Հին դուստնական ժողովրդական երգեր,  
Եր., 1931, էջ 17, 123-140:

<sup>21</sup> Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 200, 222:

<sup>22</sup> Կույն տեղում, էջ 226-227:

<sup>23</sup> Քսենոփոն, Անաբազիս, Եր., 1970, էջ 118:

<sup>24</sup> Дюбуа де Монпере, Путешествие вокруг Кавказа, Сухуми,  
1937, стр. 43.

<sup>25</sup> Е. Н. Студенецкая, Общие черты в мужской одежде народов  
Северного Кавказа и их отражение в терминологии. - В кн.:  
Проблемы картографирования в языкознании и этнографии, Л.,  
1974, стр. 263.

Մշակութային ընդհանրություններ, աղերսներ հարևան էթնիկական հանրությունների տարազի համակարգերի հետ՝ անխուսափելի են, սակայն հայկական տարազը միշտ էլ պահպանել է իր ուրույն հիմնական գծերը: Ոչ մի էթնիկական հանրություն կուրորեն չի փոխառում այլէթնիկ մշակութային այս կամ այն տարրը, այլ նույնիսկ յուրացնելու պարագայում դա հարմարեցնում է իր կենցաղամշակութային համալիրի առանձնահատկություններին: Տարազի որոշ տարրերի դիտարկումը<sup>26</sup> ցույց է տալիս հնուց եկող մշակութային ավանդությունների ժառանգորդված կապը, որ, անկախ անվանումից, տեղաբնիկ լինելու լավագույն փաստարկներից է: Հայկական ավանդական տարազի համակարգում կան օտարամուտ անվանումներ, որոնք հաճախ զուտ լեզվական փոխառություններ են, բնիկ արմատական երևույթների փոխառված կաղապարներ, որոնք ոչ մասնագետներին թյուրիմացությունների տեղիք են տալիս, որպիսի երևույթն առկա է ժողովրդական մշակութի մյուս բնագավառներում ևս:

26. Աշխարհի ժողովուրդների տարազներ (պարսկերեն լեզվով);  
Н. М. Каминская, История костюма, М., 1986, стр. 13-27.

Բիշլիոնն Ռաֆանելե, Հակոբյան Հայկ,  
Հմայակյան Սիմոն, Պարմեջիանի Նեդա

ԱՐՏԱՇԵՍ ԱՐՔԱՅԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՍԱՀՄԱՆԱՔԱՐԸ  
ՍԱՐՈՒՆԱՆԻՑ

(նախնական հաղորդում)

Սահմանաքարը գտնվել է Գեղարքունիքի մարզի Սարու-  
լսան գյուղի Հյուսիսային մասուլյանների մոտ «Պալի տակ»  
վայրում գյուղի բնակիչների կողմից:

Սահմանաքարը տաշված է բաղալտից (բարձր. 140 սմ) վե-  
րևում ունի երեք «սեպերից» կազմված թագ հիշեցնող  
ստամնաշար, արձանադրության համար նախատեսված ուղ-  
ղանկյունաձև, լավ տաշված իրան և հոժ կտրվածքում կլոր  
պոչուկ (երկար. 76 սմ, նկ. 1, 2):

«Պալի տակը» դամբարանադաշտ է, որն  
այժմ բանջարանոցների է վերածված: Այս-  
տեղ մեր կողմից հայտնաբերված ամենահին  
իրը բրոնզե սակրը կարող է թվագրվել ուշ  
բրոնզի դարով, իսկ ամենաուշ թվագրու-  
թյուն ունեցողը սահմանաքար է: Վերջինս  
ծածկված է եղել 2-3 այլ քարերով ու 0,5 մ  
հաստությամբ հողաշերտով: Հնարավոր է, որ  
այն ծառայել է որպես սալաքար ավելի ուշ  
կառուցված դամբարանի համար:


«Պալի տակից» վեր սկսվում է մի ոչ մեծ  
սարահարթ, որի վրա գտնվում է Ծաղ-  
կավանի շուրջ 7 հա տարածք գրավող ամրո-  
ցը: Ամրոցի հարավային պարսպից քիչ արև-  
մուտք, ժայռի արևմտյան ծերպին, հենց  
«Պալի տակի» վերևում կա երեք կողմերից  
իրար ջմիացող ժայռերով ամփոփված շուրջ  
15 մ<sup>2</sup> զբաղեցնող հարթեցված փոքրիկ մի  
տարածք, որտեղ շրջակա ժայռերից նեղ  
ճեղքվածքներով անջատված ժայռաբեկորը տաշվել է ոչ բարձր  
պատվանդանի ձևով: Պատվանդանի կենտրոնում կա  
ձաղարաձև մի փոքրածք, որն ունի շուրջ 20 սմ խորություն և  
23,7 սմ շրթի տրամագիծ: Կստարված չափումները ցույց  
տվեցին, որ սահմանաքարը հանգիստ և բավականաչափ ամուր  
կարող էր կանգնած լինել այս պատվանդանի վրա: Ուշագրավ



նկ. 1

ճեղքվածքներով անջատված ժայռաբեկորը տաշվել է ոչ բարձր  
պատվանդանի ձևով: Պատվանդանի կենտրոնում կա  
ձաղարաձև մի փոքրածք, որն ունի շուրջ 20 սմ խորություն և  
23,7 սմ շրթի տրամագիծ: Կստարված չափումները ցույց  
տվեցին, որ սահմանաքարը հանգիստ և բավականաչափ ամուր  
կարող էր կանգնած լինել այս պատվանդանի վրա: Ուշագրավ

է, որ ձագարածէ փորվածքի շուրթը՝ դեպի բաց, «Պալի տակին» նայող հարավակողմում փոքրիկ կոտրվածք ունի: Հնարավոր է, որ այն առաջացել է կոթողը տեղաշարժելիս ու գցելու ժամանակ: Հենց այստեղ, ժայռերի մեջ մի բացվածք կա, որտեղից և քարը կարող էր ընկած լինել «Պալի տակ»:



նկ. 2

Սարուխանի սահմանաքարը թվով տասներորդ արձանագիրը արտաշիսյան կոթողն է՝ գտնված Հայաստանի Հանրապետության տարածքում և վեցերորդը՝ Աևանի լճի ավազանում:<sup>1</sup> Համաձայն աշխարհագրական բաշխվածության, այս կոթողների հայտնի շարքը ձգվում է Սպիտակից մինչև

<sup>1</sup> Ե.Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1927; Ս.Բարխուդարյան, Երկու արամեերեն արձանագրություններ: Նյութեր հին Հայաստանի պատմության, Երևան, 1935:

А.Я.Борисов Нагниси Артаксия (Арташеса), царя Армении. ВДИ, 1946, № 2. А. Dupont-Sommer. Les inscriptions aram é ennes trouvées du lac S é van (Arm é nie). Syria, t. 25, 1946-1948.

И.М.Дьяконов, К.Б.Старкова, Нагниси Артаксия (Арташеса), царя Армении. ВДИ, 1955, № 2.

Տիրացյան Գ. Արտաշես I-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը. «Տեղեկագիր հաս. գիտ.», 1957, թիվ 10;

P é rikhanjan A. Les Inscriptions aram é ennes du roi Artach é s (A propos d'une r é cente trouvaille é pigraphique en Arm é nie). Revue des Etudes Arm é niennes, N. S., t. VIII, 1971, p. 169-174.

Միսիան, Հանրապետության մի ծայրից մյուսը, շրջանցելով Արարատյան դաշտը: Բացառությամբ Իշխանասարի (Միսիանի) սահմանաքարի, մյուս ինը կոթողները գտնված են փոքր միջագետքերում (Կարմիր, Սարուխան, Գեղհովիտ, Վաղաշեն), գետերի հանգիստակաց (Ծակքար, Լիճք), կամ միևնույն (Թեղուտ, Կարմիր, Սարուխան) ափերին մոտ: Ինչպես Թեղուտի, այնպես էլ Սևանի: ավազանի սահմանաքարերը տարածության մեջ դրսևորվում են զույգերի և սրանցից գոյացող ավելի մեծ համալիրների միջոցով (Կարմիր-Սարուխան, Ծակքար-Լիճք, Գեղհովիտ-Վաղաշեն):

Հավանաբար, հողակտորները, որոնց իրական չափերի մասին առայժմ կարելի է կատարել սոսկ ենթադրություններ, շատ թե քիչ որոշակի բաժանվում էին բնական սահմաններով՝ բլուրներով, գետերով, դրանց վտակներով, և սահմանաքարերը դրված էին գյուղերի և ագարակների սահմանների միջև, կարելի է կարծել, առավել վիճելի արտաքին ընգծված սահմաններ չունեցող հատվածներում: Վերջիններս էլ հարթության վրա հեշտ նշմարելի էին, դատելով Մովսես Խորենացու հետևյալ, արդեն բազմիցս շոշափված տեղեկությունից այն մասին, որ Արտաշեսը հրամայեց տաշել քառակուսի քարեր, մեջը պնակի նման փոսցնել և թաղել հողի մեջ, իսկ նրանց վրա կանգնեցնել քառակուսի կոթողներ՝ գետնից քիչ բարձր (Բ, ծղ): Սրանք պատմահայրն ինքն էլ կարող էր տեսած լինել՝ ճանաչած ու համեմատած լինելով «Պրոբոսի և Արտաշիրի» ժամանակների «սահմանացույց փոսերի»՝ «գետնի մեջ կանգնեցրած քարերի» հետ (Խորենացի, Բ, հէ):

Արտաշիսյան սահմանաքարերը չափերով ու հատկապես ձևով միմիանցից քիչ տարբերվելով, դրսևորում են բուն արձանագրության կառուցվածքի ու բովանդակության տարբերակումներ: Կարելի է ընդհանուր առմամբ արձանագրել տեքստերի երեք կամ չորս տարբերակների փաստը: Սրանցից առաջինը կամ «ընդարձակը» հայտնի է Թեղուտի զույգ օրինակներում<sup>2</sup> (Գիլիջանից ոչ հեռու Աղստևի ձախ ափից): Սրանցում տրված են հողաբաժանման տարին, Արտաշես արքայի առավել ընդարձակ տիտղոսաշարը, նրա կողմից գյուղերի միջև հողը բաժանելու փաստը:

<sup>2</sup> Գ. Կարախանյան, Արամեերեն նորահայտ երկու արձանագրություններ, ՊԲՀ, № 3, էջ 274-276:

Երկրորդ՝ քիչ ավելի սեղմ տարբերակը Հանդիպում է Իշխանասարի օրինակում, որտեղ չկա տարեթիվը, իսկ ամբողջական, տիտղոսաշարը և հողաբաժանման փաստը տրրված են շրջված հաջորդականությամբ:

Երրորդ՝ ավելի սեղմ տարբերակը, հայտնի է Սևանի ավազանի օրինակներից: Սրանցում տրված է արքայի ծագումը և հողերը բաժանման բանաձևը: Սարուխանից հայտնաբերված արձանագրությունն էլ համարեց այս շարքը:

Սարուխանի արձանագրությունը բաղկացած է հինգ հիմնական տողերից<sup>3</sup>, որոնցում հեշտ տեսանելի են հետևյալ երկու տարրերը՝ արքայի անունն ու ծագումը և հողի բաժանման սեղմ բանաձևը.

- |     |           |     |                   |
|-----|-----------|-----|-------------------|
| (1) | ' RTHŠSY  | (1) | Արտաշես           |
| (2) | MLK BR ZY | (2) | արքան, որդին      |
| (3) | ZRYTR HLQ | (3) | Զարեհի բաժանեց    |
| (4) | ' RQ BYN  | (4) | հողը              |
| (5) | QRY (')   | (5) | գյուղ (եր) ի միջև |

<sup>3</sup> Արձանագրությունից անմիջապես վեր ու ներքև նշմարելի են երկու կամ երեք նշաններ: Սրանցից վերինը գրված է առաջին տողի յոթ նշաններից միջինի գլխավերևում ու որոշ վերապահությամբ նման է Š-ի կամ L-ի: Ներքևում էլ 5-րդ տողի վերջին նշանից Y-ից անմիջապես ներքև երևում է ուղղադիրժ ակոսիկ՝ հար և նման Z-ին, որին ձախից կպած է S նշանը: Թե ինչ են նշանակում տեքստը երկու կողմից գոտևորող հիշյալ հավելումները, դժվար է սպառիչ մեկնել այս համառոտ հաղորդման շրջանակներում:

Մյուս կողմից ուշագրավ է, որ հիշատակված վերևի նշանի (°) փորվածքը շատ սաղր է և հունի աղային նստվածք, Ստորին նշանի (°) փորվածքն ավելի խորն է քան վերոհիշյալինը և ունի աղային նստվածք. սակայն այդ փորվածքը սաղր է քան լուսն տեքստի նշաններինը և աղային նստվածքն էլ պակաս խորություն ունի: Այսինքն, սպալորությունն այնպիսին է, որ վերոհիշյալ նշաններն (°) ու տեքստը գրված են տարբեր ժամանակներում:

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| ՏԻՐԱՅՅԱՆ ՆՎԱՐԴ, Խալդի աստծո հիշատակու-<br>թյամբ արամեերեն մի արձանագրության<br>չուրջ.....  | 5  |
| ԱՇՈՏ փԼԻՊՈՍՅԱՆ, Վաղերկաթեղարյան երկու<br>դամբարան Արմավիրից.....   | 13 |
| ԹՈՒՄԱՆՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ, Գուսանազյուղի դամ-<br>բարանը հին հայկական մշակույթի սկզբնա-<br>վորման համատեքստում.....                         | 20 |
| ՀՄԱՅԱԿՅԱՆ ՍԻՄՈՆ, Ուրարտական մի «սահ-<br>մանաքարի» շուրջ.....   | 28 |
| ՓԱԼԱՆՋՅԱՆ ՌՈՒԶԱՆ, Աքեմենյան պետության<br>հիմնադրման շուրջ.....   | 32 |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԵՍ, Հին Արտաշատի տեղագրու-<br>թյան հարցի շուրջ.....   | 42 |
| ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ, Հին Հայաստանի սյունազարդ<br>դահլիճները և Հողմիկի տաճարական հա-<br>մալիրը.....                                       | 49 |
| ԶԱՐԴԱՐՅԱՆ ՄԿՐՏԻԶ, Հայոց թագի ձևավորման<br>խնդրի շուրջ.....   | 57 |
| ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ, Արտավազդ II-ի դիմա-<br>պատկերի պատկերագրական մի տարրի մա-<br>սին.....  | 66 |
| ՊՈՂՈՍՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ, Տարազի պատմությու-<br>նից. հայ-հունահռոմեական և հայ-պար-<br>թևական փոխառնչություններ.....                       | 73 |
| ԲԻՇԻՈՆԵ ՌԱՖԱԵԼԵ, ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ, ՀՄԱ-<br>ՅԱԿՅԱՆ ՍԻՄՈՆ, ՊԱՐՄԵՋԻԱՆԻ ՆԵԴԱ,<br>Արտաշես արքայի նորահայտ սահմանա-<br>քարը Սարուխանից..... | 79 |

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐՅԵՐ  
(նստաշրջանի զեկուցումներ)

ВОПРОСЫ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ  
ДРЕВНЕЙ АРМЕНИИ  
(доклады сессии)

Համակարգչային շարվածքը և տպագրությունը կատարվել է  
Հնագիտության և ազգագրության ինստիտուտում

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0066274

